

4650

235X
235

891.71 092
7-90L

2011

12003

ԹԵՎԱԿԻ ՀԱՅՈՅ ՀՐԱՄԱՐԿԱՎՈԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

№ 162

ԱՅԻ ՍՈՍ ԳՐԱԽՈՒՔՆԵՐ

ԵՏ. ԼԻՍԻՑԵԱՆՑ

ՊՈՒՇԿԻՆ

ԹԵՎԱԿԻ

Տպարան Մ. Դ. Պոտիանցի

Տպոգրաֆիա Մ. Դ. Պոտիանց, Գոլ. պր., ձ. № 41

1899



ЗУУР АНН. ССР

СССР



Արման

Թիվ 1 Տարբա ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

891.71.092

№ 162

Դ-902

ԿԵՆՍԱ ԳՐՈՒԹԻՒՆԵՐ

Այս.

ԱՅ. ՀԻՄԻՑԵԱՆՑ

ՊՈՒՇԿԻՆ

ԵՐԱ ԿԵՎՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԱԽՆԵՈՒԹԻՒՆԸ

ԹԻՎ 1 ՏԱՐԲԱ

Տպագույք Մ. Դ. ՌՈՏԻՆԱՆՑԻ

Տիպոգրիա Մ. Դ. Ռոտինանց, Գոլ. պր., ձ. № 41.

1899

18203

ՀԱՅՈՒԹԻՒՆԻ ՎՐԱ ԱՐԵՎԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՀԱՅԱ ՀԱՅԱՀԱՅԱ ՀԱՅԱՀԱՅԱ

ՎՐԱ ԱՐԵՎԱԿԱՆ ՀԱՅԱՀԱՅԱ ՀԱՅԱՀԱՅԱ ՀԱՅԱՀԱՅԱ

Հազարութիւնն Ա. Ռուսաց կեանքի քաղաքական և հասարակական հոսանքները
XIX-րդ դարի սկզբում 1
Բ. - Ռուսաց գրականութիւնը XIX դ.
սկզբում 8

Բ Ա Վ Ե Ն Դ Ե Կ Ո Ւ Թ Ի Ւ Ե

Երեսնականութիւնն Ա. Ռուսաց կեանքի քաղաքական և հասարակական հոսանքները XIX-րդ դարի սկզբում	1
Բ. - Ռուսաց գրականութիւնը XIX դ. սկզբում	8
Գլուխ Ա. Պուշկինը տանը և լիկէոնում	17
» Բ. Պուշկինը Պետերբուրգում	37
» Գ. Պուշկինը Ռուսաստանի հարաւում	49
» Դ. Պուշկինը Միխայլովսկի գիւղում	71
» Ե. Թափառական կեանք	83
» Զ. Պուշկինը ամուսնացած	107
» Է. Պուշկինի գրական գործունէութեան նշանակութիւնը	130



167854 g

- А. С. Пушкинъ.—Сочиненія, биография. Лит. Фондъ-ի
1887.
- Պուշկինի կենացրութիւններ, կադուած
Стоянинъ-ի (1881), Сабачевскій-ի (1897) և
Кирличниковъ-ի (1898)ձեռքով:*
- Анненковъ П. В.—Материалы для биографии и
оцѣки произведений Пушкина. 1873.
- Анненковъ П. В.—Общественные идеалы Пуш-
кина. (Собр. соч. т. I).
- Пыпинъ А. Н.—Общественное движение въ Россіи
при Александрѣ I. 1885.
- Пыпинъ А. Н.—Начало девятнадцатаго вѣка. „В.
Евр.“ 1895.
- Пыпинъ А. Н.—А. С. Пушкинъ. „В. Евр.“ 1895.
- Яковлевъ.—Значеніе нашего края въ жизни и
дѣятельности Пушкина. 1887.
- Քաջի Եվлинскій-ի և Պисаревъ-ի հանրածանօթ
քննադատական յօդուածներից:*
- Зелинскій В.—Русская критическая литература
о произведенияхъ Пушкина, ч. I—IV, 1887—1897.
- Кирличниковъ А.—Пушкинъ, какъ европейскій
поэтъ. 1887.
- Ивановъ И. В.—Исторія русской критики. „Міръ
Божъ“, 1897.
- Тургеневъ И. С.—Рѣчь о Пушкинѣ.
- Гоголь Н. В.—Нѣсколько словъ о Пушкинѣ.
- Вѣнокъ На памятникъ Пушкина, 1880.
- Волконскій С. Кн.—Очерки русской исторіи и
русской литературы. 1897.
- Спасовичъ В. Д.—Рѣчь о Пушкинѣ; Пушкинъ
и Мицкевичъ у памятника Петра В.; Байронизмъ у Пушкина.
(Сочиненія т. I, II, 1889).
- Сабачевскій А. М.—Сочиненія т. I.
- Сабачевскій А. М.—Исторія новѣйшей рус-
ской литературы 1893, և ալին:

ՆԵՐԱԺՈՒԹԻՒՆ

Ա.

ԽԱԿԱՆԱՅ ԿԵՐՆԵՐԻ ԳՈՂԵՔԵԿՆԵՐԻ ԵՒ ՀԱՄԱՅՆՎԱԿՆԵՐ-
ԵՐԵՐ ԽԻ-ԲԻ ԴԱՐԲ ՄԿՐՅՈՒՄ

Ալէքսանդր Ա-ի գահակալութիւնը; Նրա լոլուներն ու կըր-
թական գործունէութիւնը; 12-րդ տարին: Ծուսաստանը,
Երոպայի պատարարութիւնը, Պատերազմից վերաբաժող երի-
տասարդութիւնը; Փոփոխութիւն Ալէքսանդր Ա-ի հայեցք-
ների մէջ՝ «Բարօրութեան դաշն»: «Հայրեր և որդիք»:

XIX-րդ դարը սկսուեց Ծուսաստանում նոր
թագաւորութեամբ. 1801 թ. մարտի 12-ին գահ
քարձրացաւ Ալէքսանդր Ա: Գրական գործիչ-
ներն ու հասարակութեան թէ հին և թէ նոր սե-
րունդների լաւագուն ներկայացուցիչները վառ լու-
սերով ընդունեցին այս գահակալութիւնը: Ար-
դարե, անմիջապէս նախորդող տարիներում հալա-
ծանքի էր ենթարկուել այն ամենը, ինչոր ըն-
դունակ էր ազատ մտածելու կամ գործելու, և
սաստիկ երկիւղ էր ընկել գրական և հասարակական
շրջաններում: Ոյժմ նրանք ազատ չունչ քաշեցին:
Նոր կալսը մեծացած էր հասարակապետա-

կան գաղափարների և քաղաքական ազատութեան ջերմ կողմնակից՝ շվեյցարացի Լազարափի ղեկավարութեան տակ և ոգեսուած էր մարդասիրական զգացմունքներով ու ազատամիտ գաղափարներով, որոնք սակայն ընդհանրապէս անորոշ էին: Ալէքսանդր Ա. իսկոյն վերազարձրեց նախորդ թագաւորութեանց ժամանակ աքսորուած գործիչներին, վերացրեց բոլոր սահմանափակող կարգադրութիւնները, թուլացրեց զբաքննութիւնը, աշխատեց մեղմացնել ճորտութիւնը: Այս քայլերը մեծ համակրանքով էին ընդունւում հասարակութեան առաջարքմ մասից, որի մէջ, չնաիելով ԽVIII-րդ դարի վերջին տասնամեակի ճնշումներին՝ աննկատելի կերպով կուտակուել էին նոր հայեացքներ և քընական մտքի պահանջներ: Ֆէոլալական Եւրոպակի և լուսաւորեալ միահեծանութեան սիստեմի անկումը 1789 թ. էեղափոխութեան շնորհիւ ազգել էր և ուսւ մտածող դասի վրա:

Ապագակ դրական և հասարակական շարժումների համար մեծ նշանակութիւն ունեցան նոր թագաւորութեան մանաւանդ կրթական կարգադրութիւնները: Բացուեցին բազմաթիւ ծխական, դաւառական և նահանգական դպրոցներ և գիմնազիոններ: Խարկօվում, Պազանում, Վիլնոյում և Գորլապում հիմնուեցին համալսարաններ: Այս ուսումնարաններից բուրս եկան բոլոր այն գործիչները, որոնք եղան Պուչկինի առաջին ընկերներն

ու ընթերցողները և ահագին զարկ տուին ուսաց մտքի զարգացմանը:

Վերանորոգիչ գործունէութիւնը ընդհատուելի Նապոլէոնի արշաւանքով: 1812 թուականին ֆրանսիացիք ղաշնակիցների հետ անցան ռուսաց սահմանները: Ալէքսանդր Ա.-ի զինուորների թիւը երեք անգամ քիչ էր, բայց ամսեղ ոտքի կանոնեց ամբողջ ժողովուրդը: Նա աւելի քան 300 հազար կամաւորներ զինեց և նուիրեց մօտ 100 միլիոն բուրդի: Նոր պատմութեան մէջ դեռ երբէք ռուս ազգը ամբողջովին ալսպէս չէր եղել ընզպըրկուած մի հզօր զգացմունքով, երբէք նրա բարոյական և ֆիզիքական ուժերը՝ աւապէս լարուած, և ազգալին գիտակցութիւնը՝ ալսպէս խորը շօշափուած: Բոլոր զասակարգերը միացան թշնամու դէմ:

12-րդ թուականի ռուսական «Հայքենական» պատերազմի շարունակութիւնն էր Ազատարար պատերազմը: Ալէքսանդր կայսրը, քշելով Նապոլէոնին իւր երկրից՝ անցաւ սահմանը, միացրեց բոլոր պետութիւնները ֆրանսիացոց դէմ, մի շարք ճակատամարտներից լետոր՝ ղաշնակիցների հետ առաւ Պարիզը և գահընկեց արեց Նապոլէոնին: Ուստաստանը հանդիսանում էր ամբողջ Եւրոպակի ազատարարը Նապոլէոնի բունութիւնից: Նրա կամըրը խաղաղութեան և արդարութեան ոկրտնքների կրիչ էր և խաղում էր առաջին զերը միշաղգալին ինդիրներում: Այս իրողութիւնները ըն-

զունակ էին ոչ միայն շլացնելու ռուս ժողովրդի,
մանաւանդ կրթուած զասի երեակաբութիւնը.
սրանց ազգեցութիւնը աւելի մեծ էր:

Սահմանն անցած ռուս զօրքի մէջ կափն
քաղմաթիւ երիտասարդներ, որոնք վկայ և մա-
սնակից եղան այն պատմական փոփոխութեանը,
որով նախապատրաստում էր եւրոպական կեանքի
վերանորոգութիւնը աղատամիտ սկզբունքների
հիման վրայ: Նրանք վարակուեցին ազգերի և ան-
ձնաւորութեան աղատութեան անորդներով, յափշ-
տակւեցին ժամանակակից զրականութեամբ և
ծանօթացան այն զազանի ընկերութիւնների հետ,
որոնք առաջ բերին, օրինակ Գերմանիակում, աղ-
գակին անկախութիւն և մտաւոր առաջադիմո-
թիւն: Այս զինուորականների երեակալութիւնը
ակամակ տեղափոխում էր իրանց հալրենիքը և
ապշում էր այն տարբերութիւնից, որ կար այն-
տեղի իրականութեան և այն իդէալի մէջ՝ որ իրանց
մէջ կաղմուել էր եւրոպական կեանքի ազգեցու-
թեան տակ: Երբ նրանք վերադարձան Ռուսա-
տան՝ այնտեղ էլ գտան իրանց նման մտածող մար-
դիկ և կաղմեցին նրանց հետ հասարակութեան մի
առանձին շերտ, որ շուտով իւր վրայ սկսեց զար-
գել պահպանողականների ուշադրութիւնը: Նրան-
ցից մէկը մտաւ զատաստանական ծառակութեան
մէջ, միւսը հեռացաւ զիւղ, ուր կարդում էր զըր-
քեր և սովորեցնում գիւղացիներին: իսկ ով որ

մնում էր մալրաքաղաքում՝ ծաղրում էր հներին և
ազատ մտքի թշնամիներին:

Բայց երիտասարդութեան հէնց ալս յափշտա-
կուած ժամանակ սկսեցին փոփոխուել Ալէքսանդր
Ա.ի աշխարհականողութիւնն ու քաղաքականու-
թիւնը: 12-րդ թուականի ծանր աղէաների և հոգե-
կան փորձութիւնների միջոցին՝ նա նեցուկ էր
որոնում կրօնական զգացմունքի մէջ: Նապոլէոնին
հալածելուց յետոյ կայսեր մէջ զարգացաւ հաւատը
դէպի Աստուածալին նախախնամութիւնը և այն
համոզմունքը, որ ռուս ազգին է վիճակուած Եւ-
րոպակում խաղաղութիւն հաստատելու ծանր պար-
ականութիւնը: 1815 թուին տեղի ունեցաւ Վիէն-
նայի վեհաժողովը, և շուտով Ռուսաստանի, Աւ-
ստրիայի և Պրուսիայի պետերը կռւեցին ճշուիրա-
կան զաշնակցութիւնն: որի նպատակն էր՝ հիմնել
միջազգական լարաբերութիւնները եղբայրական
սիրու ու աւետարանական պատուիրանների վրայ:
Այնուհետև Ալէքսանդրի մէջ աւելի ու աւելի էին
նկատում բարեպաշտական ոգին և մելամաղո-
տութիւնը: Ռուսաց կեանքի մէջ զլուխ բարձրա-
ցին այն տարբերը, որոնք առաջ էլ աղատամը-
տութեան հակառակ էին և անուանում էին կայ-
սեր առաջին քաղերը՝ յեղափոխական, հակաղ-
գալին, իսկ նրա անզլիասէր և ֆրանսիասէր բա-
րեկամներին՝ զաւաճան, պակորեանն: Շուտով Նուի-
րական զաշնակցութիւնը ամեն տեղ զառաւ պահ-

պանողական մտքերի և միահեծանութեան պատռար: Եւրոպակում ծաղած այս լետադիմական ռէակցիան արձագանդ դուսաւ և ոռուսաց կառավարող շրջանների մէջ: Անհրաժեշտ էր համարուում միջոցներ ձեռք առնել քաղաքական ազատամութեան դէմ, խստացնել դրաքնութիւնը, սահմանափակել համալսարանների գործունէութիւնը: Ակսուեց նոր հոսանք: Պահպանողականութիւնը պատրաստի հող էր գտնում հասարակութեան տըգէտ մեծամասնութեան և մանաւանդ հին դարի մարդկանց մէջ: Ճնշումները սաստկացան՝ երբ կարսը իմացաւ, որ երկրի մէջ կազմուել են դաշտնի ընկերութիւններ: Կառավարութեան գլուխ անցաւ խիստ և կասկածու Արակչերը, որ ոչ մի օտար լեզու չգիտէր և ոչ մի գիրք չէր կարդացել: Խոկ լուսաւորութեան մինիստր եղաւ «ազգասէր» Շնչկովը: Երիտասարդներին թույլ չտրուեց գնալ միքանի գերմանական համալսարաններ, ընկերութիւնները արգելուեցին: Սակայն վերջիններս շարունակեցին իրանց գործութիւնը: Երբ իշխանութիւնը սկսեց հալածել այն ամենը, ինչ որ ըստ երեսութիւնի կատ ուներ ֆրանսիական լեզափոխութեան սկզբունքների հետ՝ ժողովները դառն գաղտնի: Նրանց մէջ ամենանշանաւորն էր «Բարորութեան դաշն», որտեղից դուրս եկան դեկաբրիտանների մեծ մասը:

Նոր մարդկանց երեալը նախ և առաջ դար-

ցուեց բարոյական և գրական խնդիրների մշակման մէջ: Այս ժամանակ ամեն տեղ սկսուեցին հների և նորերի մէջ վէճեր՝ ազնուականութեան, նորութեան, պետական ծառավորութեան, մարդկալին արժանաւորութեան, ամուսնական կապերի, ընկերական լարաքերութիւնների, բանաստեղծութեան և այլ այս տեսակ հարցերի մասին: Հասարակութեան մէջ առաջ եկաւ այն մեծ պառակտումը, որ շարունակում է մինչեւ օրս էլ և ոռուսաց կեանքի բնորոշչի երեսութիւն է: Տուրքենները վերջը սերունդների այս կուիը անուանեց «հայրերի և որդոց» կուիւ: Այժմ նոր սերունդը առաջ էր գալիս իւր ձգառումների մի որոշ ծրագրով: Ուզիղ է, գաղանի ընկերութեան անգամները սխալ ընթացք տուին այս ձգառումներին: Բայց ընդհանրապէս այս սերունդը առաջինն էր, որ մի կողմ նետեց կեանքի հնացած աւանդները և իւր համար նոր նպատակներ դրեց: Այս կուսակցութիւնների աշխարհական ցողութեանց արմատական տարբերութիւնը պարզուեց մանաւանդ՝ երբ հարկ եղաւ կարծիք լաւոնելու գրական այն շարժման մասին, որ սկսուել էր Ոռուսաստանում XIX-րդ դարի սկզբում:

Բ.

ԹՈՒՍԸՑ ԳՐԵԿԵՆՈՒԹԻՒՆԻ ԽIX ԴՅԲԻ ՍԿԶԲԱԼԻՑ

XVIII դ. ռուսաց գրականութեան բնաւորութիւնը: Գերժամին, կարամզին, ժուկովսկի և Բատիշկովի „Եօսէճա“ և „Արգամաս“: Գրականութիւն ու ժողովուրդ:

Մինչև Պետրոս Մեծը Ռուսաստանը ունէր գրականութիւն, բայց ոչ բանասեղծութիւն: Միայն այս ճանձարեղ կայսեր վերանորոգութիւններից լետոյ, եւրոպական քաղաքակիրթ կեանքը ուրիշ ազգեցութիւնների հետ, սկսեց մանել և բանաստեղծութիւնը, որը ոչ թէ արտանկարում է իրական կեանքը, այլ հնարում է, ստեղծագործում է: Ռուս գործիչները Լոմոնոսովից սկսած կամեցան, որ Ռուսաստանը, ուրիշ ազգերի պէս, ունենալ ե' իւր գիտութիւնը, ե' իւր բանաստեղծութիւնը, և աշխատեցին շտապով իւրացնել այն ինչ որ գտնում էին ժամանակակից Եւրոպայում: Այնուհետեւ ամբողջ XVIII դ. ռուսաց գրականութեան բնաւորութիւնն էր՝ կախումն եւրոպական գրականութիւնից, որից վոխ էին առնում ոչ միայն ուղղութիւնները, այլ և պատկերները: Բայց այս իւրացումը միշտ լինում էր ուշացած և միակողմանի: Նոր ուղղութիւնը մտնում էր Ռուսաստան այն ժամանակի, երբ Արևմուտքում նա ար-

դէն մօտենում էր անկման, և ճանապարհին կորցնում էր իւր գաղափարական բովանդակութիւնը: անցնում էին գրական ձեռքը, իսկ նրանց պարունակած մտքերը անհասկանալի էին մնում ուստի հեղինակների համար: Այս բացատրում է նրանվ, որ ուստի զրոյները առհասարակ շատ թերի կրթութիւն էին ստանում:

XIX դ. սկզբում, երբ սկսեց սովորել Պուշկինը՝ զեռ կենդանի էին բոլոր այն գրական ուղղութիւնների ներկայացուցիչները, որոնք մտել էին XVIII զարում: Հասարակութեան մէջ զեռ ապրում էր կիղծ-դասական ճաշակը, որը Լոմոնոսովից լետոյ աւելի քան լիսուն տարի մենակ իշխում էր ուստաց զրականութեան մէջ: Դերժաւինը, կառարինէ Մեծի այս երգիչը, շարունակում էր երգել թագաւորների և մեծամեծների փառքը, արքունիքի փալը, զօրքերի լաղթութիւնները, հալատակելով իւր հզօր երեակալութիւնը կանխակալ տեսութեան ճնշիչ կանոններին: Այս դպրոցի հեղինակները հեղեղում էին գրականութիւնը փքուած, հոետորական ստեղծագործութիւններով, ուր ճշշմարիտ ոգևորութեան տեղ երնում էր սառն բանականութիւն: Դրանք դիտմամբ հեռանում էին իրականութիւնից, լցնում էին իրանց գրուածքները լոյն և լատին հեթանոսական աստուածների և գիւցազունների անուններով և ուստերէն լեզուն համեմում էին բազմաթիւ ուստոնաբանութիւննե-

բով, ամեն կերպ խոլս տալով բուն ժողովրդական բառերից: Նրանց համար գրականութիւնը ոչ թէ կեանքի էական պահանջ էր, այլ «լիմոնադ», առանց որին էլ կարելի է ապրել: Այս պատճառով ստեղծագործութիւնը նրանց համար պարապ ժամանակի զբաղմունք էր և աշխարհիս հզօրներին շաղոքորթելու միջոց, որով իրանք կարողանում էին բարձրանալ պետական պաշտօնների մէջ:

Բայց ընթերցողների մի ստուար բազմութիւն արդէն աւելի յափշտակւում էր սանտիմենտալ՝ գրուածքներով: Կարամզինը նոր էր փակուել իւր Ռուսաց պետութեան պատմութիւնը» գրելու, Նրա վէպերը զեռ ևս ամենախն հիացմունքով կարդացում էին, մանաւանդ կանանց կողմից: Այստեղ ներկայացրած էին ոչ թէ մեծ մարդկանց սխրացործութիւնները, այլ հասարակ մահկանացուների զգացմունքները: Ուղիղ է, սանտիմենտալ՝ գրուածքների հոփուուհիք խօսում էին իրանց սիրու մասին կրթուած աղնուական օրիորդի լեզուով, զգացմունքները նկարագրում էին չափանցացրած և կեղծ զծերով, առանց ի նկատառնելու հասակների, կրթութեան, դասակարգերի տարբերութիւնները: այնու ամենախնիւ սովորական ընթերցողը այստեղ գտնում էր իւր կեանքին մօտիկ աշխարհ: Բայց կեղծ դասականութեան պէս՝ այս ուղղութիւնն էլ ծալքալեզութիւն էր: Արհեստական կերպով զարգացնելով հասարակու-

թեան մէջ զգայունութիւն՝ աս լարում էր նեարդերը և բորբոքում երեակալութիւնը, որը ապրում էր շինծու զգացմունքներով ու երեսը չուռ էր տալիս իրականութիւնից: Սանտիմենտալիսմը չմօտեցրեց կրթուած դասակարգը ժողովրդին:

Հէնց XIX դարի սկզբում երեաց ժուկովսկին, որ մանուկ ոսմանտիսմը մտցրեց ուսուաց գրականութեան մէջ: Խնչպէս յալոնի է՝ այս ուղղութիւնը ծագեց Գերմանիայում և սանտիմենտալիսմի պէս հակադրութիւն էր կեղծ-դասականութեանը: Սա ոգեսրում էր ոչ թէ կլասիկ հեթանոս ստեղծագործութիւններով, այլ միջին դարերի բանաստեղծութեամբ, ուր տիրապետում էր պարզութեան հետ քրիստոնէական աշխարհակացողութիւնը: Այս դպրոցի լաւագոյն ներկայացուցիչները Եւրոպակում բանաստեղծութիւնից պահանջում էին ազատ ոգեսրութիւն և ազգայնութիւն: Բայց Ժուկովսկին, համաձայն իւր անձնական հակումներին, այս ուղղութիւնից իւրացրեց միան անորոշ ձգտում դէպի իդէալականը և մելամազգութիւնը: Նա հաւատում էր այս և հանդերձեալ աշխարհների հաղորդակցութեանը, սիրու լաւիտենականութեանը և մերձաւոր հոգիների անջինջ կապերին և միաւորմանը, գոնէ միւս աշխարհում: Թէև նա լցրեց իւր ստանաւորները սատանաներով, կախարդներով, ագռաւներով, բուերով, մշուշապատ պատկերներով, գերեզմանատան ձայներով և այն՝ բայց

նրա բանաստեղծութիւնը, իւր ամբողջութեամբ, սլանում էր դեպի գեհը, գեղեցիկը և անդաւա հեռուն: Ժուկովսկին կամենում էր երկիրը բարձրացնել դեպի երկինքը, ոչ թէ երկինքը իշեցնել դեպի երկիրը: Ասեմ էր մանաւանդ նրա հայեացքը բանաստեղծութեան վրայ Բանաստեղծութիւնը աստուածացին պարզե է, «Երկնալին կրօնի երկրացին քոլո», նա «Աստուած է երկրի սուրբ անորջների մէջ», նա առաքինութիւն է:

Ժուկովսկու ոռմանտիսմի միակողմանիութիւնը լրացնում էր նոյն դպրոցի: մի ուրիշ հետեւողը, Բատուշկովը, որ նոյնպէս գրում էր՝ հպատակուելով միայն իւր ոգևորութեան կանոններին: Սրա մէջ չկան միջնադարեան երևակալութեան պատկերներ, ընդհակառակը, սա որոնում էր իրական գծեր: Բատիչկովի ոկզբունքն էր, «Գրիր՝ ինչպէս ապրում ես», այս պատճառով նրա բանաստեղծութիւնը ունէր «իրականութեան հրապուրիչ գեղեցիութիւն»: Նա ուրախ հայեացքով էր նախում կեանքին, և նրա ոտանաւորների մէջ լսում են անվիշտ և աղատ կենցաղի հոգսեր:

Բոլոր ալս բանաստեղծները իրանց պատկերները, մտքերը վերցնում էին օտար գրականութիւններից: Ժուկովսկին աւելի լաւ թարգմանիչ էր՝ բան թէ ինքնուրուն բանաստեղծ, Բատիչկովի «մուսան շրջում էր օտար երկնքի տակ և ոչ մի ծաղիկ չէ քաղել ոռւսաց հողից»: Բայց ինչպէս կա-

րամզինը մշակեց ոռւսաց արձակ լեզուն՝ այնպէս և սրանք մշակեցին ոռւսաց ոտանաւորը. Բատիչկովը ստեղծեղ «թեթև բանաստեղծութիւն»: Ժուկովսկին անգամ չունէր նրա պէս նուրբ ձեւերի ձաշակի:

«Զայքերի և որդոց» կոխը ոռւսաց կեանքի մէջ արծարծուեց նախ և առաջ զրական և մանաւանդ լեզուական խնդիրների շրջանում: Կարամզինը լեզափոխութիւն արեց ոռւսաց լեզուի մէջ: Նա աշխատեց մօտեցնել զրական լեզուն խօսակցականին, չէր խոնսափում օտար բառերից՝ եթէ համապատասխանները չէր գտնում ոռւսերէնի մէջ. հնարում էր նոր բառեր հին արմատներից, խոյս էր տալիս ոլաւոնաբանութիւններից և իւր պարբերութիւնները կազմում էր մոռքի ընթացքի համեմատ: Այս բոլորը գրգռեց Լոմոնոսովի և Դերժավինի ոճի պաշտպաններին, մանաւանդ Շիշկովին: Սա, թէև լաւ չգիտէր ոլաւոններէնը՝ փորձեց գեռ ինքը ընդդիմաղրել օտար և ոամկական բառերի գործածութեանը, առաջարկելով սլաւոնական լեզուից փոխ առնել բառեր կամ նրա արմատներից օգտուել, իսկ լետով հիմնեց Դերժավինի հետ մի պաշտօնական ընկերութիւն—» Այս են լուսնութեան բառերը:

թեան, զրպարտութեան... Շիշկովականների դէմ
դուրս եկան Կարամզինականները և կազմեցին (այս-
տեղ կալին և Ժուկովսկին, Բատիւչկովը) մասնա-
ւոր «Արգամաս» ընկերական շրջանը, որի զէնքն
էր՝ սրամտութիւնն ու երգիծաբանութիւնը: Այսակը
մի առ մի քննուում էին և ծաղրի էին ենթարկ-
ուում հակառակորդ բանակի տափակամիտ դար-
ձուածքները, իստադէմ ճաշակը: Այս կուսակցու-
թիւնների գաղափարները տարբեր էին և՝ քաղա-
քական և՝ հասարակական խնդիրների մասին: 1812
թ. պատերազմի ժամանակ Շիշկովը բացար-
ձակ կերպով հրատարակեց, որ նոր հեղինակներն
են մեղաւոր Նապոլէոնի արշաւանքի և Մոսկուակի
հրդեհի մէջ: Նրա ընկերները պարսաւում էին Պե-
տրոս Մհեծի գործունէութիւնը և գովարանում էին
էին Ռուսաստանը, ուր գտնում էին և՛ իսկական
ազգային ոգի, և՛ սերտ միութիւն ժողովրդի բալոր
խաւերի մէջ: Վերջը եւրոպական ազգեցութեան
այս հակառակորդներից առաջացաւ սլաւոնակը
կուսակցութիւն: Խոկ արգամասցինները չէին ոգե-
ւորում Ռուսաստանի նախավետրոսեան շրջանով,
միայն XVIII դարն էին համարում լուսաւորու-
թեան դար և հասաւատ լուսերով էին նայում արե-
մտեան գիտութեան, որի օգնութեամբ, հաւատա-
ցած էին, թէ կարելի կլինի վերացնել ուստաց
կեանքի անկարգութիւնները: Բայց ընդհանրապէս՝
այս արևմտականներն (չապահով) իրանց հակա-

ռակորդների պէս աւելի քիչ էին զբաղուած քա-
ղաքական, քան թէ գրական խնդիրներով, և «Ար-
զամաս»-ը ցրուեց՝ հէնց որ անդամներից մի քանիսը
փորձեցին ուրիշ ուղղութիւն տալ նրա ժողովներին:

Պուշկինը ասպարեզ դուրս եկաւ հէնց այս
կուսակցութիւնների ժամանակ և դեռ աշակերտ՝ մասնակ-
կութիւնների միանց մաքերի այս ընդհարումը տե-
ցեց սրանց: Սակայն մտքերի այս ընդհարումը տե-
ղի էր ունենում սահմանափակ շրջանում: Գրա-
կանութեամբ զբաղւում էին մի քանի աղջուա-
կաններ միայն: Ճշմարիտ է, արդէն կար ընթեր-
ցողների մի լայնի թիւ, որն արդէն սովոր էր
կարդալու, չնորհիւ մանաւանդ նովիկովի *) հրա-
տարակչական գործունէութեանը. բայց նրանք չու-
նէին քննադատական ոգի և զրեթէ հաւասար ա-
խորժանքով կարդում էին ամեն տեսակ զրքեր:
Դրականութիւնը ամեն կողմից բաց էր զաղունի
լարձակումների համար, որոնց գէմ ինքը չէր կա-
րող պաշտպանուել: Ժողովրդին լայնի չէին ոչ
նրա նոր ձեռքը, ոչ էլ նրա ձգտումները. նոյն-
իսկ գրական լեզուն նրա համար խորթ էր իւր-
արտավայտած մտքերով: Գլորիցներ չկալին, որոնք
կարողանալին ընդդարձակել ժողովրդի զաղափար-

*) Նովիկովը Կատարինէ Մհեծի օրով բաղմաթիւ-
տապարաններ հիմնեց, հաստատեց ընկերութիւն, որ գրա-
զուած էր թարգմանութիւններով և ինքնուրույն գրութիւն-
ներով, հրատարակեց ահազին քանակութեամբ զրքեր,
կըթեց Մոսկովյում մի ամբողջ սերունդ իւր մարդասէր
զաղափարներով: Նրա շրջանից դուրս եկան Կարամզինը,
Ա. Տուրգենևը, Ժուկովսկին և ուրիշ զործիչներ:

Ները: Խւր կողմից՝ գրականութիւնն էլ չը հետաքըր-
քրում ժողովրդով և այսպիսով կտրուած էր մնում
նրանից: Այս չարիքը վերացնելու համար պէտք էր
մի կողմից՝ ժողովուրդը բարձրացնել ուսման միջո-
ցով մինչև գրականութիւնը, միւս կողմից՝ գրակա-
նութեանը տալ ժողովրդական բովանդակութիւն:
Վերջին գործում մեծ դեր խաղաց Պուշկինը:

Սա օգտուեց այն ամենից, ինչ որ արդէն
ձևոք էր բերել ուսւաց գրականութիւնը նա-
խորդների չանքերով. արդէն որոշ մշակում էր
սահցել թէ արձակ և թէ ոտանաւոր լեզուն, քըն-
նութեան էին ենթարկուել գրական մի քանի
կարեոր հարցեր, զարթել էր հասարակական միա-
քը, բանաստեղծութիւնը փորձեր էր անում ծառե-
նալու իրականութեան: Պուշկինը վերջ դրեց այս
նախապատրաստական շրջանին և այսպիսի զարկ
տուեց ուսւաց բանաստեղծութեանը, որ ժամանա-
կակիցները պնդում էին, թէ նրանից էր խկա-
պէս սկիզբ տռնում ուսւաց նոր գրականութիւնը:
Նրա առաջին ստեղծագործութիւնները լոյս տե-
սան այն ժամանակ, երբ Ալեքսանդր Ա-ի հայեցք-
ները սկսել էին հիմովին փոփոխուել, մինչդեռ
հասարակութիւնը, ընդհակառակը, կրկնապատիկ
աշխոյժով էր ձգտում քննադատելու շրջապատող
իրականութիւնը: Այս պայմաններով են բացատր-
ում Պուշկինի կեանքի և գործունէութեան բազ-
մաթիւ կողմերը:

Ա.

ՊՈՒՇԿԻՆԸ ՏԵՂԵ ԵՒ ԼԻԿԵՄՆԱԲԻՄ

1799—1811—1817

Պուշկինի ծագումը Հայրն ու մայրը, Պուշկին մինչև եօթը
առարեկան հասակը և լեռողի Տաղանդի առաջին նշոյները:
Ակելան մտնելը, Պուշկինը իբրև ուսանող և ընկեր Գրա-
կան պարապմոնքները Առաջին սկրի Հասարակական և
կրօնական խնդիրները Կապեր գրական գործիչների հետ
կրօնական խնդիրները Կապեր գրական գործիչների հետ
ապահովութիւնը, Օւսման աւարտն ու ապագայ
ապահովութիւնը:

Ուղեղ հարիւր տարի մեզանից առաջ, 1799 թ.
մայիսի 26-ին, Մոսկուալուս, Նեմեցիական փողոցում
ծնուեց Ալեքսանդր Արքէեւիչ Պուշկինը: Հօր կող-
մից նա ծագում էր հին աղնուական տոհմից, որը
XIII-րդ դարից շարունակ լիշտում է ուսւ պատմու-
թեան մէջ, իսկ մօր կողմից՝ «Պետրոս Մեծի արագ»
իրաշիմ Հաննիբալից:

Բանաստեղծի հայրը, Սերգէ Լուսինը, ստա-
նալով իւր ժամանակի համար փայլուն կրթութիւն՝
կատար ելապէս տիրապետում էր Գրանսերէն թէ
արձակ և թէ ոտանաւոր լեզուին, և կլանելով
Գրանսիական XVII և XVIII դարի գրեթէ ամբողջ

2

16 78-54



գրականութիւնը՝ իւր ամբողջ կեանքում պահպանեց սէր դէպի թեթև մտաւոր զբաղմունքներն ու սրախօսութիւնները, իսկ գործնական կեանքի մէջ միշտ մնաց անընդունակ: Նա չէր սիրում զբաղուել ընտանիքի կամ տնտեսութեան վերաբերեալ լուրջ գործերով և ամենը թողնելով իւր կնոջ հոգատարութեանը՝ գերազառում էր մալրաքաղաքի ցլուած կեանքի զուարձութիւնները, նրա կինը, Նադեժդա Օսիպովնա Հաննիբալը, իւր երակների մէջ ունէր աֆրիկական «տաք» արիւն, Նրա պապը «արապ» իբրահիմ Հաննիբալն էր, որին ոռւսաց դիսպանը գողացել էր Կ. Պոլսի հարեմից և նուէր ուղարկել Պետրոսին: Սա լետոյ ուսում ստանալով Պարիզում բարձր պաշտօնների հասաւ: Հաննիբալի որդիքը ժառանգեցին հօր դիւրագրգիւ բնաւորութիւնը, մանաւանդ բանաստեղծի պապ Յովսէփը, որը այնպիսի անզուսպ կրքերի և վարագ զուարձութեանց մարդ էր, որ եղաւ իւր ընտանիքի սարսափը՝ Յովսէփի ամուսին՝ Մարիա Ալեքսէէւնան բարի և խելօք կին էր և հիանալի տանտիկին, բայց սաստիկ երես առեց իւր Նադեժդա միակ աղջկան, որի մէջ ժամանակով զարգացան դիւրաբորտք, լամառ բնաւորութիւն և քմահաճ իշխանասիրութիւն: Այս գեղեցիկ կրէոլուհին դառաւ Սերգէյ Լուվիչի կին և շատ շուտով նրան իւր ձեռքն առաւ, այն աստիճան, որ ամուսինը մինչեւ ծերութեան հասակը ծխում էր նրանից ծածուկ: Երեխաների և

ժառաների հետ Նադեժդա Օսիպովնան չափաղանց խիստ էր և կարող էր ամիսներով աիքուել նրանց վրայ՝ որոնք նրա զժգոհութիւնն էին զրգուել: աւապէս Ալէքսանդր որդու հետ նա մօտ մէկ տարի չէր խօսում: Բայց տնակին գործերով նա էլ նոյնչափ քիչ էր պարապում՝ որչափ և ամուսինը, և նրա պէս սիրում էր հասարակութիւնն ու զուարձութիւնները:

Պուշկինների մէջ տաղանդը ժառանգական էր: Նրա հօրեղբայրը, Վասիլ Լովիչը, «Արզամասի» անդամ էր: և լայտնի էր որպէս «Ալտանգաւոր հարեան» երգիծաբանութեան հեղինակ: Նա իւր կեանքը անց կացրեց գրական շրջաններում և մեռաւ Բերանմէի գրքովը ձեռին: Նա գրում էր գըլխաւորապէս Փրանսերէն թեթև ոտանաւորներ: Երկու լղբալրներն էլ զանազան ժողովների, երեկովների և տնակին ներկայացումների անհրաժեշտ անդամներ էին—երկուսն էլ լաւ խաղում էին և ոտանաւոր կարգում: Սերգէյ Լուվիչն էլ գրում էր ոտանաւորներ—նրա տանը կամերդիններն էլ (ժառան) բանաստեղծ էր: Պուշկինների տունը միշտ լի էր ուռւս և օտարազգի հոչակաւոր մարդկանցով: Երիտասարդ Պուշկինը ճանաչում էր մարդենի գրականութեան կոթողներին ոչ միայն նրանց գրուածքներով, ալլև նրանց խօսքերով, որոնք շատ անգամ աւելի խորն են տպաւորում մանուկ մաքի մէջ: Մինչեւ եօթը տարեկան հասակը Ալէքսանդր

Պուշկինը իւր ծանրաշարժութեամբ, զիրութեամբ,
երկուութեամբ լուսահատեցնում էր մօրը, որը
այս պատճառով աւելի էր սիրում միւս որդոց —
0լ'զա աղջկան և Լե տղային։ Կրթութեան մէջ ոչ
մի սիստեմ չկար — միայն մի բանի մէջ բալոր տա-
նեցիք համաձայն էին, որ Ալեքսանդրի ընդունա-
կութիւնների և բնաւորութեան վրայ լուս դնել չէ
կարելի։ Այս հանգամանքը ունէր և իւր լաւ կողմը։
Մանկութիւնից երես առած չինելով աւելորդ կա-
մակատարութիւններով՝ նա վերջը հեշտութեամբ
տանում էր զրկանքներ և վաղ ընտելացաւ իւր
մէջ նեցուկ որոնելու մտքին։ Մայրը ստիպում էր
փոքրիկ Պուշկինն՝ վաղվղել և խաղալ հասակա-
կիցների հետ, դժուարութեամբ լաղթելով նրա ծու-
լութեանն ու անխօսութեանը։ Երբ սաստիկ եռան-
դով էին մկսում ուզզել երեխայի բնաւորութիւնը
և ձեռքը՝ նա փախչում էր իւր տատ Մարիա Ալեք-
սէինա Հաննիբալի սենեեկը, մտնում էր նրա զամ-
բիւղը և ախտեղից անթարթ նայում էր նրա աշ-
խատանքին։ Այս ապաստարանում նրան արդէն ոչ
ոք չէր անհանգստացնում։ Տատն եղաւ նրա ոռու-
սերէն լեզուի առաջին ուսուցիչը, սրանից նա
լսում էր անարուեստ, բայց կտրուկ ժողովրդական
լեզու, որով այս կինը պատմում էր իւր թոռնիկին
ընտանեկան աւանդութիւնները Հաննիբալների ու
Պուշկինների մասին։ Նրանից նա սովորեց և ոռու-
սերէն գրել — կարդալ։ Բայց աւելի կենդանի կապ

ապագայ բանաստեղծի և ժողովրդի մէջ՝ զակեակ
Արինա Ոտղինովնան էր, որ մի ժամանակ մեծացրել
էր նրա մօրը և ալժմ մեծացնում էր իւր ասնուհու
բոլոր որդոց։ Սա մի բարի, վերին աստիճանի խե-
լօք, երեխաներին պաշտով, բայց միշտ փնթիքն-
թող և իրան խիստ ձեացնող պառաւ էր, որին
բանաստեղծը մինչև վերջը, հասակն առած ժամա-
նակ, անվտիոխ սիրում էր։ Արինա Ոտղիո-
նովնան գիտէր ամբողջ ժողովրդական հեքիաթական
աշխարհը, նրա լեզուից անպակաս էին առածներ,
ասսցուածքներ։ Նրանից է Պուշկինը լսել իւր գիտե-
ցած ժողովրդական վէպերի և երգերի մեծ մասը։

Ուսումը վաղ սկսուեց, բայց Պուշկինը, երբ
մտնում էր դպրոց՝ մայրենի լեզուն շատ աւելի
վաս գիտէր Փրանսերէնից։ Ծնողները, հւրերը,
շրջապատզները — բոլորն էլ Փրանսերէն էին խօ-
սում, երեխաներն էլ իրար հետ նոյն լեզուով էին
խօսում։ Տանը Պուշկինը մի փոքր էլ անզիւրէն և
խտալէրէն սովորեց, իսկ գերմաներէն չգիտէր։ Բո-
լոր լուսը լինողութեան վրայ դրած՝ նա սովորում
էր զամերը՝ մինչ քրոջն էին հարցնում, և ոչինչ
չէր կարողանում պատասխանել։ Երբ հարցաքննու-
թիւնը իրանից էր սկսում. մանաւանդ գտուար էր
հառկանում թուարանութեան չորս կանոնները։

Եօթը տարեկան հասակում լանկարծ երեխան
վախուեց. նա զառաւ չարացձի, զուարթ ու լեզուա-
նի։ Օտարազգի գուգերներներն և ուսուցիչները

քիչ բան կարողացան սովորեցնել նրան, որովհետեւ
յաճախ էին փոփոխում և լաւ չէին լինում ընտրը-
ռաւած: Բարեբախտաբար՝ նա մի երկու տարուց
յափշտակուեց ընթերցանութեամբ, որը նրա մէջ
մի՛ ախտ դառաւ և չէր թողնում նրան ամբողջ
կեանքում: Նա սկսեց գրքեր վերցնել հօր գրադա-
րանից, որ լի էր XVII և XVIII դարի ֆրանսիական
գասական հեղինակութիւններով: Աերգէ Լուվիչը
ինքն էլ որդոց հետ կարդում էր ընտիր գրուածք-
ներ: Յաճախ փոքրիկ Պուշկինը գիշերներով ծլկում
էր հօր առանձնասենեակը և առանց ընտրութեան
կլանում էր ամենը՝ ինչ որ ձեռքն էր ընկնում:
11-տարեկան հասակում, հօրեղօր ասելով, նա,
իւր արտասովոր լիշողութեան շնորհիւ, արդէն
անգիր գիտէր գրեթէ ամբողջ ֆրանսիական գրա-
կանութիւնը: Կարդացած գրքերի մեծ մասը սիրու-
հարական և երգիծաբանական էին: Այս ընթեր-
ցանութիւնը նպաստեց նրա զգացմունքի և մտքի
վաղաժամ զարգացման, բայց միւս կողմէց՝ գրդեց
նրան փորձել իւր ոլժերը ստեղծագործութեան մէջ:

Հայրը գրում էր, հօրեղբարյը գրում էր, հիւ-
րերը խօսում էին մեծ մասամբ բանսասեղծու-
թեան մասին, երեխաներին անարգել թուլ եր
տրուում ներկայ գտնուել մեծերի խօսակցութեանց,
տանը սարքուում էին ներկայացումներ և զանա-
զան «հոգեղբար» խաղեր, որոնց մասնակցում էին
և երեխաները—և ահա 12-տարեկան Պուշկինը ինքն

էլ սկսում է իւր առաջին գրական փորձերը, ի
հարկէ՝ ֆրանսերէն,—կոմեդիաներ Մօլիերի ոգով:
Նա սիրում էր իւր կոմեդիաները լանգատրաստից
ասել, և շինել էր մի տեսակ թատրոն, ուր ինքը
հեղինակ էր և գերասան, իսկ քոյթը՝ հասարակու-
թիւն: Երբ նա ծանօթացաւ Լաֆոնտէնի հետ՝ նա
սկսեց գրել առակներ, կարդալով Վոլ'տէրի «Հէն-
րիադը» նա մտքում գրեց գրել վիպասանութիւն
վեց հազներգութիւններով (Le Toliade):

Վաղաժամ զարգացումը չհաշտեցրեց ծնողնե-
րին որդու հետ, նրանք ուղղակի սարսափում էին
նրա ապագայի համար, երբ տեսնում էին նրա
բուռն, կրքոտ բնութիւնը: Դիմում էին խրատնե-
րի, համոզումների, պահանջների, սպառնալիք-
ների, բարկանում էին, խիստ միջոցներ գործ
գնում—նա չէր ընկճում: Միակ լուսը՝ տանից հե-
ռացնելն էր և մի որեէ փակ դպրոց տալը:
Օգտուեցին այն հանգամանքից, որ հէնց այդ ժա-
մանակ Ցարսկոյէ Սելոյում հիմնուեց լիկէոն, որի
տեսուչ նշանակուած էր Վ. Մալինովսկին, Սերգէ-
շառվիչի բարեկամը: Նրա և Ա. Տուրգենևի (Նովի-
կովի շրջանի մարդ) ջանքերով ծնողները 12-տա-
րեկան Պուշկինին տուին լիկէոնը: Պուշկինը թո-
ղեց հայրական տունը առանց ափսոսանքի—տը-
խրութեամբ անջատուում էր նա միայն իւր քրոջից:
1811 թուի հոկտեմբերի 19-ին բացուեց լիկէոնը:
Ցարսկոյէ Սելո քաղաքը գտնուում է Պետեր-

բուրգից ոչ հեռու, Ալստեղ, ընդարձակ պուրակների մէջ, բնութիւնն ու գեղարուեստը միանում են հրաշալի կերպով: Եղիսաբեթ և Կատարինէ Բ կալվարուէիների հորակապ պալատները, զաշտակներ, լճեր, երկար ուղիղ և լայն ձևմելիքներ, արհեստական քարալրներ, տաղաւարներ, մարմարէ և պղնձէ արձաններ, չինական գիւղ թատրոնով, ջրվէժներ, — ամեն գեղեցկութիւն սփռել են ալստեղ և՛ բնութեան, և՛ պարտիզանի, և՛ ճարտարապետի, և՛ քանդակործի ձեռները: Ալստեղ Ալէքսանդր Ա. Հիմնեց լիկէո՞ն, ուր նա մտադիր էր կրթել հաստակակիցների շաղանում իւր եղբայրներին, Նիկողայոսին (վերջը կատոր) և Միքայէլին: Ալս միտքը մի առժամանակ գաղտնի պահելով՝ կալսրը հրովարտակի մէջ ասում էր միակն, որ այս դպրոցը պէտք է կրթէ ճշանաւոր ընտանիքներից ընտրած ամենաընդունակ աշակերտներին պետական ծառայութեան կարենոր մասերի համար: Ալս բացառիկ դիրքը, ի հարկէ, կարող էր միայն մեծամտութիւն ներշնչել աշակերտաներին, որոնցից լաւ ադրիները, մինչև անդամ լւատոյ, իրանց պահում էին հասարակութանակը:

Ծրագրի մէջ բացի հանրակրթական առարկաներից՝ մանում էին փիլիսոփական և հաստարական-իրաւաբանական գիտութիւնները: Աշակերտների թիւը սահմանափակուած էր 30-ով: ամեն մէկը ունէր իւր առանձին սենեակը, ուր օգ-

տւում էր լիակատար աղատութեամբ: Դասաւանդութեան մէջ սկզբունք էր դրուած՝ «ամեն մի ճըշմարտութիւն աշակերտներին այնպէս հաղորդել, որ արծարծէր մտքի ինքնապործութիւն և դիտութեան ծարւա»: Դասաւանդութեան մէծ մասամբ ընդունակ և լաւ պատրաստուած մարդիկը որոնք կրթուել էին Մօսկուակում Նովիկովի շըրջանի մարդկանց ձեռքի տակ: Բայց մասամբ աշակերտների անպատճաստութեան պատճառով, մասամբ էլ ընդհանուր համերաշխութեան բացակայութեան չնորհիւ, նրանք չարդարացրին իրանց վրայ դրած լուսերը, մեծ մասամբ թերան էին տնել տալիս իրանց թելազրած տետրերը կամ դասերին անհեկոտներով էին պարապում, նոյն-իսկ օգնում էին աշակերտներին խնջորքներ սարքելու Ընդհանուր սառնութիւնը նկատելի եղաւ մանաւանդ տեսուչ Վ. Մալինովսկու մահից իմաստ (1814), երբ պրօֆէսօրները երկու տարի հերթով տեսչութիւն էին անում և չարունակ իրար հետ խռոված էին: Վերջապէս տեսուչ կարգուեց Ե. Էնդել՛հարդտ հմտւած մանկավարժը (1816թ.): Ալս «անշշխանութեան» ժամանակ ուսանողների մէջ սկսուեցին խընջորքներ, ուր զինին վերջին աեղը չէր բռնում: Ուսուցիչ Փալիչը ինքը լինում էր չատ անդամ հնախագահ՝ թամադա: Միաժամանակ ուսանողները ծանօթացան և սիրապին զուարձութիւններին....:

Հասկանալի է, որ Պուշկինի գլխաւոր պա-

բապմունքը դասերը չէին, Աւարտման վկայականի մէջ նա միայն ոռուսաց ու ֆրանսիացոց գրականութիւնից և սուսերամարզութիւնից (փեխտօնից) ունէր «գերազանց», մնացած առարկաներից «լաւ» կամ միայն նկատողութիւն՝ «պարապել է»: Վարքից էլ թուանշան չունէր—նրա զիւրազգած և կենդանի բանաստեղծական բնաւորութիւնը ոչ մի կերպ չէր ենթարկում դպրոցական կարգապահութեան, Բայց թէև դպրոցը չտուեց բանաստեղծին և իւր ընկերներին հիմնաւոր գիտութիւն, անուամենայնիւ ներշնչեց նրանց սէր դէպի աշխատութիւն, ընդհանուր զարգացում և բազմաթիւ պարձառ, մարդասէր մտքեր: Ահա թէ ինչու նրանք յետոյ այնպէս ջերմ զգացմունքով և միահամուռերախաղիտութեամբ լիշում և տօնում էին հոկտեմբերի 19-ը—լիկէօնի բացման օրը:

Երբ սեամաղ, զանգրահեր, սուր նախուածքով, կէս արաբական տիպով՝ Պուշկինը մտաւ լիկէոն՝ նա գրաւեց ընկերների ուշադրութիւնը ոչ միայն իւր արտաքինով—նա աչքի էր ընկնում և իւր շատ կարդացած լինելով: Ակզբում ընկերների վերաբերմունքը նոյն-իսկ թշնամական էր, որովք կերպերիմունքը նոյն-իսկ թշնամական էր, որովհետև տեսնում էին նրա մտաւոր գերազանցութիւնը և նկատում, որ նա կարդացել է և վիշում է այնպիսի բաներ, որոնց մասին իրանք չէին էլ լսել, միւս կողմից, նրան չէին սիրում ինքնավատան, դիւրաբորբոք, հեղնող, կատաղի կերպով լանկարծ

բունկող բնաւորութեան և կծու ու սուր լեզուի համար: Ինքն էր լինում մեծ մասամբ ընդհարումների սկատճառը, և որովհետեւ իւր սրախօսութեամբ հանդերձ արագ հնարագիտութիւն չունէր, իսկուն պատասխանել չէր կարողանում՝ ուստի յաճախ յաղթողը լինքը չէր լինում: Շատ անգամ նա անքուն գիշերներ էր անց կացնում իւր № 14-ում, արտասուք թափելով և մեղադրելով թէ իրան, թէ ուրիշներին ու հնարելով միջոցներ իւր դրութիւնը ընկերների մէջ բարելաւելու համար: Շատ քչերը գիտէին նրա հաւատարիմ ու սիրող սիրտն ու համեստութիւնը, նա աշխատում էր առաջնութիւն ձեռք բերել ոչ թէ գիտութիւնների, այլ ամեն տեսակ չարաձճի խաղերի մէջ: Կամաց-կամաց միայն նա դառաւ դասարանի հոգին, իսկ վերջը ամբողջ զրական-ընկորական շրջանի գլուխ:

Գրական շրջանը կազմուեց լիկէոնում գրեթէ իսկոյն բացուելուն պէս: Պուշկինի շորջը հաւաքուեցին Խլիչեւսկի, Դել'վիզ, բարոն Կորֆ, Կիւխելբերգեր, Եակովլիւ և ուրիշները: Նրջանի անդամների մէջ մի տեսակ խաղ մտաւ: Նարուելով միմեանց մօտ՝ ընկերները պարտաւորեցնում էին ամեն մէկին մի վէպ պատմել կամ գոնէ սկսել: Տեսնեալը պէտք է շարանակէր այնտեղից՝ ուր առաջինը կանգնել էր, լետու երրորդը և այլն, մինչև որ վէպը վերջանար: Դէլ'վիզն էր վաստակում առաջնութիւնը երեակալութեան ալս մարզու-

թեանց մէջ։ Պուշկինը չէր կարողանում նրա պէտ արագ հնարել գիտուածներ և շատ անգամ դիմում էր խորամանկութեան։ Մի օր նա պատմեց իւր ունկնդիրներին 12 քնած կուսերի պատմութիւնը, չասելով՝ որտեղից է վերցրել (ժուկովսկուց)։ Միւս կողմից՝ ընկերները հրատարակում էին ձեռագիր ամսագիրներ, որտեղ տեղաւորում էին իրանց գրուածքները։ Նրանց ձեռքի տակ էր լիկէոնի հարուստ գրադարանը, որից մանաւանդ ագահութեամբ օգտուում էր Պուչկինը։ Նրանք ստանում էին և նոր լուս տեսնող գրքեր ու ամսագրեր։

Լիկէոնում Պուչկինը սկսեց զրել ռուսերէն ստանաւորներ։ Առաջինն էր «Ուղերձ քրոջը»։ Այժմ յատնի վիկէոնական» բանաստեղծութիւնների թիւը հասնում է մօտ 120-ի։ Այս արտադրութիւնների մէջ երեսում են հին, ընդունուած ձերի աղղեցութիւններ։ բանաստեղծութիւնը հանդէս է գալիս կեղծ-զասական զգեստներով—Ապոլոնվ, մուսաներով, Ոլիմպոսով և այլն։ Եթէ նրա այս ժամանակում գրածից առանձնացնացնենք այն, ինչ որ նա ստեղծել է Դերժաւինի, Կարամզինի և Ժուկովսկու նմանողութեամբ՝ մնացածը թեթե, կալտառ ու զերծներ են, խնջուքների և սիրու երգեր, որոնք աչքի են ընկնում սրամտութեամբ և սրամիրների մերկութեամբ և արդիւնք են ֆրանսիական բանաստեղծների ընթերցանութեան։ Պուչկինը իրան չամարում էր Ժուկովսկու աշակերտ, բայց իսկա-

պէս թէ աշխարհակացողութեամբ և թէ զբական ձներով աելի մօտենում էր հատիշկովին, որը նոյնպէս խորհուրդ էր տալիս ծծել կեանքի զուարձութիւնները։ այս խրատները շատ համապատասխանում էին նրա պատմանեկան հասակին և անգուսութ բնութեանը։ Ակլրում այս երգերը լոկ նմանողութիւններ էին, իսկ իւսով, մանաւանդ անիշխանութեան ժամանակ, երբ Պուչկինը անձնատուր եղաւ զբոսակը և մոլի կեանքի՝ այս բարիտներն ու բակլուհիք այլ ևս վերացական պատկերներ չէին, այլ իրականութիւն։ Պուչկինը երգում էր մի որեէ աղախին կամ ճորտ զերասանուհի...։ Առասուրակ պատմանի բանաստեղծի գըրուածքներում արձագանդ են զտնում այն բոլոր տպաւորութիւնները, որ նա ստանում էր լիկէոնի կեանքից, պուրակների գեղեցկութիւններից, այնական կանգնած արձաններից, ընկերական խօսակցութիւններից—անթիւ կենսադրական մանրամասնութիւններ և ակնարիներ ավելուած են նրանց մէջ։

Շուտով նա ճանաչեց խսկական սէր—նա սիրահարուեց իւր մի ընկերոջ քրոջ հետ և իմացաւ, որ կաէ նաև մի այլ սէր, որը միաժամանակ թէ բարձրացնում է և զտում է պատանու հոգին և թէ տեղ չէ տալիս ոչ մի անմաքուր, վաւաշոտ զգացմունքի։ Նոր լարեր հնչեցին Պուչկինի սրտի մէջ —նրա անուրջների մէջ լսում է անձկութեան և արտմութեան ձայն։ Բելինսկին կոչում է այս զգաց-

մունքը «միակ ճշմարիտ Պուշկինեան տարր» նրա
այս շրջանի բանաստեղութեանց մէջ։ Երբ նա
պիտի անջատուէր իւր սիրածից՝ նա «իմացաւ ծա-
ծուկ տանջանքների երջանկութիւնը», բայց նրա
թախիծը չէր խլացնում հոգու միւս ձախները—
բանսաստեղօքը քաջալերութիւն գտաւ ընկերական
զգացմունքի և բանսաստեղծութեան մէջ։ «Ո՛չ, ար-
ցունքների մէջ էլ ծածկուած է քաղցրութիւն, և այս
կեանքում իմ միսիթարութիւնները կլինի՝ իմ հա-
մեստ ձիրքն ու բարեկամներիս երջանկութիւննու։

Նրջապատող կեանքն էլ ոգեսրութեան նոր
աղբիւրներ էր բաց անում։ Յարսկովէ Սելօվի ամեն
մի անկին լիշեցնում էր Կատարինէի նոր անցած
թագաւորութեան փառաւոր գործերը, որոնք սնու-
ցանում էին աղբասիրութեան ոգին։ Աւելացաւ 1812
թ. պատերազմի արտասովոր տպաւորութիւնը, Աւսա-
նողները աղանութեամբ կարդում էին ամեն մի
տեղեկութիւն պատերազմի ընթացքի մասին, և նր-
պիսի խնդութիւնով լցուեցին նրանց սրտերը՝ երբ
Գրանսիացիք իւս նահանջեցին Մօսկուալից։ Յետով
նրանց ոգեսրում էր այն, որ Ռուսաստանն է Եւրո-
պալի աղատարարը։ Պատերազմից լետով Յարսկովէ
Սելովում կանգնած էր լէյր հուսարների վաշտը, որ
նոր էր վերադարձել պատերազմից։ Սրանց հետ-
ուսանողները բարեկամացան։ Պուշկինը իւր հա-
րաւալին բնութեան ամենալին լափշտակութեամբ
միսեց մասնակցել հուսարների կոնճարանութիւն-

ներին։ Այս շրջանում նրա մէջ աւելի զարգացաւ
աղբասիրական ոգին, որը ընդունեց պաշտօնական
աղբասիրութեան ուղղութիւն։ Նա երազում էր
կուների մասին, զէնքի աջողութիւնների, թշնա-
մինների ամօթահարութեան, պետութեան արտա-
քին գօրութեան մասին։ Միւս կողմից՝ ալսոել նա
պատահեց իւր ժամանակի ամենակրթուած մարդ-
կանցից մէկին, Պ. Զաադաեւին, որը ունեցաւ նը-
պաստաւոր աղղեցութիւն Պուշկինի համոզմունք-
ների և բնաւորութեան կազմակերպուելու վրա։
Զաադաեւը այն ռուսներից էր, որոնց կարծիքով
պետութեան ճշմարիտ մեծութեան համար անհրա-
ժեշտ է ներքին բարօրութիւն, հարկաւոր են լաւ
օրէնքներ, արդարադատութիւն, լուսաւորութիւն,
վերջապէս միլունաւոր ճորտերի աղատութիւն։

Վերջը Պուշկինը առանձին երախտագիտու-
թեամբ լիշում էր իւր ուսուցիչ Կունիցինին, որ
իրաւաբանական գիտութիւններ էր աւանդում։ Սա,
ճշմարիտ է, մի բան էր քարոզում, իսկ իւր ան-
ձնական կեանքի մէջ բոլորովին հակառակն էր ա-
նում (օրինակ՝ ծեծում ճորտերին), բայց աշակերտ-
ները միակն նրա խօսքերը գիտէին, իսկ գործերը
ոչ։ Կունիցինի հակեացքները համապատասխանում
էին այն աղատամիտ ուղղութեանը, որին հետե-
ւում էր Ալէքսանդր Ա-ը իւր թագաւորութեան
սկզբնական տարիներում։ Նրա ուսմունքները իւ-
րացրեց Պուշկինը, միայն թէ աշակերտը իւր ու-

սուցչից աւելի աղատամիտ դառաւ։ Ինչ վերաբերում է Պուշկինի կրօնական անտարբերութեանը՝ այս կողմի վրայ ազգեց ոչ այնքան կունիցինը իւր ծաղրական վերաբերմունքով զեպի բարեպաշտութիւնը, այլ վ.օլ'տէրը, որը նա փոքրուց անդիր գիտէր։ Նրա առաջին զուարձասէր բանաստեղծութեան մէջ տեղ չփուաւ կրօնական զզացմունքը։ Բայց Պուշկինի կրօնական աղատամութիւնը աւելի զրքերից կարդացած, քան թէ նև ճշմարիտ տրամադրութիւնն էր։ Բանաստեղծը խկապէս շատ սնահաւատ էր։

Պուշկինի առաջին տպագրուած ոտանաւորը, ու Դրույ տիխոտվօրցу՝, լոյս տեսաւ Եվստինը Եվրոպէ հանդիսի մէջ 1814 թ. լուլիսի 13 ին։ Սլո գրուածքը ընկերներն ուղարկել էին խմբագրութեանը՝ հեղինակից ծածուկ։ Բայց Պուշկինի համար ամենանշանաւորն էր 1815 թ., որից սկսաւում է նրա գրական հռչակը։

Այս թուի լունոււարի 8-ին նշանակուած էր ուսանողների հրապարակական քննութիւնը վերջին դասարանը անցնելու համար։ Ներկայ էին բազմաթիւ բարձրագիր անձինք, որոնց մէջ և Գերժաւինը։ Պուշկինը պիտի կարդար իւր աֆիշութիւններ Յարսկուէ Սելօլի մասին։ որը գրուած էր Գերժաւինի, մասամբ էլ Լոմոնոսովի ոճով։ Կատարինէ Բ.-ին, նրա երգչին և նրա բազմալազմ թառան փառաբանելու համար։ Բանաստեղծը ալսակէս է

պատմում այս քննութեան մասին։ «Գերժաւինը շատ ծեր էր, քննութիւնը նրան շատ լոգնեցրեց։ Նա նիրհում էր մինչև այն րոպէն՝ երբ սկսուեց ուսաց զրականութեան քննութիւնը, Ալտուել նա կենդանացաւ։ — աչքերը փալէցին, նա ամբողջովին կերպարանափոխուեց։ Ի հարկէ, կարդում էին նրա ոտանաւորները, քննաղատում էին նրա ոտանաւորները, ամեն րոպէ գովաբանում էին նրա ոտանաւորները։ Նա լսում էր արտասովոր աշխորժով։ Վերջապէս դուրս կանչեցին ինձ։ Ես կարդացի իմ «Յիշողութիւնները Յարսկուէ-Սելօլի մասին», Գերժաւինից երկու քայլ հեռու կանդնած։ Իմ ձայնը մանկաբար հնչեց, իոկ սիրսա բաբախեց թովիչ հրձուանքով։ Զեմ լիշում, ինչպէս վերջացրի ընթերցանութիւնս, չեմ լիշում, ուր փախար։ Գերժաւինը հեցած էր։ Նա պահանջում էր ինձ, կամենում էր գրկել ինձ որոնում էին, բայց չգտան։ Այս ոտանաւորը տպագրուեց Պուշկինի ամբողջ ստորագրութեամբ։ Նրա մասին ամեն տեղ խօսեցին։ Ուրժերի մէջ սկսեցին երեալ նրա բազմաթիւ ոտանաւորները։ Ժիմ ժամանակս անցաւ, — ասում էր Գերժաւինը սրանից քիչ իետոյ։ — շուտով կերեալ աշխարհին երկրորդ Գերժաւին, որը արդէն լիկէնում զերազանցել է բոլոր գրողներին։ Ժուկովսկին ստանալով Մոսկուատում Վասիլ Պուշկինից «Յիշողութիւններ» ոտանաւորը՝ գնաց իւր ընկերների մօտ և այնտեղ բարձր կարդալով՝

կանդ էր առնում լաւագոյն հատուածների վրայ և բացագանչում էր, «Ահա մեզ մօտ ճշմարիտ բանաստեղծ»։ Նոյն թուի ամառը, լինելով Յարսկովէ-Սկզբում, ժուկովսկին, այս 32-ամեայ բանաստեղծը, որը այդ ժամանակ իւր փառքի գագաթնակիտին էր, այն աստիճան յափշտակուած էր Պուշկինի հանճարով, որ նրան, աշակերտական նստարանի վրայ նստած 15-տարեկան պատանուն, դիտմամբ կարդում էր իւր ոտանաւորները, և եթէ լաջորդ աեսակցութեան ժամանակ նա չէր կրկնում այդ ոտանաւորները՝ ժուկովսկին համարում էր նրանց թոյլ և ոչնչացնում էր կամ փոփոխում։ Քնքուշ հայրական ուրախութեամբ ժուկովսկին ողջունում էր Պուշկինի լաջողութիւնները, հովանաւորում էր նրան, հոգում էր նրա մասին։ Պուշկինը վերջը նրան իւր «հրեշտակ-պահապան» էր կոչում։

Այս միջոցին Պուշկինը մօտեցաւ և կարամ-զինին, որը առաջ էլ, լինելով նրա հօր տանը ծանօթ էր նրա հետ։ 1816 թ. փետրուարին կարամզինը թերեց Պետերբուրգ իւր «Ռուսաց պետութեան պատմութեան» առաջին 8 հատորները և կարդում էր ընկերների շրջանում իւր «Ներածութիւնը»։ Պուշկինն էլ ներկայ էր և լիշելով ամենը բառ առ բառ գրեց ընկերների համար, այնպէս որ վկէոնի ուսանողները գիտէին այս ներածութիւնը աւելի շուտ քան թէ նա լրտ տեսաւ։ Պուշկինը ջերմ կերպով սիրեց պատմագրին և նրա ամբողջ

ընտանիքը և դառաւ նրա տանու մարդը։ Կարամ-զինը զգուշացնում էր նրան, զմալում էր նրա վրայ և վերջը փրկեց նրան կեանքի ամենավճռա-կան րոպէում։ Դեռ լիկէոնում Պուշկինը մտերմացաւ նաև Դմիտրիեւի, Բատիչչկովի և Ա. Տուրգենևի հետ, որոնց նոյնպէս պատահում էր առաջ հօր տանը։ Այս համբաւը հաշտեցրեց ի հարկէ ծնող-ներին անառակ որդու հետ։

Ի՞նչն էր ալապէս զրաւում ամենքին Պուշկինի պատանեկական բանաստեղծութիւնների մէջ։ Ուտանաւորը, որը արդէն մշակուած էր ժուկովսկու և Բատիչչկովի ձեռքով՝ առանց դժուարութեան հոսում էր նրա գրչի տակից, բանաստեղծութեան լեզուն կարծես նրա բնական լեզուն էր, կեանքի հետ միասին նրան տրուած։ Պատկերների մէջ երեսում էր զարմանալի թանձրութիւն և վառ մարմնականութիւն (пластичность)։ Աշակերտական վարժութիւնների, նմանողութիւնների մէջ յանկարծ բանկում էին ինքնուրոցն երեակալութեան շլացոցից փայլեր։ Նա մինչև անզում երազում ոտանաւորներ էր տեսնում։ Աջողութիւնները աւելի ներշնչում էին Պուշկինին այն հաւատը, որ ինքը միմիայն բանաստեղծութեան համար է ծնուած։ Նա աւելի լաճախ էր խօսում իւր կոչման մասին։ «Ինձ երդի աստուածուհիք գաղտնի ուղին ցոյց տուին։ Ես խաղաղ հնչիւնների վակելութիւնը, գեռ մանուկ՝ զգալ գիտէի, և քնարը դառաւ իմ բաժին»։

Վօսենում էր լոկիոնը աւարտելու օրը. պէտք
էր ապագայ գործունէութեան ասպարէզը ընարել.
Պուշկինը կամենում էր հեծեալ գվարդիա մտնել.
բայց հայրը, պատճառ բերելով իւր կարողութեան
պակասութիւնը՝ համաձայնում էր միայն, որ նա
հետեակ գվարդիալում ծառայէ. հօրեղբարյը խոր-
հուրդ էր տալիս մտնել քաղաքացիական ծառայ-
ութիւնը. Պուչկինը, ըստ երեսիթին առանց զը-
ժուարութեան, հրաժարուեց իւր մտադրութիւնից.
Նա արդէն անդաւնալի կերպով վճռել էր հետեւ.
իւր ներքին ձայնին՝ լինել միայն բանաստեղծ:

1817 թ. յունիսի 9-ին նա աւարտեց լիկիոնը
իրեն 19-րդ աշակերտ: Հանդիսաւոր ակտին ներկայ
էր և կարողը. Պուչկինը իսկոյն պաշտօն ստացաւ
արտաքին գործերի նախարարութեան մէջ:

Ընկերները ցրուեցին. Պուչկինը իւր մտե-
րիմներից բաժանուելիս՝ ոտանաւորով խօսում էր
յաւիտենական բարեկամական զաշնի և սուրբ եղ-
բայլութեանը մասին: Այս ու խոր նա ամբողջ կեան-
քում պահեց. սովորական հոկտեմբերի 19-ը տօնե-
լիս՝ վերջը նա զրում էր ընկերներին.

«Մեղ համար ամբողջ աշխարհը՝ օտարութիւն է.
Հայրենիք մեղ համար՝ Յարսկոյէ Սելօն է»:



Բ.

ՊՈՒՉԿԻՆԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԱՅԻ

1817—1820

Գլուխ Ընտանեկան յարարերութիւններու Մակրաքաղաքի
կեանքի զրօնանքներու Դրակոն պարագաներներու Արագ-
մասու Դրակոն ծանօթութիւններու. Յոտպան ու Լիովմիլլաւ,
Քաղաքական յափշտակութիւններու Աքսոր:

Ուսումն աւարտելով՝ 18 տարեկան Պուչկինը
կրկին վերագարձաւ իւր ընտանեկան լարկի տակ,
որտեղ չէր եղել վեց տարի: Այկէոնի ուսանողնե-
րին, ըստ կանոնագրութեան, թողլ չէր տրւում ոչ
տօներին, ոչ էլ արձակուրդներին գնալ ծնողների
մօտ: Ամառը Պուչկինը անց կացրեց իրանց Միսալ-
լուլսկոյէ գիւղում (Պուկովի նահանգ), ուր նրան ու-
րախացնում էր զիւղական կեանքը, ոռու բաղա-
նիքը, ելակն և ալլն, բայց արձակուրդի լրանա-
նիքը, երկու չարաթ առաջ նա արդէն կրկին Պե-
տերբուրգումն էր, ուր այնուհեան անց կացրեց երեք
ձմեռ, ամառները առանձնանալով գիւղում:
Յարաբերութիւնները ծնողների հետ արտա-

քուստ լաւ էին, բայց հայրը նրան զալրացնում էր իւր ժլատութեամբ։ Պուշկինը աւելի լիշում էր ծառալութեան մէջ՝ քան թէ իսկապէս ծառալում։ Ոտանաւորների համար նա դեռ ոչինչ չէր ստանում, իսկ 700 րուբլի տարեկան ոռօճիկը չէր քաւականանում այն կեանքի համար, որը նա վարում էր։ Շատ անգամ նա նստում էր թուղթ խաղալու, որպէսզի փող վաստակէ իւր հարուստ ընկերներին պէս ապրելու համար։

Ընտանեկան կապերը նրան մօտեցնում էին առաջին աղնուական տների հետ։ Հայրը միշտ ձըգտում էր պտտուել «բարձր շրջանի» մէջ։ ուստիմարանը զարգացրել էր առանձին հակոմին դէպի աղնուական գասակարգը —և Պուշկինը երբէք իւր կեանքում չկարողացաւ ազատուել մնափառութիւնից։ այս ախտը նրան վերջը կորցրեց։ Նա աշխատում էր լինել բոլոր երեկութներին, դիմակահանգիսներին, մուտք ունենալ առաջնակարգ տները, ոչնչով լետ չմնալ հարուստ և աղնուական դասից, ուր նա անպատշաճ էր համարում նոյն-խակ բանաստեղծ անունը կրել։ Բայց նրա եռացող բնութիւնը բաւարարութիւն չէր կարող դանել «մեծ աշխարհում», «ուր խելքը պահում է ակամայ լոռութիւն, ուր սառնութիւնով են սրտերն համակուած, ուր միանման լիմարութեամբ ամենքը իրար հաւասար են», և նրան հարիւրապատիկ աւելի սիրելի է «երիտասարդ թռեկանների երջանիկ ընտանիքը», ուր

խելքը եռ էր զալիս, ուր մաքերի մէջ աղաստ էր նա, ուր վիճում էր բարձրաձակն, ուր զգում էր աւելի հզօր կերպով և ուր ամենքը զեղեցկի բարեկամներ էին։ Այս «երջանիկ ընտանիքը» երեկոներն ու ամբողջ զիշերները անց էր կացնում արբեցողութեամբ և զերասանուհիների ու անառակ գեղեցկուհիների հետ։ Պուշկինն էլ սրանց մէջ «այրում էր կեանքի մոմը երկու ծալրերից»։ Պետերուրդում կազմուել էր նոյն-խակ «կանաչ լամպի» ընկերութիւն, որտեղ քննուում էին և կազմուում նոր սիրացին ծրագիրներ, ամեն տեսակ խայտառակ և վտանգաւոր չարութիւններ։ տեղի էին ունենում խնջուքներ գրադներով, թէ ով աւելի կիմէ, և անդադար մենամարտութիւններ ամենաչնչին բաների համար։ Պուշկինը այս ընկերութեան մէջ վերջին տեղը չէր բռնում, և այս կենցաղը այնպէս էր աղուում նրա առողջութեան վրայ, որ երեք տարուալ մէջ նա երկու անգամ մերձ ի մահ հիւանդացաւ, թէն շատ ամուր կազմուածքի տէր էր։ Նրա ջղոտ և ձկուն մարմինը չափազանց զարգացած էր մարզութիւններով։

Բայց կար և մի երրորդ աշխարհ, որտեղ նա հանգստանում էր և «մեծ աշխարհից», և խրախանքներից։ Նրա լուրջ գործը բանաստեղծութիւնն էր։ Ոչ ոք նրա ընկերներից նրա պէս շատ չէր աշխատում ինքնակրթութեան վրայ, Պուշկինը ասում էր իւր ժամանակակից գրականագէտների

մասին. «Մեր մէջ քիչ են ալնափսի զրողներ, ուրոնք սովորելիս լինէին, մեծ մասը միայն լիտ է սովորում»:

Լիկէոնից դուրս գալուն պէս Պուշկինը ընդունուեց Պետարբուրգի գրական շրջանում՝ որպէս արդէն լավագութիւնի և վաստակաւոր բանաստեղծ: Նա դեռ իբրև ուսանող մասնակցել էր այն կուրին, որ սկսուել էր ուսուաց գրականագէտների մէջ Կարամզինի և Ժուկովսկու զործունէութեան առիթով հին և նոր ոճերի ուղղութեանց մասին: Հէնց նոյն 1817 թ. նա անդամ ընդունուեց Արդամասում, «Անլիքի և ճաշակի այս Երուսաղէմում» և անխախտելի կապեր հաստատեց նրա բոլոր մասնակցողների հետ: Գիրախտաբար, Արդամասի այս նիստը արդէն վերջինն էր—շուտով գլխաւոր անդամները զանազան գործերով հեռացան մարտաքաղաքից: Սակայն այսուհետև էլ երկար չղագարեցին երկու կուսակցութիւնների վէճերը, միայն թէ այս անգամ խնդիրը միշտ նորից արձարծում էր Պուշկինի հեղինակութիւնների առիթով: Պուշկինը արդէն լիկէոնում կազմել էր ինքնուրուն հակեացքներ XVIII-րդ դարի ուսուաց հեղինակների մասին, ալժմ նա նորնափէս զրեթէ բոլորովին գիտակցօրէն աշխատում էր անկախ զիրք բանել բոլոր ուղղութիւնների մէջ, որոնելով ամեն աեղ ճշմարտութիւն: Նա լինում էր Ժուկովսկու գրական շաբաթներին, բայց աւելի լարգում էր նրա աղնիւ ան-

ձնաւորութիւնը, քան թէ հաւանում նրա սաւառնումը անորոշ գերերկրավին անութիւնների և միշնադարեան սնահաւաստութիւնների մէջ: Պուշկինի հարաւալին «աֆրիկական» երեակաբութիւնը աւելի կապուած էր կեանքի՝ քան թէ մահի և հանգերձեալ կեանքի հետ: Միհնոյն ժամանակ նա մտերմացաւ նաև մի քանի տաղանդաւոր և զարգացած գրականագէտների հետ, որոնք Ասէնա-թիւ մեռելութիւն չէին տեսնում, այլ և մի քանի առողջ կողմեր, օր. Կատենինի հետ: Պուշկինը գիտէր ամենից օգտուել խր մեծ գործի համար: Բացի բազմաթիւ սիրահարական և հեշտասիրական ուսանաւորներից, որոնք բովէական տապաւորութիւնների պատուղներ էին և որոնք տաղագրութեան համար չէին նշանակուած (այս ձեռագիր երկերից ոչ մէկը նա չէր կարում բանագէտներին—ասեւ լոլ՝ «ցուց տալ նրանց հասկացողին՝ ամօթ է,— նրանք նրա համար չեն գրուած»): Պուշկինը այս շրջանում ունի մի քանի, ուղղակի օրինակելի, զասական բանաստեղծութիւններ, որոնց մէջ նրա տրամագրութիւնները նոյնչափ բազմազան են՝ որոշակի և նրա կեանքը. վերջը միայն թախիծը սկըսում է գերակշուղ լինել, ալտակ երկում են պազալ մեծ քնարերգուի բոլոր լաւագոյն գերը: Ինչ որ վերաբերում է բանաստեղծական ճենին և ինչ որ վերաբերում է բանաստեղծական ճենին, այս բանում Պուշկինը արտավագութեան ուժին՝ այս բանում Պուշկինը անսպէս առաջացաւ, որ Բատիւչկովը, երբ կարդում

Եր նրա մի ոտանաւորը՝ ճմլեց թուղթը իւր ձեռքում և բայցագանչեց. «Ո՞հ, ինչպէս է սկսել գրել անպիտանը»: Պուշկինի զլիաւոր աշխատութիւնը այս ժամանակ նրա «Ռուսան» և Լիւդմիլլան» է:

Այս քերթուածի միտքը նրա մէջ լղացաւ գեռ լիկէոնում, և այնուհետև նա չորս տարի աշխատեց նրա վրայ, մաս-մաս կարգալով իւր ընկերների շրջանում: Երբ նա վերջին երգը կարդաց ժողովսկուն՝ սա նուիրեց նրան իւր պատկերը՝ մակագրութեամբ. «Աշակերտին, պարտուած ուսուցից»: Մինչև այս ժամանակ շատերը նրան «ճանաչում էին միայն նրա մանր ոտանաւորներով և խոշոր չարութիւններով», այս երկասիրութիւնը նրա առաջին մեծ գործն էր: Այսուղ նա ամեն բանից օգտուել է, —և կարդացած կամ զայեակից լսած ժողովրդական հեքիաթներից, և Ռազիչներից, և Ժուկովսկուց, աւելի ևս Վոլ'տէրից և Արիօստոլից —մի խօսքով՝ կարդացածը, լսածը, զգացածը —ամենը իրար հետ խառնել է: Քերթուածը ահազին տպաւորութիւն թողեց. վերջն էլ, երբ Պուշկինը շատ աւելի նշանաւոր երկասիրութիւններ տուեց՝ հասարակութիւնը նրան միշտ անուանում էր «Ռուսլանի երգիչ»: Ամենքին զարմացրեց և հիացրեց այս փորձը՝ գեղարուեստական ձև տալու սիսորին հնութեան աւանդութիւններին, և պատմուածքի ոճը, որը մերժ հետնող ծաղրող է, մերժ սրտաբուղին և խորը զգածուած, բայց միշտ կենդանի, թեթև և

մարմնացած: Ոչ մի նշով անորոշ, մշուշալին անուրջների, ոչ մի ակնարկ մահի մասին: Հեղինակի կենսուրախ տրամադրութիւնը վարակում էր ընթերցողներին, պարզ էր, որ ծովովակու մութ ոռմանափառ կործանուում էր. Պուշկինը մինչև անգամ ծաղրում էր խափանական սէրը: Բայց ընթերցողներին աւելի խափանակում էր այս քերթուածի մէջ ժողովրդական —բանաստեղծական նիւթի մշակումը: Նրանք գեռ չին նկատում, որ ժողովրդական են միայն մի քանի անունները, պատկերներն ու դարձուածքները: Ամենքը տեսնում էին, որ բարձր դասակարգի գրականութիւնը մասամբ գոնէ դառնում է ժողովրդական: Պուշկինի բանաստեղծութիւնը միայն լաջորդ ստեղծագործութիւնների մէջ սկսեցին նկարագրել իրականութիւն: «Ռուսլան և Լիւդմիլլան» աղմուկ հանեց քննադատական աշխարհի մէջ: Հնասէրները հասարակութեան ու շաղրութիւնն էին դարձնում այս ճնոր սարսափելի առարկալի վրայ, որը ծագում էր ոռուական գրականութեան ովկիանոսի մէջ, և անկարելի էին համարում թուլ տալ, որ «մօրուքաւոր, արմեակը (գիւղացու արխալուղը) հագին, տրեխներով հիւրը մի կերպ ներս պրծնի ազնուական ժողովարանը»: Քերում էին քերթուածից բառեր, զիպուածներ —և զարհուրում: Միւս կողմից՝ Պուշկինին պաշտպանում էին ընկերները: Բայց այս վէճի ժամանակ Պուշկինը արդէն հեռու էր Պետեր-

բուրգից, վեպը լուս տեսաւ նրա բացակայութեան միջոցին։ Նոր ուղղութեան հիմունքները բանաստեղծի համար սկսեցին պարզուել միայն շատ լետոյ։

Լիկէոնից դուրս գալուց լետոյ՝ Պուչկինը գրտաւ երիտասարդական շրջանի մէջ ոչ միայն հետասէր զբօսանքներ—նրա ընկերների և ծանօթների մէջ կային նաև լուրջ մտածող մարդիկ։ Նոյն իսկ ուրախ խնջուքների միջոցին խօսակցութիւնը դառնում էր լանկարծ քաղաքական և տնտեսական կամ գրական խնդիրների վրայ։ Պուչկինը նորից պատահեց ջաւադանելին և ուրիշ սրա նման մարդոց, որոնք իրանց քաղաքական լափշակութիւնների ծալրին էին։ Այս երիտասարդ սերունդը զարոլիթով նայում էր իւր շուրջը կատարուածին և անհամբեր սպասում էր, որ հասարակական ոլժերը հրաւիրուեն գործելու։ Նրա լուսերը հիմնուած էին այն նորոգումների վրայ, որոնցով սկսել էր Ալեքսանդր Ա-ը իւր թագաւորութիւնը։ Նոյն-իսկ հաստատ լուրեր էին պատում, որ կայսրը լանձնել է կաղմել զիւղացիների աղատութեան հախազիծը։ Պուչկինին լափշակում էր այս միտքը։ Նա 1819 թ., հանգըտանալով զիւղում խնջուքներից, զբօսանքներից և մոլութիւններից՝ զանում էր իւր շուրջ կալուածատիրական կեանքի մէջ ամեն տեղ դոհութեան և աշխատանքի հետքեր։ Հատեսնելով արտասուր ները, չլսելով հառաջանքները, մարդկանց կորստի համար ճակատագրից ընտրուած՝ ալսուեղ վայրենիւ

աղակութիւնը անզգայ և ապօրինի կերպով իրան իւրացրել է բոնութեան խարազանով երկրագործի և աշխատանքը, և սեփականութիւնը, և ժամանակը։ Այսպէս Պուչկինը խուլ չէր մնում այն շարժումներին, որոնք նրա չորս բոլորը տեղի էին ունենում։ Բայց վիրերաներից դէմ արդէն ձայներ էին լսում և միջոցներ ձեռք առնեում։ Այն ժամանակ սկսուեցին զաւադրութիւններ։ Գաղտնի ընկերութիւնների զլուխ կանգնած էր «Բարօրութեան դաշնը», որը մինչե անգամ զաւառներում գործակալներ ունէր։ Բայց այս խմբերին Պուչկինը սաստիկ թեթևամիտ և ունադնասէր էր երեսում, և նրան իրանց մէջ չէին ընդունում։ Վիրաւորուած այս վերաբերմունքից՝ նա մտածեց ինքը ստեղծել իւր համար ինքնուրոյն դիրք, և անա ձեռագիր գրականութիւնը հարստացաւ Պուչկինի քաղաքական պամֆլետաներով։ Որոնց մէջ հնչում էր երիտասարդական լուղուող աղատամութիւնը։ Այս ոտանաւորները արտազրում էին, սերտում էին անգիր, ցրում էին Պետերբուրգից ամբողջ Ռուսաստանում։ «Զկար ոչ մի զրագէտ պրապորչչիկ, (ստորին սպակ), — ասում է մէկը իւր չիշողութիւնների մէջ — որը անգիր չգիտենար Պուչկինի արգելուած ոտանաւորները»։ Նրա ժողովրդակինի արգելուած առաջնորդութիւնը արագէս մեծ էր, որ նրա անունով կանութիւնը ախազէս մեծ էր, որ նրա անունով ուրիշների բազմաթիւ ոտանաւորներ էին պտտում ձեռքէ ձեռք, Յանկարծ լուր տարածուեց, որ նրան

կանչել են գաղտնի ատեանը և ծեծեր։ Այս լուրը հասաւ նրա ականջին։ Պուշկինը իրան լուսահատութեան չափ անպատճած էր համարում, և վճռեց այնքան լանդգութիւն ցուց տալ, այնքան սանձարձակութիւն խօսքերի և գրուածքների մէջ, որ իրան Սիբիր ուղարկեն—սրանով կվերականգնէր իւր պատիւը։

Այս միջոցին երեաց նրա «Ազատութիւն» ոտանաւորը և մի կծու եպիգրամ մինիստր Արակչէնի դէմ։ Այս ամենի հետևանքն այն եղաւ, որ նրան հրաւիրեցին գեներալ-նահանգապետ կոմս Միլորադովիչի մօտ և հրամաւցին միաժամանակ խողարկել նրա բնակարանը։ «Կնմս, դուք այդ ի զուր էք անում։ Այնուղ ոչինչ չէք գտնի՝ ինչ որ որոնում էք։ Աւելի լաւ. է՛ տուէք ինձ զրիչ եթողի, ես այսուղ եեթ ամենը ձեզ կզրիմ։— Ah, c'est chevaleresque (Ա՛հ, այս ասպետաբար է) — բացազանչեց Միլորադովիչը և ձեռքը սեղմեց Պուշկինը անզիր գրեց իւր արգելուած» ոտանաւորները և լանձնեց հերթապահին։ Նրան բաց թողին հրամաւելով սպասել կարգադրութեան։ Իսկ այդ միջոցին նա աւելի հեռու գնաց։ Մի օր թատրոնում նա իւր հարեաններին ցուց էր տալիս Բերլական հերցոգին սպանող Լուվէլի պատկերը, դիտմամբ այնպէս, որ բոլորն էլ տեսնեն։ Այս ամենը հասաւ կալսեր ականջը։

— Ենդէլ՛ արդտ, — ասաց նա լիկէոնի տեսչին

Յարսկովէ-Սելօի պարտէզում զբօննելիս։ Պուշկինը պէտք է աքսորել Ոիրիք։ Նա հեղեղել է Ուռսասանը վրդովեցնող ոտանաւորներով։ ամբողջ երիտասարդութիւնը անզիր գիտէ նրանց։ Ես հաւանում եմ նրա բացսիրտ վարմունքը Միլորադովիչի հետ, բայց դա չէ ուղղում գործը։— Ենդէլ՛ արդտը պատասխանեց։ — Ձերդ մեծութեան կամքն է, բայց Դուք ինձ կներէք, եթէ ես թուլտամ ինձ բարի խօսք ասել եմ նախկին սանի օգտին։ Նրա մէջ զարգանում է արտասովոր տաղանդ, որը պահանջում է գթութիւն։ Պուշկինը արդէն այժմ մեր ժամանակակից գրականութեան զարդն է, իսկ ապազալում՝ աւելի մեծ են նրա վրաւ լուսերը։ Աքսորը կարող է կորստաբերազդեցութիւն ունենալ երիտասարդի բուռն բնաւորութեան վրա։ Ես կարծում եմ, որ Ձեր վեհանձնութիւնը աւելի կիրատէ նրանու։

Իսկ Պուշկինը արդէն ընկել էր կարամզինի գուռը, ինդրելով խորհուրդ և օգնութիւն։ Կարամզինը նրանից խօսք առաւ՝ զոնէ երկու տարի ոչինչ չգրել կառավարութեան դէմ։ Պուշկինը տուեց և կատարեց իւր խօսքը։ Կարամզինի, Ժուկովսկու և մի քանի ուրիշ բարեկամների ջանքերը ազատեցին նրան Սիբիրից կամ Սոլովեցկի կղզուց (Սպիտակ ծովում), բայց ոչ բոլորվին պատճից, նրան, «ծառաւալութեան օգտի համար», տեղափոխեցին Եկատերինուաւ, պաշտօն տալով հարաւային Ուռսասատանի։

«Գաղթականների հոգաբարձութեան» մէջ, որ արտաքին գործերի նախարարութեանն էր ենթարկւում: 1820 թ. մայիսի 5-ին Դելվլիդն ու Եակովլեւը ճանապարհ ձգեցին նրան մինչև Յարսկովէ-Սելօ: Վերջին օրերը նա բոլորովին ոչ բանաստեղծական երկրողի մէջ էր իւր աղատասիրական ոտանտուրների պատճառով: Նրա ապագայ մեծաւոր ինդովին Պետերբուրգից կիսապաշտօնական կերպով լուս էր լայտնուում, որ Պուշկինը նրա բարերար ազդեցութեան տակ կուղղուի և որ «լաւ աստիճանաւոր դուրս կդալ և կամ գոնէ՝ առաջնակարգ դրույ»:

— * —

Գ.

ՊՈՒՇԿԻՆԸ ԲՐԱՄՑՄԵՆԻ ՀՅԹԱԽՈԽՄ

1820—1824.

Եկատերինոսովան: Կովկաս: Ղրիմ: Կամենկա: Վիշինեւ: Օդեսա: Պուշկինի կենցաղը և ներքին կեանքը: Բայրոնացանութիւնը և նրա ազգեցութիւնը Պուշկինի վրայ: Պուշկինի քերթուածները: Դէճէր ոսմանտիմի և կեղծ դաստիանութեան մասին: Պուշկին և Վորոնցով: Ս.քառը գիւղը

«Հասնելով Եկատերինոսովաւ, — գրում էր Պուշկինը իւր եղբօրը, — ևս զնացի նաւակով զրօնելու Վնեալի վրայ, լողացայ և սովորութեանու համեմատ տենդ ստացալ: Գեներալ Ռախետկին *), որ Կովկաս էր ուղերւում իւր որդու և երկու աղջիկների հետ՝ գտաւ ինձ հրէական խրճիթում զառանցանքի մէջ, առանց բժշկի: Նրա որդին (զու գիտես մեր մօտիկ բարեկամութիւնը և նրա ինձ արած լաւիտեան անմոռանալի ծառակութիւնները) առաջարկեց ինձ ճանապարհորդել միասին դէպի Կովկասեան ջրերը: Ինդովը բարի ճանապարհ մաղթեց

*) 12 րդ թուականի պատերազմի հերոս:

—ես պառկեցի կառքի մէջ հիւանդ, մէկ շաբաթից առողջ էի, Երկու ամիս ապրում էի ևս Կովկասում... ջրերը ինձ շատ էին հարկաւոր և չափազանց օգնեցին: Ավասում եմ, իմ ընկեր, որ դու ինձ հետ միասին չէիր տեսնում սարերի արդ հոչակապ շըդթան, նր անց սառցապատ գագաթները. Կովկասը ամեն կողմից հետաքրքրական երկիր է: Վայրենի չերկեզները վախեցած են, նրանց վաղեմի լանջըդնութիւնը անհետանում է: Պէտք է լուսալ, որ ալս նուաճուած աշխարհը, որ մինչև ալսօր ոչ մի էական օգուտ չէր բերում Ռուսաստանին՝ շուտով կը մօտեցնէ մեզ պարսիկների հետ ապահով առևտրով և գուցէ կիրականանալ Նասոլէոնի ցնորական ծրագրը՝ Հնդկաստանը նուաճելու մասին:

Պուշկինը չմտաւ Կովկասիան լեռների խորքը, ալլ գնաց Ռայեւսկիների հետ Տամանով, Կերչով, ուր տեսաւ Միհրգատ Պօնաացու տապանը, Թէոդոսիա, և ալստեղից արդէն ծովով Յուրզուֆ, Ռայեվսկիների կալուածքը. Այսաեղ նա ծանօթացաւ գեներալի երկու ուրիշ աղջիկների հետ, որոնցից մէկը, Կատարինէն, նրա վրայ միծ տապարութիւն զործեց իւր հաստատ բնաւորութեամբ և զարգացած, ոչ-կանացի խելքով (յետու տիկին Օրլով): «Նրա մեծ որդին աւելի քան յաւոնի կլինի: Նրա բոլոր աղջիկները հրաշալի են. միծը—արտասովոր կին է: Դատիր ինքդ, երջանիկ էի ևս արդեօք» կետատ, անհոգ կեանք սրտակից ընտանիքի շրջա-

նում, կեանք՝ որ ևս ալնակէս սիրում եմ և որ երբէք չեմ վալելել. Երջանիկ, միջօրեալ երկին, հրաշալի երկիր, երեակալութիւնը գոհացնող բնութիւն, լեռներ, պարտկներ, ծով. իմ ընկեր, սիրած լուս է տեսնել կրկին միջօրեալ եղբը և Ռայեւսկու ընտանիքը Յուրզուֆում ևս նստած էի տանը, լողանում ծովի մէջ և խաղաղով տրաքում»...

Պուշկինի նոգու մէջ ալս լիշողութեանց հետ ալս ևս ուրիշ բան մնաց երկար ժամանակ—սէրը զէպի Կատարինէ Ռայեւսկին, որի պատկերը երեք տարի շարունակ երեսում է նրա ալս շրջանի ոտանաւորների մէջ: Նոր տապարութիւնները և զգացմունքները մի փոքր մորմոքեցին նրա՝ աքսորանիքից գառնացած հոգին, բայց միենոյն ժամանակ Ռայեւսկիների լրջամիտ և լուսաւորուած ընտանիքի մէջ նա սկսեց աւելի զբալ իւր թոլլ նախապատրաստութիւնը և լաճախ խօսել երիտասարդութեան վանած ժամանակի մասին: Նա օգտուեց հանգամանքից և Ռայեվսկի օրիորդների օգնութեամբ սկսեց կատարելազործուել անզլիկներէնի մէջ: Ընթերցանութեան համար ընտրեցին Բայրոնը, որը ջերմ պաշտողներ ունէր ալս ընտանիքի մէջ: Անզլիկան բանաստեղծը մէկ անգամից տիրեց Պուշկինի ոգուն և երեակալութեանը: Նրա մէջ Պուշկինը դասու, միայն թէ աւելի ուժեղ և որոշ կերպով արտապատուած, ալն անբաւականութիւնը թէ իրանից, թէ շրջակալ կեանքից, ալն հիանթափմունքը, որը հէնց

արդ ժամանակ աւելի և աւելի մաշում էր իրան։ Արդէն ախտեղ Պուշկինը, կարդի բերելով իւր կովկասեան տպաւորութիւնները՝ սկսում է զրել «կովկասեան Գերլ» քերթուածը, որի մէջ «կամենում է պատկերացնել այն անտարերութիւնը դէպի կեանքն ու նրա վայելքները, հոգու այն վազաժամ ծերութիւնը, որոնք դառել են XIX դ. երիտասարդութեան բնորոշ դժերը»։

Յուրզուփից նա Ռայեւսկիների հետ Բախչսարակով անցաւ նրանց կամենկա գիւղը (Կիւվինահանգ), որտեղ գաւու բայրոնիսմով համակուած մի ամբողջ երիտասարդական շրջան, ուր խօսում էր ոչ միայն գրական հարցերի մասին և մերժում էին ոչ միայն աւանդական սովորութիւնները, նախապաշարումներն ու քաղաքավարական ձևականութիւնները։ Այս շրջանի մարդկանցից շատերը յետով խառն էին գեկաբրիսաների գաւաղրութեանը։ Ոչ մի տեղ չէր աշխատում այնպէս վայել Պուշկինը իւր մտքերի ազատութեամբ, խօսակցութեան համարձակութեամբ՝ որպէս այս ընկերների մէջ, որոնց նա յետու էլ երբեմն այցելում էր։

Կամենկայից Պուչկինը ալես չգնաց Եկատերինուլսաւ, որովհետեւ ալդ միջոցին ինդովին էր լանձնած ժամանակաւորապէս նոյնպէս Բեսարաբիաի նահանգի կառավարութիւնը և նրա հետ տեղափոխել էր Կիշինեւ նաև Գաղթականների հոգաբարձութիւնը։ Եկատերինոսլաւից բանաստեղծի

լիշողութեան մէջ մնաց միայն մի պատկեր, — Բնչպէս երկու շղթավակապ աւազակներ, վախչելով բանտից, շղթաներով լող տալով անցան միւս ափը և աղատուեցին։ այս դէպքը վերջը նիւթ դառաւ նրա «Աւազակեղբայրներ» քերթուածի համար։

Կիշինեւում Պուչկինը, գրեթէ մինչև հեռանալը, ապրում էր գեներալ Ինդովի մօտ, որը նրան շատ էր սիրել և գրում էր նրա մասին Պետերբուրգ. «Ճշմարիտ, նա լաւ տղակ է. ափսոս միայն որ վաղ է աւարտել ուսման ընթացքը, միայն գիտնական կեղեր կմնայ յաւիտեան կեղեն»։ Վերջը ինքը Պուչկինը Նիկողակոս կայսրին ներկայացրած զեկուցման մէջ ասում էր նոյնպէս, «Ուրիշ երկիրներում երիտասարդը ուսումը աւարտում է 25 տարեկան հասելում, իսկ մեզ մօտ նա շտապում է մտնել որչափ կարելի չուտով ծառակութեան մէջ։ Նա մանում է աշխարհ առանց հիմնական գիտութիւնների, առանց որեւէ դրական կանոնների. ամեն մրտք նրա համար նոր է, ամեն նորութիւն նրա վրայ ազդեցութիւն ունի։ Նա դառնում է կոյք հետեւող կամ խղճալի կրկնող առաջին պատահած ընկերոջ ասածների»։ Բայց այս ճշմարտութիւնը նա շատ աւելի ուշ հասկացաւ. իսկ այժմ ինդովը, հեռու պահելով նրան ամեն վտանգից՝ ինքը աշխատում էր, որ երիտասարդի արիւնը չուտով եռ զայ, եփուի ու հանգստանալ։

«Ճառաբութիւնը շատ քիչ ժամանակ էր խլում

Պուշկինից։ Հեռու զրական կենդրոններից՝ նա չէր կարող անձնատուր լինել և բացարձակապէս զրականութեանը, երեակայութեան աշխատանքը կարող էր լցնել նրա կեանքի մի քանի ըստէները—աղատ միջոց նա շատ ունէր։ Նոր շրջանը բոլորվին համապատասխանում էր Պուշկինի բալրոնական տրամադրութեանը։ Կիշինեւը այն ժամանակ չափանց կենդանի պատկեր էր ներկալացնում։ Նրա մէջ հաւաքուել էին զանազան աղգութիւններ—ուումիններ, հրէաններ, բուլղարներ, հաւեր, տաճիկներ, ֆրանսիացիք, իտալացիք, ոս մի զարմանալի խաւնուրդ էր աղգալին զգեստների, լեզուների, բարքերի և կերպարանքների։ Յունաց ապատամբութեան շնորհիւ ամստեղ էին փախել շատ լուն և ուումին աղնուական ընտանիքներ, որոնք տալիս էին քաղաքին արեելեան բնաւորութիւն։ Ուուս ծառադաշտները, մանաւանդ բաղմաթիւ սալաները, մի ուրիշ տարր էին, կաղմում ար խալարպէտ հասարակութեան մէջ։ Աղմուկը, բարքերի աղատութիւնն և բազմազանութիւնը մէծ տպաւորութիւն էին գործում Պուշկինի դիւրաշարժ բնութեան վրայ, և նա սիրեց ար քաղաքը։

Նա զգում էր իւր հոգու մէջ պառակտում, զգում էր այն կեղծ զրութիւնը, որի մէջ իրան դրել էր աքսորանքը։ հասկանում էր, որ մասամբ դրել էր աքսորանքը։ հասկանում էր, որ մասամբ ինքն էր մեղաւոր, բայց չէր կարող հաշտուել այն ինքն էր մեղաւոր, վայց չէր կարող հաշտուել այն ինքն էր մեղաւոր, որոնց մէջ հակառակ իւր կամականների հետ, որոնց մէջ հակառակ իւր կամ-

քին պլիտի ապրէր, — և ահա նա, կարծես ամենքին ջգրու, կամենում է ապրել իւր առանձին կեանքով, ուշադրութիւն չդարձնելով մարդկալին պահանջների վրա։ Նրա ինքնասիրութիւնը սահման չունէր։ ամեն տեղ և ամեն բանի մէջ արտաքսելում էր նրա աքրիկական արիւնը։ Պուչկինը ալցիկում էր ամեն տեսակ թէ ուսւ և թէ տեղական հասարակութիւն *), պարում էր, քարշ էր զալիս կանանց լետերից, սիրահարութիւններ անում; վիճաբանում, մենամարտում և ամեն արկածների մասնակցում։ Որեէ ինչզուքի կամ թզթախաղի (ակտեղ նա անպատճառ հիւր էր) երեսում էր նա չը սահրածած, չ'ածիլուած, երկար եղունգներով, մոլղաւեկամն ֆէսը գլխին, արխալուխով, մախմուրէ շալվարով և հաստ երկաթէ գաւազանով, և իւր նկարչական, բայց ամենասանկարդ զգեստով զարհութենում էր Կիշինեւի աստիճանաւորներին և ընակիչներին։ Իւր կծու եպիգրամներով, որուցով համեմում էր խօսակցութիւնը, և ամեն բովէ մենամարտութեան կանչելու պատրաստականութեամբ նա բազմաթիւ թշնամիններ վաստակեց։ Նրանից ամենքը վախենում էին։ Այս տարօրինակ արկածներով նա կամենում էր խակապէս միայն ծածկել իւր ստորացնող զրութիւնը, որը իրան ճնշում էր։

*1 Կոր ցշատակարանում 1821թ. լուլիսի 18 դրում է.
«Bal chez l'archevêque arménien» (պարերեկոյթ հայոց արքպետիսկոպոսի մօտ)։

Վերջը Պուշկինը, կարծես ինքն իրան ի նկատի ունենալով՝ ասում էր Բայրոնի մասին. «Ի՞նչպէս զատել մարդուս լատկութիւնների և մտածողութեան եղանակի մասին նրա արտաքին վարմունքներից. Նա կարող է, երբ ուզենայ, հագնել անառակութեան, որպէս և առաքինութեան կամաւոր դիմակը» Յաճախ իւր մաքի որենէ քմահաճ համոզմունքի պատճառով նա կարող է ցուց տաէ ամբոխին իւր բարուական էութեան «չլաւագուն կողմը. լաճախ կարող է նա թող փշել ամբախի աչքին միայն իւր տարօրինակ գործերով» Այսպէս երիի հանճարի «քմահաճ համոզմունք» էր, որ նա, օրինակ, մի քանի ընկերների հաւանութեամբ խրախուսած՝ անարգանքով էր խօսում կրօնի մասին (նա փոխազրեց ոտանաւորով աւետարանական մի պատմութիւն, որը լետոյ ձեռքէ ձեռք անցնում էր և արտագրւում), մինչդեռ իւր օրագրի մէջ հէնց ալդ միջոցին գրում էր. «Իմ սիրտը նիւթապաշտ է, բայց խեցքս հակառակում է այս բանինու...»

Ինզովը, փափկասիրտ և բարի մարդ լինելով՝ հայրաբար էր վերաբերում իւր անտանելի ստորագրեալին. Նա լանդիմանում էր նրան չարութիւնների համար կամ դուանը զինուոր կանգնացնելով՝ տանը կալանաւորում էր և միաժամանակ ուղարկում նրան, ձանձրովը ցրուելու համար, Փրանսերէն զրքեր, և կամ զանազան պաշտօնական

լանձնարարութիւններով քաղաքից հեռացնում էր Այսպէս, մէկ անգամ Պուշկինը խամացիլ քաղաքը պիտի գնար. ճանապարհին նա միացաւ գնչունների մի խմբի և մի քանի օր թափառեց նրանց հետ. Չեսոյ նա օգտուեց այս տպաւորութիւններից իւր «Գնչուններ» քերթուածի համար:

Բայց չպէտք է կարծել, որ Պուշկինի վարքը բացառիկ էր այն ժամանակուայ հասարակութեան մէջ. Մինչեւ անգամ լաւագուն, մտածող մարդիկ իրանց շրջանի մէջ ներկայանում էին իրեն ծագրակեղ թռուկաններ, մենամարտողներ, գոն-ժուաններ, որոնք պատրաստ էին, իրանց սապետական աներկիւղութիւնը ցուց տալու համար, օրինակ, զրազ զալ, որ առանց վախի զիշերը անց կկացնեն մի որենէ գերեզմանատան. Այս իդէալը ընթերցողների մեծամասնութեան համար առաջադիմութեան և դիմագրութեան նշան էր: Քսանական թուականներում Պուչկինով լավշտակւում էին ոչ միայն նրա զրուածքների գեղարուեստականութեան համար. Պուչկինը ընթերցողների աչքում հէնց ալսափիսի անկախ բանաստեղծ էր: Նրան սիրում էին, որովհետեւ նա իւր պոէմաների և բաղմաթիւ քնարերգութիւնների մէջ մարմնացնում էր հապարտ, ազատ ուսմանտիկի սիրելի իդէալը, և միենուն ժամանակ տեսնում էին նրա մէջ մի մարդ՝ որ չէ ենթարկւում կեանքի սովորական ընթացքին և այս պատճառով հալածւում է: Պուչկինի ամեն մի-

Հարութիւնը՝ ամեն մի ազատ խօսքը տարածւում էր
Ռուսաստանում, և նրա կեանքը անթիւ անեկդոս-
ների, եղած և չեղած, առիթ էր տալիս. իսկ նրա
կիշինեւեան կենցաղի մէջ պակաս չէին, օրինակ,
այսպիսի դէպքեր. մի օր նա թղթախաղի ժամա-
նակ տաքացած՝ հանեց ոռքից կօշիկը և խփեց հա-
կոռակորդի երեսին.

Մօտ երեք տարի Պուշկինը մնաց Կիշինե-
ւում, երբեմն միայն գնալով կամենկա, կիև կամ
Օդեսա: 1823 թ. ինդովը Նովոռոսիայի և Յեսա-
րաբիալի գեներալ-հանդապետութիւնը լանձնեց
նոր կառավարիչ Մ. Վորոնցովին (վերջը կովկասի
փոխարքալ): Պուշկինը պաշտօնով տեղափոխուեց
Վորոնցովի դիւտնատունը, որը գտնում էր այս
երկրի վարչական կենդրութեամբ, Օդեսապում: Նրան
զրաւում էր կեանքը այս աղմկալի ծովեղրհայ քա-
ղաքում, որ կար իտալական օպերա, կային հա-
րուստ և լուսաւորուած վաճառականներ, օտար-
ազդի ճանապարհորդներ, երիտասարդ, ընդունակ
աստիճանաւորներ, որոնց ընտրել էր ինքը Վո-
րոնցովը: Այս ամենն նրա համար ուներ առան-
ձին հրապուր, բայց շուտով արդէն նա սկսեց լի-
շել այս օրերը, որ անց էր կացրել կիշինեւում,
ինդովի ձեռքի տակ:

Այսպէս էր Պուշկինի արտաքին կեանքը,
իսկ ներքինը որից տեսակ էր, նա իւր ա-
ռանձնութեան մէջ աշխատում էր աղատութեան

գրկում վերադարձնել մրրկալից երիտասարդութեան
կորցրած տարիները և կրթութեան մէջ հաւասար-
ուել դարիս հետո: Նա չափաղանց շատ էր կար-
դում, կլանում էր բոլոր գրքերը՝ որ գտնում էր
կամենկալում, կիւտում, կիշինեւում, քաղուածներ
էր անում, հաւաքում էր ժողովրդական երգեր, ա-
ւանդութիւններ, ազգագրական նիւթեր, Պուշկինը
իւր մահից յետով թողեց շատ հարուստ զրադարձն,
որը վկայում է, թէ որչափ բազմակողմանի էր և
հիմնաւոր նրա ընթերցանութեամբ: Հարաւում նա
լաւ իւրացրեց անզիւրէնը, կատարելագործուեց
իտալերէնի մէջ և սկսեց սովորել նաև սպանե-
րէն: Նա ամենայն ուշագրութեամբ հետեւում էր
լունաց ակստամբութեան ընթացքին և գրում էր
որա օրակիրը: Միաժամանակ Պուշկինը շատ էր
ոտեղծագործում: Սովորաբար նա գրում էր առա-
ւոտները: Զցրուելու համար՝ Օդեսապում նա դիտ-
մամբ անկրղնից վաղ չէր վեր կենում, այլ ծալա-
պատիկ նատած մահճակալի մէջ՝ գրում էր: Բացի
բազմաթիւ փոքր քնարերգական ոտանաւորներից,
նա գրեց «Լովկասեան» Գերին, «Աւագակ եղբար-
ներ» (վերջը ալրեց, մշակելով միմիայն մի հատ-
ուած), «Բախչիսարապի շարուան» «Գնչուներ» ու
«Եւզենի» Օնեգինիու առաջին երեք գլուխները: Ըս-
տանալով 1821 թ. Նապոլէոնի մահուան լուրը՝
նա բորբոքուեց Ճմարիտ մարգասիրական ազգա-
սիրութեամբ և իւր «Նապոլէոն» բանաստեղծութեան

մէջ նա ցոլց տուեց մտքի աբնպիսի որժ և զգաց-
մունքի աղնուութիւն, որ այն ժամանակուայ ռուս-
ներից շատ քչերին էին լատուկ: Նա լիշում է այն
ամեն չարիքը, որ Նապոլէոնը արել էր Ռուսաս-
տանին, բայց չէ որ այդ չարիքի վրէժը նա արդէն
ստացել էր և բաւական չարչարուել. բանստեղծը
հաշտութիւն է քարոզում և կամենում է բարձրա-
ցնել ժողովրդական ազգասիրութիւնը ոչ թէ ատե-
լութեամբ, ալլ մարդասիրութեամբ և լարգանքով
դէպի փոխադարձ ազատութիւնը:

Թէ Կիշինեւում և թէ Օդեսսակում Պուշկինը
լուսը չէր կորցնում, որ շուառվ կազատուի աքսո-
րանքից: Մանաւանդ նրա սիրու ձգուում էր Պե-
տերբուրդ, ուր ընկերների մի խումբ սկսել էր
հրատարակել պարբերական թերթ հասարակական
կարծիքը ղեկավարելու նպատակով. նա էլ կամե-
նում էր անմիջական մասնակցութիւն ունենալ
այս գործի մէջ: Մի քանի անգամ նա արծակուրդ
խնդրեց, բայց նրան նոյն-իսկ կարճ ժամանակով
թուլ չէր տրում այցելել մալրաքաղաքը: «Եւ աշ-
խարհից, և իրանից, և կեանքից անբաւական»
նա ասում էր. «Ինձ մնացին միայն տանջանքներ,
սրտի զատարկութեան պտուղներ»: Այս խօսքերի
մէջ չէ կարելի չնկատել Բայրոնի ազդեցութեան
հետքեր, որոնք մանաւանդ շատ են Պուշկինի այս
ժամանակի քերթուածների և Դեմոն» (Դե) ոտա-
նաւորի մէջ:

Բայրոնը (1788—1824) իւր աշխարհակեցո-
ղութեամբ բոլորովին պատկանում էր XVIII դարին:
Նա հումանիստ է. նա համարում էր, որ մարդու
ալանդակուած է անմիտ նախապաշարումներով և
հասարակական ձեռքով. հաւատում էր խելքի ու-
ժին. համոզուած էր, որ անհրաժեշտ է վերադառ-
նալ բնութեանը. որ աղատութիւնը պիտի լինի
անպայման, անսահման. որ հնարաւոր է ընդհանուր
երջանկութիւնը հիմնել, քնական կերպով կառա-
վարելով մարդկանց: Բայց այս երջանկութիւնը
հաստատելու փորձը արուած էր ֆրանսիական ին-
դափոխութեան ժամանակ և վերջացել էր լիակա-
տար անլաջողութեամբ: Հինը տապալուած էր, սա-
կան ազատուած մարդիկ վայրենի զաղանների պէս
ման էին գալիս ցեխի և արիւնի մէջ: Նապոլէոնի
անկումից շետոյ նոր դարի հոսանքը փոխուել էր
և գնացել հակառակ ուզզութեամբ, կրկին դէպի
հինը: Ի՞նչ պէտք է անէին այն մարդիկ, որոնք չէին
համաձայնում իրանց վիզը հին լծի տակ դնել:—
Բայրոնը XVIII դարի իդէալներից ոչ մէկը չզոհեց,
չնայելով փոփոխուած հանգամանքներին, բայց ո-
չովհետեւ նրանք ցեխի մէջ էին ձգուած և պղծուած:
Իւր վրէժն առաւ ամբողջ մարդկութիւնից, ա-
նա իւր վրէժն ցոլց տալով դէպի մարդկալին ամբողջ
տելութիւն ցոլց տալով դէպի մարդկալին ամբողջ
ցեղը (Սպասովիչ): Բացառութիւն արեց նա իւր և
մի քանի ուրիշ հպարտ և ուժեղ բնաւորութիւն-
ների համար, որոնց գերազոն էակներ էր համա-

բում և որոնց սիրում էր ամենայն քնքութեամբ։
Արանք ոչ մի օրէնք չեն ճանաչում և իրանք ի-
րանց համար օրէնք են։ Արանք են ապրում իդէալ-
ներով, իսկ ամբոխին մատչելի չեն իդէալները։ Բայ-
րոնի բոլոր զրուածքների մէջ երեսում է այս հիսու-
թափմունքն և յուետես մարդասեցութիւնը։ Նրա
համար կեանքի իմաստը ոչ թէ աշխարհի սովորա-
կան վայելքների մէջ է, ալ բարիի և գեղեցկի
մէջ, մտքի և գեղարուեսափ արտազրութիւնների
մէջ։ այս ձգտումը գէպի իդէալականը կեանքի թէ
զարդն է և թէ տանջանքը — սիհանքի ժանզը։

Պուշկինը, Կիշինեւում զբած «Ծննդինի» մի
տունի մէջ ասում է, առվ ապրել է և մտածել՝ նա
չէ կարող հոգու խորքում չատել մարդկանց։
Բայց այս թշնամութիւնը դէպի մարդիկ նրա մէջ
չէր կարող առաջ գալ, ինչպէս Բայրոնի մէջ, այն
ժամանակուալ Եւրոպայի քաղաքական անկարգ
վիճակը դիտելուց, որովհետեւ Պուշկինի քաղաքա-
կան համոզմունքները առհասարակ շատ խախուս
էին։ Միւս կողմից՝ նրա մեզմ բնութեանը լատուկ
չէր յուետեսութիւնը։ Այս զգացմունքը Արևմուտ-
քում արդիւնք էր դարաւոր աշխատանքի՝ գիտու-
թեան և հասարակական կեանքի ասպարէզում։ Ուու-
սաստանում ոչ գիտութիւնը, ոչ էլ հասարակական
կեանքը այնպէս զարգացած չէին, որպէս Եւրո-
պակում, ուստի և անբաւականութիւնը զուրկ էր
այն գաղափարական բովանդակութիւնից, որ ունէր

Բայրոնի բանաստեղծութիւնը։ Բայց այնուամենալ-
նիւ ուստաց կեանքի մէջ էլ, Արակշենի և Շիշկովի
օրով աիրող կարգերի չնորհիւ, արդէն ծագում էր
դառնութեան զգացմունք, իսկ ծալրակեղների մէջ
նոյն իսկ ընդդիմագրութեան միաք։ Բայրոնինը
պատրաստի հող էր գանում Պուշկինի, որպէս և
նրա ժամանակակիցների մէջ։ Աքսորը չէր կարող
չգրգռել նրան և չսաստկացնել զժգոհութիւնը, և
անկասկած հարաւոմ զրուած հեղինակութիւնների
մէջ լսում են սեփական զգացմունքի հնչւններ,
թէն ի հարկէ շատ տեղ երեսում է և Բայրոնի բա-
նաստեղծութեան հզօր ազդեցութիւնը։ Խղուր չէ
որ այս շրջանի ստեղծագործութիւնները այնպիսի
լափշտակութեամբ կարգացուում էին հասարակու-
թեան մէջ, որ լսում էր նրանց մէջ մի ինչոր
ծանօթ և մօտիկ բան — իւր սրտի անորոշ շարժում-
ներ։

Նշանաւոր է այն, որ Պուշկինը ինքն էլ
հետզհետէ միայն սկսեց հասկանալ, որ նկարագրե-
լով իւր հոգեկան վիճակը՝ միաժամանակ նկարա-
գրում է իւր ժամանակակից ուսւ կրթուած մար-
դու ներքին աշխարհը։ Իբրև ծշմարխս զեղարուես-
տագէտ նա անձնականից անցաւ ընդհանուր երե-
ւութիւն, վերջը ստեղծեց «Եւգենի» Օնեգին» տիպը,
որի մէջ նա, արդէն առանց բայրոնականութեամբ
լափշտակուելու, դուրս է բերում ուստաց երիտա-
սարդների անբաւականութեան իսկական և ամե-

Նատարածուած դճերը: «Կովկասեան Գերի» քերթուածի մէջ, որի մասին Պուշկինը գրում էր— «սիրում եմ նրան, չգիտեմ ինչն։ նրա մէջ կան ի մարտի տողերը», — հերոսը մէկ՝ աշխարհի կարդերի հետ չհաշտուող, մէկ էլ՝ սիրոց հիասթափուած անձնատորութիւն է: Այս պատկերը բանաստեղծի ողու համար բոլորովին պարզուեց միայն «Գնչունիրը» զրելիս: Քաղաքակրթուած մարդը, Ալէկօ (կրթատուած Ալէքսանդր) վակրենի գնչուների մօտ է փախչում քաղաքներից, որաեղ մարզիկ «ամաշում են սիրոց, հալածում են մտքերը, վաճառում են իրանց աղատութիւնը, զլուխները խոնարհում են կոռոքերի առաջ և խնդրում են փող ու շըդթաներու: Կարելի է կարծել, որ այսպէս խօսողը կողմել է բարձր հասարակական իդէալ, որին չէ համապատասխանում իրականութիւնը. բայց իսկապէս նա կամմենում է, որ «կեանքի լուզմունքը չկարողանալ շիռթել իւր նոզեկան ծուլութիւնը: Եա ուզում է արհամարել լուսաւորութեան կապանքները» և «անհոգ թռչնակի պէս զարթնելով՝ ամբողջ օրը նուիրել Աստուծոյ կամքին»: Դեռ ժան-ժանակի Ռուսուն քարոզում էր վերադառնալ քնութեան գիրկը. այս միտքը կրթուած մարդկանցից շատերին էր դրաւում: Բայց Եւրոպայում այս ձգտումը՝ հասարակական առաջադիմութեան համար նոր հիմունքներ գտնելու կերպարանքը ունէր, իսկ ուսաց աղնուականների կեանքի մէջ,

ուր ձորտական պատրաստի աշխատանքը անհոգութեան և ծուլութեան էր տրամադրում՝ հիասթափիմունքի հետ խառնուեցին օտարոտի ձախներ: Թէ որպիսի աղատութիւն էր ոռու բալրոնականների աղատութիւնը՝ երևում է նրանից, որ Ալէկօ չէ կամմենում ճանաչել ուրիշի— Զեմֆերալի զգացմունքների աղատութիւնը և սպանում է նրան: Նա միայն իւր համար է ուզում աղատութիւն և խառնում է հասարակական աղատութեան և անձնական կամայականութեան գաղափարները՝ ինչպէս և չատերը ոռու երիտասարդներից: Ահա թէ ինչպիսի յատկանիշ գծեր էր գտնում Պուշկինը ոռու բալրոնական բնաւորութիւնների մէջ: Կարելի է ասել, որ նրա բանաստեղծութիւնը իւրացրեց Բալրոնի տիպերի մի քանի արտաքին կողմերը, բայց ոչ թէ նրանց ներքին, գաղափարական աշխարհը: Որուսաց լուետեսութիւնը կարծես ամեն իդէալ հերքում էր. մինչդեռ Բալրոնը ապրում էր իդէալներով, նա գեղեցիկը ցնորք էր անուանում, նա ոգեստութիւնը ասում էր, նա չէր հաւատում սէրին և աղատութեան, կեանքի վրայ ծաղրով էր նախում և ամբողջ բնութեան մէջ ոչինչ չէր կամմենում օրհնելու («Դեմոն»): Միւս կողմից՝ Պուշկինը համոզուեց, որչափ եսական է Բալրոնի ուսմունքը բացառիկ անձնաւորութիւնների մասին, և սկսեց աղատուել նրա աղղեցութիւնից: Սակայն երկարատե հաղորդակցութիւնը Բալրոնի հանճարի հետ սաստիկ բա-

բերար նշանակութիւն ունեցաւ Պուչկինի երկասի-
րութիւնների գեղարուեստականութեան համարը
բարոնը նրան հանեց Գրանսիական ուղղութիւ-
նից, որին նա հսկարկուած էր իւր գործունէու-
թեան հէնց առաջին տարիներից, ներշնչեց նրան
լարգանք զէպի սեփական ստեղծագործութիւնները,
ցուց տուեց նոր ճանապարհ, որի վրայ միակ դե-
կավարը պիտի լինէին ազատ ոգեսորութիւնը և ան-
կախութիւնը:

«Բախչիսարակի՝ շատրուանը» և «Գնչուները»
ահազին աղմուկ հանեցին ռուս քննադատական
աշխարհի մէջ։ Ամենքը հիանում էին և զգում, որ
մի ինչ-որ նոր ուղղութիւն է բացում, և դրա ա-
նունը դնում էին ռոմանտիսմ։ Կրկին առաջ եկան
նոր ուղղութեան և կեղծ դասականութեան մոլե-
ռանդ պաշտպաններ։ Բայց ինչ է «ռոմանտիսմը»⁸
շատ քչերն էին հասկանում։ Պուշկինը մի փոքր
լետոյ գրում էր. «Քանի էլ կարդացել եմ ռոման-
տիսմի մասին—բոլորն էլ այն չեն։ Բայց ինքն էլ
չէր կարողանում ճիշտ սահմանել իւր միտքը, թէև
բոլորն էլ նրան էին համարում ռուսաց ռոման-
տիսմի պարագլուխ։ Ծոմանատիսմ ամելով՝ նա աւե-
լի շուտով հասկանում էր մի ինչ-որ անզուսպ, ե-
ռանդուն, հասարակական և գրական բարքերի սո-
վորական ըրջանակից գուլա եկող բան։ ԶԵ կարելվ
այս հակեացքի մէջ չնկատել Բայրոնի ազդեցու-
թիւնը։ Առհասարակ Պուշկինը, վերին աստիճանի

օժտուած լինելով զրական քնննական ընդունակութեամբ՝ երբէք չէր կարող ստեղծել իւր համար զրականութեան վերացական տեսութիւն, — հանձարը ինքն էր դուց տալիս նրան ճշմարիտ ճանապարհը։ Նրա լաջորդ արտազրութիւնները շուտով հնացած դարձրին բոլոր վէճերը կեզդ զասականութեան և ռոմանատիսմի մասին։ Վկանց պարզուել, որ նոր ուղղութիւնը արդէն պահանջում է բանաստեղծից իւր իրական զգացմունքների ազատ նկարագրութիւն և հասարակական ու ժողովրդական կեանքի ամեն տեսակ պատկերներ։ Դեռ լիկէոնից սկսած՝ Պուչկինը ոտանաւորներով արտապատռմ էր իւր անձնական տպաւորութիւնները։ լաջորդ շրջաններումն էլ միշտ կեանքը ինքն էր անմիջապէս նրան ներշնչում պատկերներ, մտքեր ու զգացմունքներ։ Նոյն-իսկ դուրս բերուած տիպերն ու բնաւորութիւնները, թէև ազդուած են Բայրոնից՝ բայց միւս կողմից անկասկած արտապատռութիւն են Պուչկինի սեփական հոգու և բնութեան ու ժամանակակից երիտասարդների արամագրութեան։ Օդեսաան թողնելիս՝ նա վերջնականապէս կանգնեց ալս նոր, ու էալ ական ճանապարհի վրաւ։

1823 թ. ամառը Պուշկինը տեղափոխուեց
Ողբսսա և մկնեց բարիչտակուել եւրոպական զուար-
ձութիւններով, մանաւանդ թատրոնով։ Վորօնցովլը
պահանջում էր իւր բոլոր ծառալորդներից ճշտո-

թիւն և օրինաւորութիւն մտածելու եղանակի, կենցագի և պաշտօնավարութեան մէջ; Պուշկինը փորձեց մի փոքր լարմարուել այս չըջանին, նա մազերը խուզեց, լուս սանրուեց և հագնուեց, բայց կամենում էին որ նա նախ և առաջ լաւ աստիճանաւոր դառնայ—այս գերի հետ չէր կարող հաշտուել ամրա լավագակուող, անզուսպ բնութիւնը; Նա այն-ուրա լավագակուող, անզուսպ բնութիւնը; Նա այն-պէս էր կարծում, որ ուզում են իւր վրայ բռնութիւն գործ դնելու ստիպելով կամքի հակառակ ծառաւէր: Այս բանին նա բռնուն կերպով ընդդիմադրեց, և երբ նրան ասում էին, թէ նա պէտք է ծառաւէ, սրովհետև ոռօնիկ է ստանում—նա խոկոն պատրաստ էր պատասխանելու, «Յս ընդունում եմ 700 ռ. ոչ իբրև աստիճանաւորի ոռօնիկ, այլ իբրև աքսորուած ստրուկի թոշակ: Ես պատրաստ եմ այս փողից հրաժարուել, եթէ միայն չեմ կարող աղատ տրամադրել իմ ժամանակս ու զբաղմունքներու»: Պուշկինի ինքնասիրութիւնը մանաւանդ վիրաւորում էր նրանից, որ Վորոնցովը բանաստեղծական պարապմունքի վրայ նախում էր արհամարհանքով և չէր ուզում բանաստեղծութիւնը ճանաչել ազնիւ աշխատանք, որ ուրիշ արհեստաների պէս կարող է տալ նիւթական ապահովութիւն և տնալին անկախութիւն: Պուշկինի գառնութիւնը այնաեղ հասաւ, որ նա 1824 թ. լուսնվարին մտածում էր փախչել ոչ միայն Օգեստավից, այլ և Ռուսաստանից: Նա արգէն չէր կարողանում զսպել իրան, և Վորոնցովի

մասին կծու ակնարկներ էր անում հրապարակօրէն, նրան մի լորդ կոչելով՝ նրա անզլիասիրութեան համար. Վերջապէս յարաբերութիւնները այնպէս լալ ուեցին, որ Պուշկինը փորձեց հրաժարական տալ, «Ես փափաքում եմ միայն մի բանի — անկախութեան, Զանձրացայ տեսնել, ինչպէս ինձ իմ հայրենիքի մէջ ընդունում են աւելի վատ՝ քան թէ մի որևէ եկուոր անզլիացի դատարկախօսի, որը գալիս է մեղ մօտ անհոգ կերպով դիմելու իւր ոչնչութիւնն և իւր թոթովանքքոյ»: Վորոնցովի ականջը հասնում էին Պուշկինի ակնարկներն իւր մասին, և նա 1821 թ. մայիսի 23-ին դրեց արտաքին գործերի մինիստր կոմս Նեստելրոդէին, իւրն-դրելով հեռացնել Պուշկինին որևէ ուրիշ նահանգ, Ռուսաստանի ներսը, որ կարող կլինէին, ամեն վեսակար աղդեցութիւնից և չողոքորթութիւնից զերծ, զարգանալ նրա բարեբաստիկ ձիրքերն ու տաղանգը. իսկ Օղեսաբում կան շատ մարդիկ, որոնք իրանց երկրպագութեամբ նրան խելքից հանում են, ասելով որ նա առաջնակարգ բանաստեղծ է, մինչդեռ նա թով հետեղ է ոչ-բոլորովին պատուելի օրինակի—լորդ Բալբոնին: Բայց այս նամակը Պետերբուրգ չհասած՝ այնտեղ սկսուել էր նոր գործ Պուշկինի զէմ: Աստիճանութեան ձեռքն էր ընկել նրա մի նամակի պատճէնը, որ արտաքրուած տարածում էր Մոսկուարում (նամակը բաց էին արել փոստատանը): Այդտեղ ի միջի ալոց նո-

գրում էր. «Առնում եմ զուտ անսատուածութեան գասեր, Ակստեղի մի անգլիացի—միակ խելօք անսատուածն է, որպիսին ևս պատահել եմ: Նա դրել է հազար թերթ, ոչնչացնելով հոգու անմահութեան թոյլ ապացոյցները, մի սիստեմ, որ այնքան էլ միտիթարական չէ, բայց դժբախտաբար, աւելի քան հաւանական է»: Բարեպաշտ Ալէքսանդր Կալորը արդէն տրսը կորցրեց Պուշկինին ուղղելու: «Ամեն ինչ ապացուցանում է, որ նա չափազանց արդէն վարակուել է վնասակար սկզբունքներով, որոնք այն քայլերի մէջ հասարակական ասպարէզում»: Հրամալուած էր «արձակել նրան մինիստրութիւնից վատ վարքի համար»: Բայց որպէսզի նա, օգտուելով իւր ազատութիւնից, աւելի և աւելի չտարածէ վնասակար գաղափարները՝ կատար անհրաժեշտ համարեց հեռացնել նրան ծնողների կալուածքը, Պուշկին նահանգը, այնտեղի վարչութեան հսկողութեան ներքոյ 1824 թ. յուլիսի 30-ին Պուշկինը թողեց Ողեսան:

Դ.

ՊՈՒՇԿԻՆԸ ՄԻԽԱՅԼՈՎՍԿԻ ԳԻՒՂՈՒՄ

1824—1826

Յարաբերութիւնները հօր և որդու մէջ, Տրիգորսկի գիւղի հասարակութիւնը, Պուշկինի պարապմունքները, նէկոպիրի աղբեցութիւնը, «Բորիս Գորոնով»: Ստեղծագործութեան տեսութիւն և վարձատրութեան խնդիր, Նրոսասահման վախչելու ծրագիր: Ենեկումբերի 14-ը, նոր թագաւորութիւնն ու Պուշկինը,

Սեպտեմբերի 8-ին Պուշկինը արդէն Միխայլովսկի գիւղումն էր, որտեղ էին նոյնպէս նրա ծնողները, քոյրն ու եղբայրը՝ Հալլըն ու մակրը նրան լաւ ընդունեցին, բայց շուտով ամեն ինչ փոխուեց: Հալլը, սարսափած որդու աքսորանքից՝ շարունակ կրկնում էր, որ նոյն վիճակը իրան էլ է սպասում: Երկու ամսից Պուշկինը պաշտօնապէս կանչուեց Պուշկի քաղաքը՝ ներկայանալու տեղական վարչութեանը, Հսկողութիւնը յանձնուած էր Սրեմտեան շրջանի գեներալ-նահանգապետին և Պուշկի նահանգապետին: Բայց աւելի գործնական համա-

բեցին առաջարկել հօրը՝ ստանձնել անմիջական հսկողութիւնը։ Հայրը այնքան թով գտնուեց, որ ընդունեց այս առաջարկը, և ահա թէ ինչ դուրս եկաւ սրանից։ «Հօրս առաջարկեցին բաց անել իմ նամակագրութիւնը, — զրում էր Պուշկինը Ժուկովկուն, — կարճ ասած՝ լինել իմ լրտեսը։ Հօրս դիւրաբորբոք զգալունութիւնը չէր թով տալիս ինձ պարզ խօսել նրա հետ։ Ես վճռեցի լոել Հայրս սկսեց նախաել եղբօրս, որ ես նրան անաստուածութիւն եմ սովորեցնում։ Ես շարունակ լուսում էի։ Հայրս կանչում է եղբօրս և հրամաքում է նրան՝ ծանօթութիւն չունենալ այդ ճրէշի, այդ արևասեռուած որդու հետո իմ գլուխս բորբոքուեց՝ երբ իմացայ այս ամենը։ Գնում եմ հօրս մօտ, գտնում եմ նրան ննջարանում և ասում եմ ամենը՝ ինչ որ ունէի սրտումս ամբողջ երեք ամիս, վերջացնում եմ նրանով, որ ասում եմ նրան վերջին անգամ։ Հայրս օգտուելով վկաների բացակալութիւնից՝ դուրս է վազում և ամբողջ տանը լաւարարում է, թէ ես նրան ծեծեցի, իետոյ թէ՝ ուղում էի ծեծել։ Հայրը վերջը ասում էր, որ որդին իրան սպանեց խօսքերով... Վերջապէս Սերգէ Լովիչը չդիմացաւ և ամբողջ ընտանիքով ձմեռը տեղափոխուեց Պետերբուրգ, որտուն հսկելու պարտականութիւնից։ Պուշկինը մնաց մենակ, անմիջական հսկողութիւնը անցաւ Պուշկինը գաւա-

ռական աղնուականութեան առաջնորդին և մերձակալ Սվեասուպորսի վանքի վանահօրը։ Միխայլովսկուց երկու վերաս հեռու գտընտեմ է Տրիգորսկի գիւղը, ուր բնակում էր տիկոն։ Օսիպով կալուածատիրուհին իւր մի քանի աղջիկներով և ազգական օրիորդներով։ Պուշկինը զբոսանքների ժամանակ լաճախ ալցելում էր նըրանց և գտնում էր ավտոել անկեղծ բարեկամութիւն և երիտասարդ կրթուած հասարակութիւն, ուր անհոգ, ուղղակի երեխական չարութիւններ էր անում և հոգուվ հանգտանում։ Տանտիկինը բարի և լուսաւորուած կին էր, որի հետ նա կարողանում էր լրջօրէն խօսել զրականութեան մասին։ Օրիորդներից իւրաքանչիւրին նա նուիրել է բանաստեղծութիւններ, հերթով սիրահարուելով մէկին կամ միւսին, բայց առելի ինքն էր նրանց հետաքրքրում՝ քան թէ նրանցով հետաքրքրուում, որովհետեւ իւր սիրաը գեռ երկար ժամանակ Պուշտանալումն էր ուրիշի հետ։ Երբ Պուշկինը այս հեռու, թողած կողմից ստանում էր նամակ այնպիսի խորհրդաւոր նշաններով, որպիսիք կալին և իւր մատանիքի վրայ՝ նա փակում էր իւր սենեակում և ոչ ոքի չէր ընդունում։ Նամակները նա, իւր խոստան համաձայն, կարդալոց լետոյ ալբում էր։ Այս կինը կոմունի Եզլիս. Վորոնցովն էր (Կոմս Միք. Վորոնցովի ամուսինը)։ Ի՞նչ դեր իսպաց այս սէրը նրա և կոմս Վորոնցովի լարաբերութիւնների

Հարուելու մէջ՝ յախնի չէ։ Գիտենք միան, որ
կոմսուհին միշտ լիշում էր Պուշկինին առան-
ձին զղացմունքով և ամեն օր կարդում էր նրա
գրուածքները։

Գիւղական առանձնութեան մէջ Պուշկինի
օրերը ընդհանրապէս անցնում էին միակերպ, ան-
վրում։ Նրա կեանքը լիշեցնում է 0նեղինի կեանքը
գիւղում։ Նա էլ վեր էր կենում վաղ և իսկոյն,
թեթև հագնուած, գնում էր լողանալու սարի տակ
վաղող գետակի մէջ։ Ճմեռը նստում էր նախաճա-
շից առաջ սառուցով վաննա։ Առաւօտները նա
նուիրում էր գրական պարապմունքների—ստեղ-
ծագործութեան, ընթերցանութեան, քաղուածք-
ների—նա ուրիշ կերպ չէր կարդում, եթէ ոչ։ մա-
տիտը ձեռին։ Աշնանը, երբ նա առհասարակ շատ
էր արտադրում՝ նա առանձին միջոցներ էր ձեռք
առնում չցրուելու համար—կամ մահճակալից վեր
չէր կենում, կամ չէր հագնուում մինչև ճաշ։ Վերջն
էլ, մալրաքաղաքներում ալլրելիս, նա աշնանն էր
թողնում իրագործելու իւր բանաստեղծական մտա-
գրութիւնները և ամենից շատ էր զրում մռալլ
եղանակին։ Զմեռուալ երկար երեկոները նա անց էր
կացնում իւր զայեակ Արինա Ռոդիոնովակի հետ (ո-
րից նա արտանկարել է Տատեանավի զայեակի պատ-
կերը «0նեղինի» մէջ)։ Պառաւին նա անուանում էր
«իւր խեղճ երիտասարդութեան բարի ընկերունի»
և հաղորդակից էր անում իւր հանճարի բոլոր գաղ-

տնիքներին։ Երեկոները նա լսում էր հեքիաթներ
և առղջում էր անիծուած կրթութեան պակասու-
թիւնները։ Այս հեքիաթները նա գրի էր առնում,
և շատերը լետով մշակեց։ Գիւղական մթնոլորտի
աղղեցութեան տակ նա աւելի է հետաքրքրում
հալրենի պատմութեամբ, գրականութեամբ և կին-
դանի ժողովրդական բանահիւսութեամբ։ Նա եր-
գեր էր հաւաքում, ուսումնասիրում էր ժողովրդա-
կան լեզուն և բարքերը, հասարակ դասակարգի
հետ շփուելու համար երբեմն հագնում էր առե-
տրականի շորեր և շրջում Պսկովի բազարներում։
Միւնոյն ժամանակ նա շարունակում էր ծանօթա-
նալ ընդհանուր գրականութեան և պատմութեան
հետ։ «Գրքեր, ի սէր Աստուծոյ, գրքեր, կրկնում
էր նա ամեն նամակի մէջ եղբօրը։ Նրա սիրած
հեղինակները գառնում են Անդրէ Շենիէ, Վալ'տէր-
Ակոտաը և մանաւանդ Շէկսպիրը, որի համեմա-
տութեամբ Բայրոնը երեսում է նրան թողլ և միա-
կողմանի։ Միւնակ կեանքն ու ընթերցանութիւնը,
անցեալի ուսումնասիրութիւնն ու հասակը նը-
րան տրամադրում էին աւելի հանգիստ աշքով
նապելու աշխարհին, մտածելու, իմաստասիրելու ան-
ցեալն և ներկան։ Նա զառաւ «աւելի լրջամիտ,
պարզ, ծանրախոն»։ Նա զդում էր իւր հասունու-
թիւնը, «որ իւր ողին լիովին զարգացել է—նա
կարող է ստեղծագործել»։ Պուշկինը արդէն կա-
րողանում էր երկարացնել իւր ոգենորութիւնը, վեր-

լուծել իւր արտադրութիւնն ու միաժամանակ չը կորցնէլ ներշնչումը։ Գիւղում նա վերջացրեց «Գլուխուները», գրեց «Օնեգինի» երեք հետեւեալ գլուխուները (վէպի հերոսուհիների—Տատեանա և Օ՛զաքուրի պատկերները նա մասամբ վերցրել է տօնսիապի առաջին ամուսնուց ունեցած երկու աղջիկներից, օր. Վուլ'ֆերից), «Կոմս Նուլին» և «Բորիս Գոդունով» ողբերգութիւնը և բազմաթիւ մեծ ու փոքր ռոտանաւորներ։

1825 թ. ապրիլի 7-ին, Զորջ Բայրոնի մահուան տարեդարձի օրը, նա հոգեհանգիստ կատարել տուեց «Ծառայ Աստուծոյ Գէորգի» համար, ոս միաժամանակ կարծես հոգեհանգիստ էր և իւր բայրոնիսմի համար։ Այնուհետեւ նա ազատւում է այս աղղեցութիւնից և յաճախ յափշտակում է Ենեկսպիրով, որը գիտէր պահպանել պարզութիւն և իրականութեան ճշտութիւն իւր հերոսների թէ գործողութիւնների և թէ լեզուի մէջ։ Պուչկինը սկսում է բնակ ան ու թիւն պահանջնել ողբերգութիւնից և առհասարակ ամեն մի բանաստեղծական գրուածքից։ Այսպիսի ոգով է գրուած «Բորիս Գոդունով» ողբերգութիւնը, որը վերջացնելուց յետով, Պուչկինը կրկին կարդաց բարձր ձախով, ծափ էր տալիս և աղաղակում—ալ թէ Պուչկինու նա զգում էր, որ իւր ալս ստեղծագործութիւնը չատ աւելի բարձր է իւր նախորդ գրուածքներից և շատ տարբեր է ալն ամենից, ինչ որ մինչեւ ալդ ժա-

մանակ լոյս էր տեսել ոռւսաց գրականութեան մէջ, և վախենում էր, չինի թէ ընթերցադ հասարակութիւնը վատ ընդունէ նրան։ Այս ողբերգութիւնը սկիզբ գրեց ոռւսաց աղջականից Պարտեական միջոցին հասկանում աղջական թիւնը Պուչկինը արդէն ալդ միջոցին հասկանում աղջական թիւնը։ «Աղջականութիւնը հեղինակի մէջ մի առաւելութիւն է, որը կարող են լիովին գնահատել միան հալրենակիցները։ Կայ մտածելու և զգալու հղանակ, կան անթիւ սովորութիւններ և հաւատալիքներ, որոնք լատուկ են բացառապէս որեէ մէկ աղջիկ։ Կլիման, կենցաղավարութիւնը, հաւատը տալիս են ամեն մի աղջիկ առանձին կերպարանք, որ աւելի կամ պակաս արտացոլում է և բանաստեղծութեան մէջ։ Այսպիսով նա աղջականութիւնը աւելի խորն է հասկանում։ Քան թէ միան լեզուն, գարձուածքները։

Առաջին խնդիրը, որը Պուչկինը աշխատեց պարզել իւր համար Միխալլովսկիի գալուն պէս՝ բանաստեղծութեան աղատառութեան իննդիրն էր։ Դեռ հարաւում, Բայրոնի աղղեցութեան տակ, նա խօսում էր ոգեսրութեան անկախութեան և բանաստեղծի աղատ դրութեան մասին։ Բայց զեռ ալնտեղ նա սկսել էր վարձատրութիւն ստանալ իւր գրուածքների համար, այսպէս՝ «Կովկասեան գերիի» համար նրան վճարեցին 550 ր., իսկ «Բախչիսարայի շատրուանի» համար արդէն 3000 ր.։ Նա մտածողութեան մէջ էր, թէ ինչպէս կարելի է

միացնել ազատ ոգևորութիւնն ու վարձատրութիւնը։ Եւ ահա Միխալովիկում գրած առաջին ոտանաւորներից մէկի մէջ—«Բանաստեղծի խօսակցութիւնը գրավածառի հետո», նա ալպէս է առում. ստեղծագործութիւնը բանաստեղծական ոգու բնական պահանջ է, «երեակալութեան խրախճանք»։ Նա չէ վաճառում իրան ոչ փողի, ոչ փառքի, ոչ էլ կանացի սիրու համար. նա երգում է աղատութիւն։ «Բայց չը որ առանց փողի աղատութիւն էլ չկայ»։ Անկախութիւնը հիմնւում է ազատ աշխատանքի վրայ, «որ ապահովում է մարդուս անկախ ֆիզիքական գոլութիւնը և իրաւունք ունի իւր վարձատրութիւնը պահանջելու։ Որպէսզի ստեղծագործութիւնը ազատ լինի՝ նա պիտի համարուի կեանքի աշխատանք, որպէս ամեն մի աշխատանք։ «Չէ վաճառում ոգևորութիւնը, իսկ ձեռագիրը կարելի է վաճառել»։ Այս սկզբունքին Պուշկինը հաւատարիմ մնաց մինչև վերջը։

Որչափ էլ զբաղուած լինէր Պուչկինը Միխալովսկում՝ գիւղական կեանքը նրան չէր կարող լիովին գոհացնել։ Նրան հարկաւոր էր լայն հասարակական գործունէութիւն, կոխւ, իսկ նա իրաւունք չունէր նոյն-իսկ Պոկով զնալու առանց թուլտութեան։ Եւ ահա կրկին նրա մէջ ծագում է արտասահման փախչելու միտքը։ Աւելի քան երբ և իցէ նա կամենում է սովորել։ Անհա իմ աքսորանքի անկարարութիւններից մէկը—միջոցներ

չունիմ սովորելու, քանի որ ժամանակ է։ Մեղքիմ հալածիչների հոգուն։ Զմեռուայ և ամառուայ արձակուրդներին գալիս էր Տրիգորսկի Գորապատի համալսարանի ուսանող Ա. Վուլ'ֆը, տ. Օսիպովի աւագ որդին։ Սրա հետ բանաստեղծը մկնեց կազմել արտասահման փախչելու ծրագիր, որը սական անկարելի եղաւ իրագործել։ Այս անսաջող փորձից իւսոյ Պուչկինը վճռեց. «Իմ գոյութեան վիճակը պէտք է վճռէ ճակատագիրը—այս գործի մէջ ես չեմ կամենում խառնուել»։

1825 նոյեմբերի 19-ին վախճանուեց Տագանրոգում Ալեքսանդր Ա. Կայսրը։ Որուսաստանը հաւատարմութեան երգում տուեց նրա եղբայր Կոստանդինին, որը սական երկու տարի առաջ հրաժարուել էր գահից. այս հրաժարականը դադարնի էր պահուամ։ Այժմ Կոստանդինը կայսր ճանաչեց իւր եղբայր Նիկողայոսին։ Գաղտնի ընկերութեան անդամները օգտուեցին այս անիշխանական ժամանակից, քանի որ լաբանի չէր, թէ ով է զան բարձրանալու, և կամեցան իրագործել իրանց ծրագիրը— Ռուսաստանում հասարակապետութիւն և սահմանափակ միավետութիւն հաստատելու։ Նրանք համոզեցին Պետերբուրգում եղած վաշտերից մի քանիսին, թէ Կոստանդինը չէ հրաժարուել և որ հանգուցեալ կայսրը կտակել է՝ պակսեցնել ստորին զինուորների ծառալութեան ժամանակամիջոցը։ Նրանք լուս չունէին, որ բոլոր զօրքերը կհետեւն

իրանց, բայց կարծում էին, որ Նիկողակոս կալվը չի կամենալ արիւն թափել և խօսին կհրաժարուի իւր ինքնակալ իշխանութիւնից: Դաւադիրները գելտեմբերի 14-ին երեացին պալատի առաջ հրապարակի վրայ, պահանջելով Վկոստանդիինը և Կոնստիտուցիան (սահմանադրութիւն), բայց բաւական էր Նիկողակոս կամեր երեալը՝ որ բոլոր զինուորները նրա առաջ ծունկ չոգէին: Ակունեց Պետերբուրգում քննութիւն: Թէ մակրաքաղաքներում և թէ գաւառներում բանտարկուեցին ընկերութեան բազմաթիւ անդամներ, զլիսաւորապէս զինուորականներ: Առանձին քննիչ մասնաժողով նշանակուեց և Վարչաւարում, որովհետեւ պարզուեց, որ ոռու լեզափոխականները կապակցութիւն ունեին Լեհաստանի գաղտնի ընկերութիւնների հետ: Ոռուներից 116 հոգի մեղասոր ճանաչուեց, որոնցից միայն հինգը կախուեցին, միւսները աքսորուեցին տաժանակիր աշխատանքների և ուրիշ աւելի թեթև պատիժներ կրեցին *):

Պուշկինը Տրիգորսկիումն էր, երբ Օսիպովների ծառաներից մէկը Պետերբուրգից լուր բերեց, թէ այստեղ ապստամբութիւն է: Նա սաստիկ գունատուեց, լսելով այս նորութիւնը, հաղիւ հազինաց մինչև երեկոյի վերջը և շտապեց Միխալով-

*) Ալեքսանդր Բ 1856 թ. իր թագաւորութեան օրը ներում շնորհեց բոլոր դեկարտիաներին և վերականգնեց նրանց և նրանց սերունդների իրաւոնքները:

սկի: Ամբողջ գիշեր նա լուզուած մտածում էր, թէ ինչ պէտք է անէ: Նա անհրաժեշտ էր համարում շուտով երևալ նոր մարդկանց շրջանում, ուր հարկաւոր պիտի լինին խորհրդատուներ, աջակիցներ: Միւս օրը առաւօտեան նա ուղևորուեց գէպի Պետերբուրգ, բայց Միխալովսկուց դուրս գալիս՝ պատահեց քահանակի, իսկ լետոյ, գաշտում, նապաստակը երեք անգամ նրա ճանապարհը կըտրեց, այս նշաններից վախսեցած սնահաւատ Պուշկինը վերադարձաւ դիւղը:

Շուտով նա սկսեց լուրեր ստանալ խուզարկութիւնների, քննութիւնների, դատի և ասլա հինգ լեզափոխականների գլխաւորման մասին: Բանտարկուած գեկաբրիմանների մէջ կալին նրա ընկերները, ծանօթները, որոնց հետ ինքը մօտիկ էր եղել: Սարսափած նա սկսեց ալբել նամակներն ու կամկածելի թղթերը, ի միջի ալլոց՝ ալբեց իւր ինքնակենապրութիւնը, որը այն ժամանակ գրում էր: Կամաց-կամաց նրա շուրջը սկսեց դատարկութիւն առաջանալ: Մի քանի ողջ մնացած մարդիկ մտածում էին իրանց անձի փրկութեան մասին: Պուշկինը տեսաւ, որ աքսորից ազատուելու միակ միջոցը՝ նոր կառավարութեան դիմելն է, որը առիթ չունէր նախորդի պէս իրան հալածելու: Նա օգտուեց այն հանգամանքից, որ իւր անունը չկար դաւադիրների ցուցակի մէջ: «Ինդրել՝ մի տեսակ քաշւում եմ,— դրում էր նա Դէլվիդին, — ինչ էլ որ

լինի՝ ևս կը կամենալի լիոլին և անկեղծօրէն հաշ-
տուել կառավարութեան հետ, և ի հարկէ, այդ
ոչ ոքից, բացի նրանից, կախուած չէն։ Մինչ այդ
Պետերբուրգի բարեկամները աշխատում էին նրա
համար և ցոլց տուին նրան, ինչ օրինական ճա-
նապարհով պիտի խնդրագիր ներկայացնէ բար-
ձրագոյն անունով, իւր խնդրագրի մէջ նա յայ-
տնում էր անկեղծ զղջում և ընդունուած կարգին
իւր կարծիքներով չհակառակելու հաստատ մտա-
դրութիւն, և խնդրում էր՝ խախտուած առողջու-
թիւնը վերականգնելու համար, թոյլ տալ իրան
գնալ Մոսկուա, Պետերբուրգ կամ արտասահման։
Բժշկական վկայականի հետ նա ներկայացրեց ստո-
րագրութիւն, որ «երբէք չէ պատկանել և չէ պատ-
կանում որևէ զաղանի ընկերութեան և երբէք չէ
իմացել նրանց մասին»։

Պուշկինը երազում էր օտար երկիրների մասին: Բայց գեներալ-նահանգապետը, խնդիրքը Պետերբուրգ ուղարկելիս՝ խորհուրդ էր տալիս, «թուլ չտալ Պուշկինին գնալ արտասահման»: 1826 թ. օգոստոսին տեղի ունեցաւ Մոսկվակում Նիկողակոս կայսեր թագադրութիւնը, իսկ սեպտ. 2 կամ 3-ին Միխայլովսկում երեաց լատուկ Փեռ'զեգեր և այնպէս շտապեցրեց Պուշկինին որ նա հազիւ ժամանակը ունեցաւ վերաբռնն ձգելու և փող վերցնելու:

ԹԱՓԵԹԵՎԵՆ ԿԵՐՆՔ

1826-1831

Сіннаагеніищінн կаішебі հետ Հասարակութեան ցուց առած
ընդունելութիւնը: Պուշկինի առաջնի ամիսները Մոսկովյա-
ռում: **Московский Вестникъ.** Ենէնկենրոգի: Պետրովորդ:
Պուշկինի հոգեկան փասկի: Թափառուսմեր: Պուշկինի հա-
եացքը տոնիսական և անձնական արժանապրութիւնների
գրայ: «Պուտաւա»: Սէր: Առվասնեան ճանապարհորդութիւն:
«Литературная газета» և բանակախ: Նշանադրութիւն:
Բոլիին: Պասկադրութիւն:

Ֆեղագերը Պուշկինին բերեց Մոսկուա, ուղղակի պալատը, և ճանապարհից փոշոտուած ու ցեխոտուած բանաստեղծին անմիջապէս տարան կայսեր առանձնասենեակը: Նիկողայոս Ա. նրան սիրով ընդունեց և երկար հետո խօսեց. վերջը նահարցրեց, - «Պուշկին, կմասնակցէիր զեկոտեմբերի 14-ին՝ եթէ Ոետերբուրգում լինէիրո՞»: «Անպատճառ, Տէր. իմ բոլոր ընկերները դաւադրութեան մէջ էին, և ես չէի կարողանալ չմասնակցել: Միայն բացակայութեանը փրկեց ինձ, և ես չնորհակալ եմ Աս-

տուծուց»: «Բաւական լիմարութիւններ ես արել, — պատասխանեց կալսրը, — լոյս ունիմ, ալժմ խոհեմ կլինիս, և մենք ալլ ես չենք կռուի: Դու ինձ կռւ զարկես ամենը՝ ինչ որ կգրես. ալսուհետեւ ես կը լինիմ քո գրաքննիչը»: Կայսրը այն համովմունքին լինիմ քո գրաքննիչը: Ալսուհետեւ եկաւ, որ ծանօթացաւ խելօք և աղնիւ մարդու հետ, որի խօսքին կարելի է հաւատալ:

Մոսկուայի հասարակութիւնը հրճուանքով բնդունեց բանաստեղծի ազատութեան լուրը, և ամեն տեղ, մանաւանդ գրական շրջանների մէջ, նրան ուրախութեան և հիացման ցուցերով էին դիմաւորում: Իսկ Պետերբուրգում «մարդիկ ուրախութիւնից մինչեւ անզամ թռչկոտում էին»: Վեցամետ աքսորից լետով զգալով իրան ազատ՝ Պուշկինը անձնատուր եղաւ մայրաքաղաքի զուարձութիւններին, պարահանդէսներին, ինչոքքներին, որոնք շարունակութիւն էին թագադրական տօնախմբութիւնների: Այդ միջոցին Մոսկուայում տեղի էին ունենում բազմաթիւ գրական ժողովներ, ուր քննուում էին զանազան գրական և փիլիսոփալական հարցեր: Պուշկինը դեռ Միլիալովկում մըտածում էր լուրջ և բարեխիղճ թերթ հիմնելու մասին, ալժմ նա գտաւ համակրողներ երիտասարդ գիտնականների և գրողների մի շրջանի մէջ, ուր վճռուեց հրատարակել «Մոսկովskii Вѣстникъ» թերթը և նրա միջոցով ընդդիմադրել Բուլգարին և Գրեչի՝ Պետերբուրգում հրատարակած թերթերին,

որոնք համարում էին անազնիւ և վաճառելի: Պուշկինը երեք տարի շարունակ ամեն կերպ աջակցում էր հրատարակութեան աջողութեանը թէ իւր գրուածքներով և թէ տաղանդաւոր ընկերներին խմբելով այս հանդէսի շուրջը: Մի երկու գրական ժողովներում նա կարդաց իւր «Բորիս Գոդունով» ողբերգութիւնը, «Ընթերցանութիւնից լետով», ասում է ունկնդիրներից մէկը, «մենք երկար ժամանակ նայում էինք միմեանց, լետով թափուեցինք Պուչկինի վրայ. սկսուեցին գրկախառնութիւններ, բարձրացաւ աղմուկ, լսուեց ծիծաղ, երեաց շամախիան: Պուչկինը ոգեսրուեց, տեսնելով իւր ալսպիսի ներգործութիւնը ընտիր երիտասարդութեան վրայ: Նրան ախորժելի էր մեր լուզմունքը... Զեմ լիշում, ինչպէս ցրուեցինք, ինչպէս վերջացրինք օրը, ինչպէս ալառկեցինք քնելու»:

Բայց երկար չանեց Պուչկինի այս ուրախ տրամադրութիւնը, շուտով նա պիտի զգար, որ իրան տրուած ալատութիւնը պալմանական է և սահմանափակ: Կայսրը նշանակել էր միջնորդ իւր և բանասատեղծի մէջ ժանդարմեների առաջնորդ և նրբորդ բաժնի (զաղանի ոստիկանութեան) գլխաւոր Բենկենդորֆին, որը կայսեր բանձնարարութիւնը իւր կերպ համարացաւ, ալսինքն՝ թէ Պուչկինը պէտք է գտնուի մի տեսակ գաղտնի հսկողութեան ներքոյ: Բենկենդորֆը թշնամացաւ Պուչկինի հետ և այն պատճառով, որ իզուր սպասում

էր բանաստեղծի ալցելութեանը։ Վերջապէս նա դիմեց նրան հետեւեալ նամակով։ «Ես ս սպասում էի ձեր ալցելութեանը, և յուս չունենալով ձեզ այստեղ տեսնելու պատիւ ունիմ հաղորդելու, որ Վեհափառ կամրջ ոչ միայն չէ արգելում ձեզ գալ մալրաքաղաք, այլ և բոլորվին ձեր կամքին է թողնում այդ, այն պայմանով միայն, որ նախօրօք նամակով թովլութիւն առնէք, նորին Մեծութեանը հաճելի է, որ Դուք դրազուէք երիտասարդութեան կրթութեան հարցով։ Այս գործը Ձեզ մանաւանդ ընդարձակ նիւթ կտայ, որ փոքր ձով իմացել էք կը թութեան կեզծ սիստեմի բոլոր կորսապեր հետեւ մտնելու գնալի։ Կամրջ ինքը կլինի ձեր ստեղծագործութիւնների և առաջն գնահատողը, և գրաքննիչը։»

Պուշկինը կարծում էր, որ ազատելով իւր հեղինակութիւնները սովորական գրաքննութեանից՝ իրան նոյն վատահութիւնն են ցուց տալիս, ինչ որ մի ժամանակ կարամզինին, Բայց շուտով նա ստացաւ Բենկենդորֆից երկրորդ նամակ, որի մէջ ժանդարմների գլխաւորը նրան հարցնում էր, ողիզ է արդիօք, որ նա կարդացել է մի քանի շրջաններում իւր նոր գրաման, և կրկնում էր, որ իւր գրուածքները, տպագրելուց կամ ձեռագիր տարածելուց առաջ, նա պէտք է ներկայացնէ կամերական քընդութեանը։ Պուշկինը տեսաւ, որ ինքը աւելի կա-

յառած է Բենկենդորֆից՝ քան թէ կալսրից և որ զրկուած է ամեն գրողի իրաւունքից—ձեռագիրը ընկերական շրջանի մէջ կարդալու և տպագրելուց առաջ ուրիշների խորհուրդներից օդտուելու։ Նա իսկոյն ներողութիւն խնդրեց, լայտնելով որ ուրիշ կերպ էր հասկացել բարձրագոյն չնորհը և ներկալացրեց իւր ողբերգութիւնը։ Անուհետեւ Բենկենդորֆը խնդրեց ուղարկել իրան, կամսեր քընդութեանը ներկայացնելու համար, «իւր փալլուն գրչի բոլոր մանր երկերն են», Մանր որպանաւորներից Պուշկինը միայն երկուսը լետ չստացաւ, միւսների տպագրութիւնը թոյլ արուեց, իսկ ողբերգութիւնը վերադարձնելով՝ Բենկենդորֆը լայտանեց, որ կամսը մեծ հաճութեամբ կարդաց զրաման, նկատելով միայն մի քանի սրբագրութեան կարօտ տեղեր, և որ աւելի լաւ կլինէր՝ եթէ գրուածքը վերափոխուած լինէր պատմական վէպի, Վ. Սկոտափի վէպերի պէտ։ Պուշկինը պատասխանեց, որ չնորհակալութեամբ է ընդունում ամենողորմած կարծիքը իւր գրուածքի մասին և ափսոսում է միայն, որ իւր ողիներից վեր է փոփոխել արդէն մէկ անգամ գրածը։ Իսկ ողբերգութիւնը պահեց։ Հեշտ է երեակալել, թէ ալս լարաբերութիւնները Բենկենդորֆի հետ ինչ հոգեկան վիճակի մէջ էին զնում բանաստեղծին, որ աքսորանքից ազատուելու միջոցին այսպիսի նպատակ էր զնում իրան։ «Վեր կաց, մարգարէ, և տես և լսիր. լցուիր իմ (Աստու-

ծոլ) կամքով, և շրջելով ծով ու ցամաք՝ վառիք խօսքով մարդկանց սրտերը: — Պուշկինը, երեխ միայն պատուիրած աշխատութիւնից աղատուելու համար՝ շտապով դրեց մի համառօտ գեկուցում կրթութեան մասին: Այստեղ նա իրար հետ հրեակամ է նոր պետական գործիչների հայեցքները և իւր աղատամիտ ձգտումները: Բացատրելով գեղաբրիսաների երեան գալը ճշմարիտ կրթութեան պակասութեամբ՝ Պուշկինը ասում է. «միայն լուսաւորութիւնը կարող է զսպել նոր անմտութիւնները, հասարակական նոր աղէտները», և առաջարկում է ամբողջ երիտասարդութիւնը քաշել պետութեան հսկողութեանը ենթարկուած հասարակական կրթարանները, սահմանափակել մասնաւոր գպարցների թիւը, գոնէ երեք տարով երկարացնել ուսման գասընթացքը, չարգելել զնալ արտասահման, որովհետեւ այնտեղի համալսարանների կրթութիւնը անօրինակ աւելի բարձր է տնալին նահապետականից. «Լեզուները շատ ժամանակ են խլում. բնչ հարկ կայ լատիներէն կամ լունարէն սովորեցնել: Թուլատրելի՞ է շռայլութիւնը այնտեղ՝ որտեղ զգացւում է անհրաժեշտի պակասութիւն»: Նա կարեսր է գտնում արդելել աշակերտներին պարապել դրականութեամբ և հրատարակել ձեռագիր թերթեր. խորհուրդ է տալիս լաւագուն աշակերտների միջոցով հսկել ընկերութիւնը վրայ. ծեծը վերացնել, զարգացնել

լով աշակերտների մէջ պատուի զգացմունք. վատվարքի տէր աշակերտներին հեռացնել դպրոցից, բայց պատմել երիտասարդին կամ հասակաւոր մարդուն պատանի ժամանակ գործած լանցանքի համար՝ սարսափելի է և դժբախտաբար շատ է մեր մէջ սովորականու: Այս մտքերը ցոյց են տալիս, որ Պուշկինի ոգին գեռ գտնւում էր սարսափի աղղեցութեան տակ և շատ հեռու էր առաջաղիմական կոչուելոց: Այնուամենայնիւ թենկենդորՓը յալտնում էր Պուշկինին, որ Նորին Մեծութիւնը հաճութեամբ կարգաց զեկուցագիրը, միայն բարեհամեց նկատել, որ «Զեր ընդունած այն կանոնը, իբր թէ լուսաւորութիւնն ու հանձարը կատարելութեան բացառիկ հիմունքներն են՝ հասարակական հանգստութեան համար վտանգաւոր սկզբունք է, որը ձեզ ինքներիդ հասցըեց անդունդիեղը և գլորեց նրա մէջ այնչափ բաղմաթիւ երիտասարդներին: Բարովականութիւնը, ջանասէր ծառակութիւնը, եռանդը պէտք է գերադասել անփորձ, անբարովական և անօգուտ լուսաւորութիւնից :

Մի քանի ամսից լետով, 1827 թ. ապրիլին, թենկենդորՓը, թուլատութիւն տալով նրան, համաձայն նրա խնդիրքի, Պետերբուրգ գալու՝ աւելացնում էր. «Նորին Մեծութիւնը չէ կասկածում, որ ուսուազնուականի կալարին սուած ազնիւ խօսքը, իրան շիտակութեամբ և վաւելուչ կերպ պակասութիւնը, անբարովական և անօգուտ լուսաւորութիւնից :

Ակադիանէ Երբորդ բաժանմունքի կառավարիչը հետեւմ էր Պուշկինի ոչ միայն ամեն քաղաքութիւն, այլ և խրատներ էր տալիս ազագացի համար, Մինոր զէպք էլ սաստկացրեց Պուշկինի դրութեան դաւանութիւնը: Ոստիկանութեան ձեռքն ընկաւ Պուշկինի «Անդրէ Շենիէ» (Փրանսիական բանաստեղծ, որ գլխատուեց Մեծ լեզափոխութեան ժամանակ), դեկտեմբերի 14-ից շատ առաջ գրած ոտանաւորի այն հատուածը, որը գրաքննիչը թուլ չէր տուել. գտնուած օրինակը կրում էր «դեկտեմբերի 14-ի առ.թիւ» մակագրութիւն: Բանտարկուեցին մի ուսանող և երկու սպակ. սկսուեց քննութիւն, ուր հրաւիրուեց Պուշկինն էլ ցուցմունքներ տալու: Թէ Պուշկինը բացատրեց, որ ոտանաւորը ոչ մի կապ չունի դեկտեմբերի հետ՝ այնու ամենալնիւ պետական խորհուրդը որոշեց գաղտնի հակողութեան ենթարկել նրան: Բայց այս որոշումը յալտարարուեց բանաստեղծին միան երկու և կէս տարուց իետու, 1831 թ., հարսանիքից մի քանի օր առաջ:

Բոլոր այս անախորժութիւնները սաստիկ պղտորում էին Պուշկինի տրամադրութիւնը, և նա լաճախ լինում էր մելամաղձոտ և նեարդակին: Պետերբուրգում նա գտաւ իւր մին բարեկամներից մի քանիսին, բայց հասարակութիւնը նրան թուաց գուրկ ամեն աղնիւ շահերից. «Քաղաքականութիւնն ու դրականութիւնը նրանց համար գոլութիւն չու-

նին, — գրում էր նա. — սրամտութիւնը վաղուց հայածուած է, որպէս թեթևամտութիւն. ինչի՞ մասին նրանք խօսեն: Մեր երկու մալրաքաղաքների տաղտկութիւնն ու լիմարութիւնը միաշափ են, թէ և տարբեր: Ես գերազասում եմ Տրիգորսկինո: Պուշկինը փորձեց մոռանալ սիրտը կրծող թախիծը աշխարհիկ զուարձութիւնների, թղթախաղի և խրախնանքների մէջ, բայց ոչնչով չէր կարողանում լըցնել լախն հասարակական կեանքի պահանջը: Տափակամիս մարդիկ խնդում էին, որ կարող են ստորացնել նրան այս լափտակութեանց համար և նախանձով ոտնակոխ անել հանճարը: Նա միայն պատասխանում էր, թէ քանի որ Ապոլլոնը չէ կանչում պօէտին նուիրական զոհաբերութեան համար՝ նա «աշխարհի չնչին որդոց մէջ գուցէ ամենաչնչինն է»: Բայց հէնց որ աստուածացին ձախնը գիշչում է նրա գիւրազգած ականչին՝ նրա հոգին ցնցում է. նա թախծում է աշխարհի զրօսանքների մէջ, չէ լսում մարդկակին աղմուկը, փախչում է նրանցից և առանձնանում իւր ստեղծագործութեան հետո: («Պօթե»): Ակադիա, 1827 թ. աշնանը, «զգալով իւր մէջ լանդեր», Պուշկինը փախաւ Միխայլովսկի և ակնտեղ սկսեց գրել իւր «Պետրոս Մեծի արագը», ուր նա ցոյց տուեց ահազին հմտութիւն՝ լրջօրէն, առանց չափաղանցութիւնների, օրիեկտիւ կերպով պատմելու արուեստի մէջ: Զմեռը նա կրկին Պետերբուրգումն էր, բայց

նրա համար մաքրաքաղաքի կեանքի աղմուկն ու շարժումը աւելի և աւելի անտանելի էին դառնում: Նրան խեղդում էր քաղաքը, ուր «գերութեան ոգին է, սառնութիւնն ու որձաքարը». Նրա սովորական տրամադրութիւնը դառնում են անձկութիւնն ու ձանձրովթը: «Ձանձրովթը մտածող էակի յատկանիշներից մէկն է», ասում է նա լաճախ: Այս մի անպիսի մարդու ձանձրովթ է, որը ընթերցանութեամբ զարգացած միտք ունենալով՝ չէ կարողանում գտնել ոգու բոլոր ուժերը լարող գործունեութիւն:

Այսպիսի հոգեկան վիճակի մէջ նա կարծեալուր համար տեղ չէր գտնում: Մէկ նա երեսում էր կեանքի որոնում էր մաքրաքաղաքի աղմուկն ու մէկ կրկին որոնում էր մաքրաքաղաքի աղմուկն ու կեանքը: Շուրջը ընկերների շրջանը նօսրանում էր քաղաքությունը գնաց, զգում էր, որ երիտասարդութիւնը անց է կացրել «պարապութեան, անզուսպ խնջուքների, կորստաբեր անմիտ աղասութեան, գերութեան, աղքատութեան, օտար անսպատների մէջ»: Յաճախ, գալով Մոսկուա, նա փակում էր իւր ընկերոջ տանը, և նրան զօռով էին ստիպում գոնէ հարկաւոր ատցելութիւններն անել: Նա պահանջ էր զգում մի կերպ վերջ զնելու այս հոգեամարկան վարանումներին: 1828 թ. գարնանը նա կան վարանումներին: 1828 թ. գարնանը նա բենկենդորֆի միջոցով դիմեց կայսրին, խնդրելով՝ որ թուլ տրուի իրան մտնել այն զօրքի մէջ՝ որ

որ գնում էր Գանուբի կողմերը, տաճիկների դէմ, բայց մերժում ստացաւ: Այն ժամանակ նա սկսեց խնդրել թողլուութիւն Պարիզ գնալու, բայց նրան վախեցրին, թէ այս խնդրագիրը վատ հետեանքներ կարող է ունենալ և համոզեցին իետ առնել: Եւ ահա նա յուսահատուած, իւր ծննդեան տարեգարձի օրը, 1828 թ. մայիսի 26-ին զրում էր: «Ձուր նուէր, պատահական նուէր, կեանք, ինչու ես ինձ տրուած: Առջևս չկայ նպատակ: Սիրոս՝ գատարի, միտքս՝ պարապ, և մաշում է ինձ անձկութեամբ կեանքի ժխորն միտպաղազ»: Սակայն այս յուսահատութիւնը բովէական էր: իսկապէս կեանքի նպատակը նրա համար կորած չէր—նպատակը՝ ստեղծագործութիւնների մէջն էր, որոնք պէտք է ազդէին նոր սերունդի բարոյական և գեղարության զարգացման վրա: Պուշկինը արդանում էր, նա աւելի և աւելի հոգ էր տանում իւր բարոյական կատարելագործմանը, բայց այս կատարելագործումը անկարելի էր համարում՝ առանց լաւ ըմբռնելու անձնական կեանքի կապը հասարակական և ազգային կեանքի հետ, ուստի ուշադրութեամբ ուսումնասիրում էր անցեալը: «Նախնիներին արհամարհելը անբարոյականութեան առաջին նշանն է», զրում էր նա: Նա պարծենում էր իւր տոհմի հնութեամբ, բայց այս նրան չէր արգելում միենոն ժամանակ պնդելու, որ «կան աղնուատոհմութիւնից աւելի բարձր արժանաւու-

բութիւններ—անձնական արժանաւորութիւններ»: Նա իւր մոքի մէջ քննելով դեկաբրիստների անազողութիւնը՝ կարծես եկաւ այն եղբակացութեան, որ նրանք չեին ծանօթ կեանքին և «իրերի որդին»: Այժմ այս «իրերի որդը» նրան առանձնապէս զբաղեցնում էր, և նրա մէջ սկսեց կաղմակերպուել լատուկ քաղաքական աշխարհականութիւնը: Իսկ մինչ ալդ՝ անցեալի ուսումնակրութիւնը արտախայտուեց նոր պատմական քերթուածով, «Պոլտաւակով», որը նա վերջացրեց երկու շաբաթուաէ ընթացքում: Այստեղ նա կամենում էր պատկերացնել ծերունի հետման Մագեպալի սէրը: Զանազան զրքերի նախապատրաստական ընթերցանութիւնը ընդարձակեց նրա նկարագրութեան շրջանակը, և սիրահարական քերթուածը բնականօրէն հիւսուեց ուսուաց պատմութեան ամենանշանաւոր գէպքերից մէկի—Պոլտաւակի ճակատամարտի հետ: Բանաստեղծը ուզում էր «մտցնել ընթերցողին այն պատմական լան մըթնոլորտը, որը միան՝ պարզաբանում է Մազեպալի անձնաւորութեան նշանակութիւնը»: Նա միենովն ժամանակ ուղում էր ապացուցանել, որ միան ընդհանուրի օգտին ծառակող հերոսներն են հետքեր թողնում լաջորդ սերունդների կեանքի մէջ: Այս կրկնակի նպատակների պատճառով քերթուածը չունի ամբողջութիւն, բայց պատկերների պայծառութեամբ շատ աւելի բարձր է նախորդ պոէմա-

ներից: «Պոլտաւան» լոյս տեսաւ 1829 թ. սկզբում և աջողութիւն չունեցաւ: Նրա մէջ ոչ «քչճանաչեց առաջուաէ Պուչկինին: Փալուն, կրակու ոտանաւորը տեղի էր տուել կտրուկ, խորիմաստ ոտանաւորին, որը զարմացնում էր իւր որոշ ներկերով: Քննադատներից շատ քչերը կարողացան արժանաւոր կերպով գնահատել նոր երկասիրութիւնը. մոծ մասը օգտուեց հանգամանքից, որպէսովի լարձակուի Պուչկինի վրաէ, որին սկսել էին թշնամանալ այն օրից ի վեր՝ երբ նա մօտեցել էր մի խմբազրութեան և իւր ընկերների հետ կազմել էր առանձին զրական կուսակցութիւն:

Այս լարձակումները անկասկած ազդում էին բանաստեղծի վրայ: Նրա տրամադրութիւնը կրկին ձնշուած էր: Նա յանկարծ, ոչ «քին ոչինչ չասելով», անսպասելի կերպով գնաց գլուզ, այնտեղից Սոսկուա և ասկա կովկաս: Իւր ասելով՝ նա գնացել էր հանքալին ջրերը բժշկուելու, բայց իսկապէս նա ուզում էր լինել Պասկեվչի զօրքի մէջ, որը պատերազմելու էր Ասիական Տաճկաստանում: Նա սիրահարուել էր օր. Նատալիա Գոնչարովին, որի անբիծ գեղեցկութիւնը հիացրել էր նրան: «Երբ ես տեսակ նրան առաջին անգամ՝ նրա գեղեցկութիւնը նոր էին սկսում նկատել հասարակութեան մէջ. ես նրան սիրեցի, զլուխս պղտորուեցի, ես խնդրեցի նրա ձեռքը: Զեր պատասխանը, թէե անորոշ էր՝ քիչ միաց ինձ խելագա-

բեցնէր: «Նոյն գիշերն և եթ ես հեռացակ զօրաքանակը կհարցնէք, ինչու: Նրգում եմ, ի՞նքս էլ չեմ կարող ասել, բայց ակամայ անձկութիւնը քըշում էր ինձ Մոսկովայից», զրում էր նա օրիորդի մօրը: Յունիսի սկզբում նա Թիֆլիսումն էր, ուստինենալով գտնել այնտեղ իւր կե եղբօրը, «րը ծառալում էր Նիժեգորոդսկի վաշտի մէջ, բայց զօրքը արդէն սկսել էր իւր արշաւանքը: Պասկեփչից թոլլտութիւն ստանալով, նա լունիսի 13-ին հասաւ ոռւսաց բանակը, որը գտնւում էր Սովորանցուխի մօտ, Կարսաչափի ափին, և այնուհետեւ ականատես եղաւ բոլոր ճակատամարտներին և ներկայ էր էրզրումի առմանը լունիսի 27-ին: Պասկեփչը սիրալիր կերպով ընդունեց բանսաստեղծին և հրամակեց նրա վրանը իւր վրանի մօտ կանգնեցնել: Պուշկինը սիրում էր թափառել բանակի մէջ և ամեն մի ընդհարումի ժամանակ առաջ էր ընկնում և կանգնում ուղղակի գնդակների դիմաց: Պասկեփչը այս չէր հաւանում, ինչպէս և այն, որ նա լաճախ տեսնում էր զօրքի մէջ գտնուած դեկաբրիսաների հետ, որոնք իբրև հասարակ զինուոր՝ աքսորուած էին Կովկաս: Նա վերջապէս լայտարարեց, որ բանսաստեղծի կեանքը հարկաւոր է Ռուսաստանի համար, և խորհուրդ տուեց իսկոյն հեռանալ զօրաբանակից: Յուլիսի 19-ին Պուշկինը էրզրումից մեկնեց, և օգոստոսի 1-ին նա կրկին Թիֆլիսումն էր, որտեղից շարունակեց ճանապարհը

օգոստոսի 6-ին: «Տիֆլիսկի Բնաւառք» լրագիրը, յախնելով բանաստեղծի գալուստը և ապա մեկնումը՝ լոյս էր լայտնում, որ «Պուշկինի հանձարը, Կովկասի լիշողութիւններով զրդուած՝ անկասկած կրնայէ մեր գրականութեանը նոր գողարիկ նուէրներ»: Նոյնը սպասում էին և մայրաքաղաքի լրագիրներն ու ընթերցողները: Պուշկինին զալրացնում էր օտարների ալս ցանկութիւնը իւր հոգու մէջ մտնելու. կարծես՝ իւր ազատութիւնն էր ուսնաբռում: Վերադարձին նա մտաւ Մոսկուա, կրկին ացելեց Գոնչարովներին, բայց տիկինը նրան սառն ընդունեց, և նա խկոյն շտապեց զիւղ, իսկ յետով անցաւ Պետերբուրգ: Կովկասիան ճանապարհորդութեան տպաւորութիւնների պտուղներ էին «Ճանապարհորդութիւն զէպի էրզրում» լիշտակարանը, մի քանի մանր օտանաւորներ և մի քերթուած «Գալութ», որը սական նա չվերջացրեց: Բայց մնացել է քերթուածի ծրագիրը, որից կարելի էր տեսնել, թէ որպիսի փոփոխութիւն էր կատարուել Պուշկինի մտաշխարհի և բարոյական կեանքի մէջ: Հերոսը վերցրած է արդէն նոյն տեղական մթնոլորտից, մի չերքէզ, որի մէջ ծագել են նոր զգացմունքներ: Նա չէ կողոպտում ճանապարհին պատահած վաճառականին, չէ սպանում իւր եղբօր սպանողին, որին անզէն և վիրաւորուած է գտել, և ծնողները, ամբողջ համալնքը նրանից էրես են շուռ տալիս, նոյն-իսկ սիրելի աղջիկը:

Պուշկինը նրան վերջը քրիստոնեալ է դարձնում։ Նա սկսում է նոր բարոյականութիւն քարոզել հայրենակիցների մէջ, դառնալով անտեղ մարդասիրութեան կարապետ։ Գալուքը մեռնում է, կռուելով ոռումների դէմ։

Բենկենդորֆին սաստիկ անհանգստացրել էր Պուշկինի լանկարծակի ճանապարհորդութիւնը, և իւր ինքնագլուխ վարմունքի համար բանասեղծը խիստ լանդիմանութիւն ստացաւ։ Նա այժմ աւելի լաճախ սկսեց մտածել մահի մասին, և այս սիաքը նրան ամեն տեղ հալածում էր։ Խռնվարին նա կրկին թուլառութիւն էր խնդրում բենկենդորֆից ուղերուուելու ֆրանսիա կամ Խտալիա, իսկ եթէ աս անկարելի է՝ դոնէ Զինաստան, ուր այդ միջոցին պիտի զնար ոռոսաց մի դեսպանութիւն։ Նրան միախն նախատեցին, թէ կամենում է հակառակել թաղաւորի կամքին, որից անքան երախտիք է տեսել։ Պուչկինը պիտի լուէր և ներողութիւն խնդրէր։ Նրա հոդեկան անհանգստութիւնը չդադարեց, չնայելով որ նա այդ միջոցին սկսեց ամենախն եռանդով աշխատակցել «Լիտերատурная газета» թերթին։ «Московский Вестник»-ը խափանուել էր, Պուչկինը, Ժուկովսկին, Վեսպենսկին, Կրիլովը, Դել'վիզը և ուրիշ նշանաւոր հեղինակներ միացել հիմնել էին Պետերբուրգում «Литературная газета», որի խմբագիր ընտրուել էր Դել'վիզը։ Նպատակն էր ի մի հաւաքել այս բոլոր

գրողներին, որոնք չեին կարող աշխատակցել Պետերբուրգի և Մոսկովայի թերթերից ոչ մէկի մէջ, և ստեղծել լուրջ քննադատութիւն, որ գոյութիւն չունէր ոռուսաց գրականութեան մէջ։ Նոր հանգէսը պէտք է կռիւ մուշտ գլխաւորապէս Գրեչի և Բուլգարինի գէմ։ Այս լուկը հրապարակախօսները մենաշնորհ ունէին իրանց «Съверная Пчела» լուսագրի և «Сынъ Отечества» ամսաթերթի մէջ քաղաքան լուրեր հաղորդելու, մնացած թերթերին այս արգելուած էր։ Այս մենաշնորհի պատճառով նրանք ունէին բազմաթիւ բաժանորդներ և նշանաւոր արդիւնք։ Հրատարակիչները բնականաբար աշխատում էին ամեն միջոց գործ զնել այս մենաշնորհը պահպանելու համար։ Նրանք հալածում էին անկախ հեղինակներին, քսութիւն էին անում հռչակ ստացածներին։ Եթէ սրանք լռում էին իրանց մասին, իսկ եթէ հակառակ էին խօսում՝ լռուանքներ, զրպարտութիւններ էին թափում նրանց զլիսին, հովանաւորութիւնն էին ցուց տալիս ամեն մի չնչին և միջակ ընդունակութեան, որ նրանց թերի տակ էր մտնում, և լայտարարում էին նրան հանձար։ Երբ բացարձակ միջոցներով անկայուղ էին լինում լաղթել հակառակորդին՝ նրանք, մանաւանդ թուլգարինը, դիմում էին գաղտնի ճանապարհների և Բենկենդորֆին մօտիկ լինելով՝ ստուեր էին ծդում հակառակորդի քաղաքական վասահութեան վրա։ Այս թերթերը խաղում էին

գրական լրտեսների դեր: Պուշկինը դառաւ նոր հրատարակութեան ներշնչողը: Նա կտրուկ և կծու ոճով, զանազան կեղծ անունների տակ, լողուածների էր տպագրում և մերկացնում էր հասարակութեան առաջ բուզզարինի և նրա ընկերների խալական բարուական պատկերը: Նա ձգտում էր ձիւտ քննադատական հայեացքներ մոցնել գրականութեան մէջ և անկողմնապահ կերպով պարզաբանել ամեն գրական գործչի արժանաւորութիւնները, հակառակել քմահան անձնական կարծիքներին և կազմել դիտութեան ու գրականութեան ընտիր ներկաւացուցիչների օգնութեամբ հաստատ հասարակական կարծիք: Նա չէր ճանաչում ամբոխի իրաւունքը՝ գեղարուեստական երկերը վերջնականապէս դատելու—այս իրաւունքը նա վերապահում էր ընտրեալ դատաւորներին, այն է՝ դիտնականներին և գրականադէմներին: Իւր քաղաքական հայեացքների մէջ նա պաշտպանում էր ազնուականութիւնը, որի նշանակութիւնը սակայն նա ինքնօրինակ կերպով էր հասկանում: Ազնուականները արտօնուած դասակարդ են, ասում էր նա, բայց հէնց այս արտօնութիւնների չնորհիւ, նրանք պիտի լինին ժողովրդի հզօր պաշտպաններ և նրա անմիջական ներկաւացուցիչներ կառավարութեան առաջ: Ազնուականները «պիտի իւրացնեն անկախութիւն, քաջութիւն, ազնուութիւն, ընդհանրապէս պատիւ», բայց ազնուականութիւնը կորչում է,

մեռնում է այնտեղ՝ ուր նա դառնում է եսասէր, փակ դասակարգ—«կաստ», կամ երբ իւր բարօրութիւնը հիմնում է ժողովրդի ստրկութեան վրայ:

Բուլգարինը զգաց, թէ որպիսի վտանգ է սպառնում իւր թերթին նոր հրատարակութեան կողմից, և սկսեց նախ լրագրական լողուածներով ընդդիմագրել, մեղադրելով հակառակորդներին, թէ նրանք կամնենում են «արիստոկրատիամի սկզբունքը» հաստատել ուսւաց կեանքի մէջ: Բայց Պուշկինը, որ շատ լաճախ Բուլգարինին համեմատում էր Փրանսիական հռչակաւոր լրտես Վիդոկի հետ, այնպիսի կտրուկ պատասխան տուեց, որ նա վախեցաւ և աշխատեց, որպէսզի կառավարութիւնից արգելուի այլ ևս այդ հարցի մասին վիճել: Հազիւմի տարի բոլորելով՝ «Լիտերատ. Գազետ»-ն խափանուեց: Սա զգալի կորուստ էր Պուշկինի ընկերների շրջանի համար: Դե՛վիդի վրայ այնպէս ազգեցին բենկենդորֆի սպառնալիքները, որ նա ալնուհետեւ հիւանդացաւ և մեռաւ: Այս լուրը Պուշկինը ստացաւ Մոսկուայում, իւր հարսանիքից մի քանի օր առաջ: Նա զրում էր Պլիտներին: «Ոչ ոք աշխարհիս երեսին ինձ մօտիկ չէ եղել Դե՛վիդի պէս: Առանց նրան մենք կարծես որբացած ենք: Խոնչ անենք—պիտի համաձայնուենք, հանգուցեալ: Ոզչ եղիր—եալ պիտի համաձայնի մնալու: Վերջին խօսքերի մէջ երեսում է Պուշկինին լատուկ սովորութիւնը՝

դւմալրելու կեանքի պատահարներին հաշտութով
անհրաժեշտի հետ:

1830 թ. գարնութը Պուշկինը Պետերբուր-
գում լսեց, որ Նատալիա Գոնչարովը իւր վեղեց-
կութեամբ փալլում է և հիացնում է ամենքին այն
տօնախմբութիւններին և զուարծութիւններին, ո-
րոնք տեղի էին ունենում Մոսկուայում կաւսերա-
կան ընտանիքի ացելութեան առիթով: Նա դլուխը
կորցրած շտապեց Մոսկուա և վերանորոգեց իւր
հետապնդումները: Բենկենդորֆը բացատրութիւն
պահանջեց, թէ ինչու է առանց թուլտութեան
հետ ացել Պետերբուրգից, աւելացնելով, որ «ա»
ապագակ բոլոր հետևանքները նա պիտի վերագրէ
իւր սեփական վարմունքին: (Դրանից ա-
ռաջ Պուշկինը լանդիմանութիւն էր ստացել, ինչու
մը պարահանդէսի եկել էր քրակով, և ոչ թէ իւր
նահանդի աղնուականի նշանազգեստով): Պուշկինը
սկսուախանեց, որ 1826 թուից նա, ձմեռը ասց
կացնելով Մոսկուայում, իսկ աշունը զիւղում՝ եր-
բէք թուլտութիւն չէ խնդրել, միւնոյն ժամա-
նակ ասում էր, թէ սրբիսի դառնութիւն են պատ-
ճառում իրան այս լանդիմանութիւնները, և ակ-
նարիելով Բուլգարինի վրայ աւելացնում էր, որ
բենկենդորֆն է իւր միակ պաշտպանը: «Եթէ դուք
վաղը մինհստր չլինեք, միւս օրը ինձ բանտը կը
նստացնեն»:

1830 թ. ապրիլի 21-ին Զատկի օրը Պուշ-

կինը նորից առաջարկութիւն արեց օր. Գոնչա-
րովին (ծն. 1813)՝ այս անգամ առաջարկութիւնը
ընդունուեց: Այս ընտանիքը պատկանում էր հա-
սարակական բարձր շրջանին, բայց նիւթապէս քայ-
քալուած էր: Սրա զլուխն էր պապը, որի արդիւ-
նաբերական ձեռնարկութիւնը տապալուելու վրաց
էր, առձեռն դրամ չունենալու պատճառով: Գոն-
չարովները, գիտենալով որ Պուշկինը մօտիկ է
պալատին՝ կամենում էին օգտուել նրա կապերից
իրանց դրամական գործերը կարգի բերելու հա-
մար և հարսանիքը չէին շտապեցնում, իսկ իրանց
աղջկան աշխատում էին մի փոքր հեռու պատել
փեսալից: Պուշկինը գիտէր, որ պաակում է մի
աղջկակ հետ՝ որը սովոր է աշխարհիկ կեանքին:
«Ես ոչ մի կերպ չեմ թոյլ տակ, — գրում էր նա, — որ
իմ կիրար զրկանքներ կրէ, որ նա չերեալ ախտեղ՝
ուր նա պէտք է փալի, զուարձանալ: Նա իրա-
ւունք ունի այդ պահանջելու: Նրան հածելին ա-
նելու համար պատրաստ եմ զոհել բոլոր սովորու-
թիւններս, ամբողջ կեանքս»: Այս բանի համար
պէտք էր նշանաւոր եկամուտ ունենալ: Եւ ահա
նա աշխատում է «Բորիս Գոդունովի» տպագրու-
թեան թուլտութիւնը ստանալ, մի քանի բառեր
և դարձուածքներ փոխելով ողբերգութեան մէջ, և
շտապում է Պետերբուրգ՝ հօր հետ խօսելու իւր ա-
պագակ ընտանիքի նիւթական վիճակի մասին:
Հայրը նրան բաժին հանեց իւր Բոլդինօ կալուած-

քից (Նիմնի-Նովգորոդի նահանգ), և օգոստոսին
Պոչկինը ուղարուեց անտեղ՝ ժառանգութեան
թղթերը ձեռք բերելու նպատակով. այս թղթերը
նրան հարկաւոր էին կալուածքը դրաւ զնելու հա-
մար. Աւտ ժամանակ խորեան արդէն հասել էր
Նիմնի-Նովգորոդի նահանգը և մօտենում էր Մոս-
կուալին. Բոլղինոն շրջապատուեց կարանտի-
նով. Պուշկինը մի քանի անգամ փորձեց դուրս
գալ այս ծուլակից, բայց իդուր ։ Նա ստիպուեց
աշունը և ձմեռը անց կացնել գիւղում. Այս ամիս-
ները նրա ստեղծագործութեան ամենաարդինաւոր
միջոցն էին. Այստեղ նա վերջացրեց Օնեգինը,
գրեց «Ժշտ ասպետ», «Մոցարտ և Սալիերի», «Քարե-
հիւր», «Կոլոմնալի տնակը», «Բելկինի վէպիկներ»
(5 հատ), «Խնջուք ժանտախտի ժամանակը և մօտ-
երեսուն մանր ոտանաւորներ». Այս բոլոր գրուածք-
ները հասունացած տաղանդի արտադրութիւններ
են բանաստեղծը կատարելապէս ինքնուրովն է և
իրականութեան հետևող. Նա աւելի և աւելի լա-
ճախ է դիմում ալժմ արձակ ոճին, նախատեսելով
վէպի ապագայ մեծ նշանակութիւնը:

Ընթերցող հասարակութիւնը ծանօթանում էր
«Օնեգինի» հետ մաս-մաս, —և վառ հետաքրքրու-
թեամբ հետեւում էր վէպի բովանդակութեան զար-
գացմանը. Եւդ. Օնեգինը նոյն Ալէկոն է, միան թէ
իրականացրած, ոռւսական շրջանի մէջ տեղափոխ-
ուած, իւր բոլոր լաւ և վատ կողմերով. Վէպի բո-

վանդակութիւնը շատ պարզ է. գաւառական օրիորդը
սիրահարուում է մարդաքաղաքից գիւղ եկած առիւ-
ծին, որը սակայն նրան չէ հասկանում և խրատ-
ներ է տալիս ուրիշ անգամ զգուշ լինելու. Ցետով
ալդ աղջիկը, Տատեանան, մարդու է գնում մի գե-
ներալի և դառնում է աշխարհիկ կին. Օնեգինը
այս անգամ ինքն է նրան սիրահարուում, բայց մեր-
ժում է ստանում. Օնեգինը սովորական ռուս աղ-
նուական է, որը քիչ-շատ կարդացել է, վազ է
ծծել կեանքի հիւթը և սկսել է ձանձրովթ ու անձ-
կութիւն զգալ. Ոչ մի տեղ նա զործ չէ գտնում,
կեանքը նրա համար կորցնում է իւր հրապուրը:
Բանաստեղծը ցուց է տալիս Օնեգինի կեանքի
ոչնչութիւնը, նրա եսականութիւնը, միաժամա-
նակ բայրոնական հերոսների ազգեցութիւնը նրա
վրայ, բայց անու ամենանիւ ընթերցողը միշտ կա-
րեկցում է նրան, իբրև աննպատակ գոյութեամբ
մաշուղ մարդու. Տատեանալի պատկերը Պուշկինի
նկարագրած կանացի պատկերներից լաւագոյնն է,
և նրա վերջին պատասխանը Օնեգինին—աՅս ձեզ
սիրում եմ—ինչու ծածկեմ,—բայց ես ուրիշին եմ
տրուած և լավտեան նրան հաւատարիմ կմնամ,
համարուում է ռուս կնոջ անձնազոհութեան նշա-
նաբան:

Պուշկինի այս շրջանի գրուածքների մասին
կարելի է ամբողջապէս ասել այն՝ ինչ որ լեհացի
բանաստեղծ Միցկեիչը գրում էր նրա մահագուժի

մէջ.—«Եթէ գոյութիւն չունենալին Բալրոնի ստեղ.
ծագործութիւնները՝ Պուշկինին կհրատարակիէին
մեր զարի առաջնակարգ բանաստեղծ»։ Միցկեւիչը
մի քանի ժամանակ անց էր կացրել Մոսկուակում
և Պետերբուրգում Պուշկինի հետ. շատ անդամ
նրանք խօսել էին «ապագայ ժամանակների մասին,
երբ ազգերը վէճերը մոռանալով՝ կմիանան մեծ
ընտանիքի մէջ»...

Վերադառնալով Մոսկուա՝ Պուշկինը գրաւ
դրեց իւր կալուածքը Խնամակալական խորհուրդի
մէջ 38 հազարով, որոնցից 11 հազարը տուեց զո-
քանչին իւր հարսնացուի օժիտը պատրաստելու
համար, իսկ 10 հազարը փոխ տուեց իւր մի ընկե-
րոջը, որը նեղ դրութեան մէջ էր. «հաստատ փող
է»... 1831 թ. փետրվարի 18-ին տեղի ունեցաւ
նրա պսակադրութիւնը Մոսկուակում։

Չ.

ՊՈՒՇԿԻՆԻ ԸՄ ԱԽՍԵՔՆԸ

1831—1837

Կեանքը Յարսկոյէ Սելյուսի Փուկովսկու ազգեցութիւնը։
Պաշտօնական դրամին 1,6հական ապստամբութիւնն Քա-
զաքան լրագրի ծրագիր Պետրոս Մեծի պատմութիւնը
գրելու մտադրութիւնն Անդրեան Վաճառք։ Հասարակական
գլուքը Դրամական խնդիրները Հոգեկան վիճակը Գրական
պարագմանները։ Համարական մասնակիութիւն և ման-
ապարագմանները։ Համարական մասնակիութիւն և ման-

Պսակուելուց յետով Պուշկինը մինչև մայիս
մասց Մոսկուակում, իսկ յետով տեղափոխուեց Յար-
սկոյէ Սելօ, մասամբ՝ զոքանչից հետու լինելու հա-
մար։ Այստեղ էր արքունիքը, որի հետ և թագա-
ժառանգի դաստիարակ Փուկովսկին։ Շուտով Պե-
տերբուրգում խոլերա տարածուեց, հազոր բակցու-
թիւնը մալրաքաղաքի հետ դժուարացաւ, և Պուշ-
կինը եօթը ամիս անց կացրեց նեղ բարեկամական
շրջանի մէջ, լիչելով մանկութեան երազ օրերը և
վայելելով ընտանեկան երջանկութիւն։ Այստեղ
նա մտերմացաւ և ապագայ երեսելի գրող Գոդոլի

հետ: Յաճախակի տեսակցութիւնները ժուկովսկու հետ՝ աւելի մօտեցրին նրանց, և Պուշկինը մրցնելով իւր «ուսուցչի» հետ՝ զրեց չորս հեքիաթներ, որոնք հրատարակուեցին Ժուկովսկու հեքիաթների հետ մէկ գրքով։ այստեղ կրկին «աշակերտը» լաղթեց «ուսուցչին»։ Բայց Ժուկովսկու ազդեցութիւնը աւելի մեծ էր ուրիշ տեսակէտով։ Պուշկինը այժմ արդէն ամուսնացած էր, լոգնած էր նախկին ասարիների հալածանքներից, հանգստութիւն էր որոնում և միենովն ժամանակ կամենում էր ստեղծել իւր ընտանիքի համար որոշ հասարակական դիրք։ Բայց հասարակութիւնը իւր անդամ չէր ճանաչում մի գրողի՝ որը մեծ աստիճաններ չունէր կամ հարուստ չէր։ Եւ ահա ընկերները վճռեցին ձեռք բերել նրա համար քաղաքական լրագրի իրաւունք և նշանակել տալ նրան արքունի պատմագիր, որի պաշտօնը Կարամզինի մահից լետոյ թափուր էր։ Այս առաջարկութիւնները համապատասխանում էին Պուշկինի գաղտնի ցանկութիւններին։ Վաղուց էր նա երազում սեփական թերթուննենալու մասին և ցանկանում էր գրել Պետրոս Մեծի պատմութիւնը, որի պատկերը միշտ նրան հիացրել էր։ 1831 թ. լուլսին նա դիմում է Ռենկենդորֆին, ինդրելով թուլ տալ իրան հրատարակել քաղաքական-դրական հանդէս և ալցելել պետական գիւանատներն ու գրադարանները՝ Պետրոս Մեծի և նրա լաջորդների, մինչև Պետրոս Գ,

պատմութիւնը գրելու համար։ «Եթէ թագաւոր կամրջ կամենայ իմ գրիչը զործ դնել քաղաքական յօդուածների համար՝ ես կաշխատեմ ճշտութեամբ և եռանդով կատարել նրա կամքը»։ Այդ ժամանակուական դէպքերը այն վիճակի մէջ էին, որ գրգում էին մտածող ուսուներին խօսելու։

Նոր էր վերջացել Ֆրանսիակում լուիսեան գեղագիտութիւնը, և Լեհաստանում սկսուել էր ապստամբութիւն ուսուների դէմ։ «Մտածելու բան կար։ Ժողովրդական կամքի և ազգայնութեան ոսն-հարուստ սկզբունքի դրօշակի տակ (ասում է Ան-նենկովը), Ֆրանսիան, որ նոր էր այդ սկզբունքը երկրում լայտարարել՝ կանգնեց զրեթէ ամբողջովին Ուուսաստանի անհաշտ թշնամիների շարքում։ Երկու սլաւոնական ազգերի մէջ սկսուած կուրը սուաջ բերեց ախտեղ, մամուլի մէջ և ամբունի վրայ, ուսուաց ժողովրդի և կառավարութեան դէմ ատելութեան, սպառնալիքների և ամեն տեսակ մեղադրանքների մրրիկ, և այս մրրիկը տարածուեց նաև Ուուսաստանի մերձաւոր հարեանների մէջ։ Միայն Պուշկինը չէր, որ զալրացած էր մտքերի այս չափազանց կատաղութիւնից, միայն նա չէր, որ մտածում էր, թէ բաւական չէ լոկ դիւանագիտական կուրը—և թէ պէտք է այս կադիւանագիտական դէմ կոռուի հրաւիրել հենց իրան՝ հասաղութեան դէմ կոռուի հրաւիրել հենց իրան՝ հասարակութեան ձախնը, Ան հարցը, թէ որչափ բարուական է զէնք գործածել քաղաքական ազատու-

թեան սկզբունքի դէմ մի ժողովրդի նկատմամբ,
որին շատ տարիների ընթացքում պաշտօնապէտ
ընտելացնում էին այդ սկզբունքին՝ այս հարցը
լետու էլ մութ էր մոռում ուսւ ինտելիգենցիալի
նշանաւոր մասի համար: Հէնց այս հարցի պատաս-
խանն էր ուզում տալ Պուշկինը»:

Պուչկինին թուլ արուեց սկզելել դիւանա-
տները, իսկ լրագրի մասին նա գեռ ոչ մի դրա-
կան պատասխան չստացաւ: Բայց բանաստեղծը՝
չսպասելով այս թոլլուութեանը՝ բարձրացրեց
իւր ձախնը ու երկու ոտանաւորներով, «Ալեքենի-
կամ Ռուսիա և «Բորодинская Годовщина», իւր կար-
ծիքը հրատարակեց արտասահմանեան լարձակում-
ների դէմ: Այստեղ նա ուսւաց և լեհացոց կոփեր
դուրս է բերում ոչ իրեն ազգային կոփե, այլ իբ-
րև պատմական, հին տնային վէճ, որ սկսուած է
սլաւոնական ցեղերը ուսւաց ծովի մէջ ի մի խառ-
նելու նպատակով, և Եւրոպան իրաւոնք չունի
Ուսւաստանն ատելու: «Դուք ահռելի էք միան-
լեղուով—վորձեցէք և գործով», և մարտի է կան-
չում «արտասահմանեան զրաբարտիչներին»: Բայց
խօսելով լալթուած լեհացիների մասին՝ նա բա-
ցագանչում է: «կոռուի մէջ ընկածը անվեսա է, թշ-
նամիներին մենք ոտնակոխ չենք արել փոշու մէջ,
և նրանք անսարդանքի երդ չեն լսի ուսու բա-
նաստեղծի քնարից»: Այս ոտանաւորները հրատա-
րակուեցին Ժուկովսկու «Առ ազգի Վարշավի» ոտա-

նաւորի հետ առանձին բրօշիւրով և անթիւ օրի-
նակներով տարածուեցին ամեն կողմէ Հասարակու-
թեան մի մասը սառնութեամբ ընդունեց այս բանա-
ստեղծութիւնները, բայց մեծամասնութիւնը ուրա-
խացաւ, որ կարողացաւ որեւէ պատասխան գտնել
իւր հոգին տանջող մութ հարցի համար: Գուն էր և
կառավարութիւնը, Նոյեմբերի 14-ին Պուչկինը պաշ-
աօն ստացաւ կրկին արտաքին գործերի նախա-
րարութեան մէջ 5000 ր. ոռոգով, իբրև առանձին
կամերական չնորհ:

Թւում էր թէ ամենքը կամենում էին նպաս-
տել Պուչկինի մտազրութեանը՝ նոր ընտանեկան
կեանքը որմէ մեծ ազգասիրական գործի հետ շաղ-
կապելու, այնու ամենալին՝ չնայելով իւր տաղան-
դին և աշխատամիրութեան՝ նա չկարողացաւ գլուխ
բերել ոչ ընացրի հրատարակութիւնը, ոչ էլ պատ-
մութիւնը: Պատճառները թէ արտաքին հանգա-
մանքների մէջ էին և թէ աւելի նրա հոգեկան
տրամադրութեան մէջ:

Պուչկինը յուս ունէր իւր լրագրի շուրջը
խմբել լաւագոյն ոլմերը՝ ուսւաց կեանքի պայման-
ներն ու կարգերը, «իրերի ուժը» պարզաբանելու և
կառավարութեան կարգադրութիւնները մեկնելու
համար: Փուկովսկու պէս՝ նա արդէն պահպանո-
ղական էր: Հասարակութեան ոգու բոլոր ձգտում-
ներն ու լուսերը, մտածում էր Պուչկինը, հաւաք-
ում են կառավարութեան, իբրև պատմական

շտեմարանի մէջ. ալստեղ նրանք պահում են՝
մինչեւ որ մշակուեն երկար դատողութեամբ և երկրի
լաւագոյն մարդկանց խորհրդակցութեամբ, ու ապա
նորից լոյս աշխարհ են զալիս, դառնալով հիմնար-
կութիւններ, և ալսպիտով վերադառնում են կրկն
ժողովրդի մէջ: «Ոչ ամօթ է, ոչ էլ ստորութիւն
ան պայման հնազանդուել ալսպիտի դիւրազգած իշ-
խանութեան, վինի սա միահեծան թէ նահապե-
տական և ալլն»: Այս հայեացքների հետ Պուշկինը
շաղկապում էր այն համոզմունքը, թէ աղնուակա-
նութիւնը պէտք է լինի անկախ միջնորդ ժո-
ղովրդի և կառավարութեան մէջ: Որքան էլ Պուշ-
կինը համապատասխան համարէր այս հայեացք-
ները կառավարութեան քաղաքականութեանը՝ ալ-
նու ամենալի սրանց տարածելու համար հարկա-
ւոր էր մի տեսակ կենդանի լեզու, ոգեստութեան
որ էր մի բան, իսկ Պուշկինը շուտով համոզուեց, որ
պէս մի բան, իսկ Պուշկինը շուտով համոզուեց, որ
Բենկենդորֆը արդեւք կլինի այս եղանակով ան-
դամ խօսելու: Ուղիղ է, 1832 թ. նա ստացաւ
դամ իրաւունք, նոյնիսկ գնաց Մոսկուա գործը
լրագրի իրաւունք, նոյնիսկ գնաց Մոսկուա գործը
լրագրի իրաւունք, բայց միենոն թուականին Բեն-
կազմակերպելու, բայց միենոն թուականին Բեն-
կենդորֆը հրաւիրեց նրան իւր մօտ և լանդիմա-
կենդորֆը հրաւիրեց նրան իւր մօտ և լանդիմա-

կանում էր, որ Բենկենդորֆը չէ հաւանել բովան-
դակութեանը, որտեղ գուրս էին բերուած ստրուկն
ու իշխանը և ամեն մէկը գործում էր իւր դրու-
թեան և կոչման օրէնքներով: Սրանից լետով նա
գրում էր ընկերոջը իւր լրագրի մասին: «Բնչ ծրա-
գիր էք ուզում: քաղաքական բաժինը՝ պաշտօնա-
պէս չնչին, գրական բաժինը՝ էապէս չնչին: Իմ
լրագիրը կլինի «Ծներիա Պաշա»-ից մի փոքր
վատ», և չկամեցաւ ինքը լինել ալսպիտի մի լրա-
գրի խմբագիր-հրատարակիչը:

Նոյնպէս ամուլ եղաւ «Պետրոս Միծի պատ-
մութիւնը» գրելու միտքը: Մինչև այդ ժամանակ
նա հիացմունքով էր վերաբերում այս միծ նորոգ-
չի գործունէութեանը: Այժմ, աւելի մօտիկ ծա-
նօթանալով նրա թագաւորութեան մանրամա-
սնութեանց՝ նա սկսեց լսել զոհերի ողբն ու աւե-
րակների ժխորը և աւելի համոզուեց, որ նա է
ջախջախել հին աղնուականութեան ոլքը: Պետրոս
Ա-ը թւում էր նրան մի սարսափելի մրրիկ, որը
ճանապարհին, առանց խտրութեան և խղճահ-
րութեան, տապալում է ամեն ինչ: Պետրոսը նրա
աչքում կրկնակի անձնաւորութիւն էր — և՝ պետու-
թեան հանձարեղ հիմնադիր, և՝ Աստուծոյ պատու-
հաս: Բանաստեղծական վառ երեսակաբութեամբ տե-
ղագոխուելով հեռու անցեալը և հզօր կերպով զգա-
լով այստեղ կատարուող սրտաճմլիկ ողբերգու-
թիւնը՝ նա չդիմացաւ — նա չափազանց միրում էր

լաղթուածներին, իրանց դատը կորցրածներին, չափազանց զալրանում էր, երբ լաղթողները պարձենկոտութեամբ տօնում էին լաղթութիւնը, թէ կուզ այս լաղթութիւնը պատմական անհրաժեշտութիւն լինէր: Նրանից ամենքը սպասում էին հիացածնկարապրութիւն, իսկ նա արդէն չէր կարող տալ ալդ: Պատմութիւնը անպէս էլ չգրուեց:

Իւր նոր հայեացքը Պետրոսի վրայ՝ Պուշկինը արտալայտեց «ՄԵԴԱԿ» քերթուածով: Հերոսը, հին ազնուական տոհմի ալս սերունդը, մի չնչին աստիճանաւոր, կորցնելով նեւալի վարարման ժամանակ իւր սիրածին՝ վշտից խելագարւում է և համարձակւում է մեղաղրել Պետրոս Մեծին բոլոր իւր անբախտութիւնների մէջ ու սպառնալիքներ կարդալ նրա բրոնզէ արձանին, նրա մէջ տեսնում է նա այն մարդուն, որ կործանել է իւր ընտանիքի քաղացիական նշանակութիւնը, սոորացրել է իրան մինչեւ անտուն պաշտօնեակի աստիճանը և ահա աքժմ էլ, կողմնակի կերպով, խորտակել է իւր սէրը: Քերթուածի տպագրութիւնը արգելուեց:

Իւր ընդարձակ մտադրութիւնները իրագործել Պուչկինին խանգարում էին և նրա անձնական կեանքի նոր պարմանները: Ցարսկոյէ Սելութ նա ընտանիքով տեղափոխուեց Պետերբուրգ: Նրա կինը, Նատալիա Նիկոլայիւնան, փոքրուց սովոր լինելով ուրախ, զբոսասէր կեանքի՝ լինում էր բո-

լոր պարահանդէսներին, երեկովթներին, ներկալացումներին, համերգներին: Նրա գեղեցկութիւնը շուտով ամենքի, նոխնակ կայսեր ուշադրութիւնը գրաւեց: Պուչկինը ամեն տեղ ուղեկցում էր կնոջը և հապարտանում էր նրանով: Մենակ թափառում էր նա մինչեւ ուշ զիշեր պարահանդէսների մենակներում, շքազգիսաններով շրջապատուած, կամ որիէ անկիւնից նալում էր, ինչպէս աշխարհիկ թռեկանները պատուում էին իւր կնոջ շուրջը: Լաւ է, եթէ ալդ հասարակութեան մէջ նրան վերաբերուեին իբրև հաւասարի: Նա զգում էր, որ իրան, բարձր աստիճաններ, շքանշաններ, մեծ հարստութիւն չունեցող մէկին, ազտեղ նալում են եթէ ոչ արամարհանքով՝ գոնէ վիրաւորական հովանաւորող հայեացքով, որովհետեւ ինքը միան գրող էր: Մեծ մասը չէր հասկանում, թէ ինչու են սիրալիր դէսի՛ նա թագաւորն ու կայսերական տան բոլոր անդամները: Եւ ահա Պուչկինի հիւանդու ինքնասիրութիւնը ամեն մի չնչին անուշադրութիւն, ամեն չվերադարձած ալցելութիւն արհամարհանքի տեղ էր ընդունում, և ալս պատճառով նա չատանգամ անախորժութիւններ էր ունենում: Շուրջը ամենքը ուշի ուշով հետեւում էին նրա և տիկնոջ ամեն մի անզգով քալիքն, խօսքին, որպէսզի բաժբասանքների նիւթ գարձնեն: Նա շարունակ լարուած զրութեան մէջ էր և նախանձախնդրութեամբ հսկում էր, չլինի թէ աշխարհի բամբասանքները

իւր ընտանեկան հանգստութիւնը խանդարելու
առիթ դառնան:

Պուշկինի վիճակը ծանրացաւ մանաւանդ՝ երբ
1834 թ. լունուարի 1-ին նրան նշանակեցին կա-
մեր իւնկեր (ստորին պալատական պաշտօնեալ),
Մի քանիսի ասելով՝ այս բանը այն նպատակով էր
արուած, որ նրա կինը հնարաւորութիւն ունենար
միշտ հրաւիրուելու պալատական պարահանդէս-
ներին, բայց «ի հարկէ,—զրում էր Պուշկինը Վեա-
զեմսկուն,—կալարը մտածում էր իմ աստիճանի, ոչ
թէ իմ տարիքի մասին, և անկասկած չէր աղում
իմ ինքնասիրութիւնը վիրաւորել»։ Բայց նա իս-
կապէս վիրաւորուած էր—այս պաշտօնը տրում էր
առհասարակ երիտասարդներին։ «Ասում են (զրում
էր նա կնոջը), որ մենք պէտք է զուգ-զուգ ման-
գանք՝ ինչպէս ինստիտուտի աշակերտուհիք։ Երե-
ւակալիք, որ ես իմ ալեոր մօրուքով պիտի ըն-
թանամ անմօրուս պատանիների կողքին—ոչ մի
կերպով։» Նա ստիպուած էր ներկայ գտնուել պա-
լատական բոլոր հանդէսներին, պատարագներին,
իսկ եթէ չէր գնում՝ ստանում էր խիստ լանդիմա-
նութիւն։ Պուշկինը, հէնց որ հնարաւոր էր վինում՝
հիւանդ էր ձեանուս կամ հանդէսներից մի քանի օր
առաջ հեռանում էր Պետերզուրգից և ամեն անգամ,
երբ ստիպուած էր վինում հազնել կամեր-իւնկերի
շքազգեստը՝ զգում էր իրան վատ և գրգռուած։
Այս պալատական կեանքը, ընդունելութիւն-

ները, պարահանդէսները, կնոջ զգեստներն ու զար-
դերը ահապին ծախսեր էին պահանջում, իսկ հայ-
րական կալուածքները գրեթէ բոլորովին աւերտուած
էին։ Նա պէտք է լուս դնէր իւր սեփական աշխա-
տանքի վրայ ։ «Պակուելիս ես միտք ունէի ծախսել
առաջուանից երեք անգամ աւելի, իսկ զուրս եկաւ
տասն անգամ», զրում էր նա արդէն Յ.՝ Սելզից,
իսկ Պետերբուրգում կեանքը աւելի թանգ էր։
«Փողն ինձ հասնում է աշխատանքով, իսկ աշխա-
տանքը պահանջում է առանձնութիւն։ Զունիմ և
աղատ, ամուրի կեանքի պարապութիւնը, որ ան-
հրաժեշտ է գրողի համար։» Նա շարունակ աշխա-
տում էր։ Նա իրան լատուկ եռանդով սկսեց ալցե-
լել զիւանասները և նիւթեր հաւաքել Պետրոս
Սեծի պամտութեանը համար 1832 թ. նա շտարով
գրեց Դյօքուերի վէպը, իսկ 1833 թ. ամարանոցից
ամեն օր ստով գնում էր գիւանատուն և նիւթեր
հաւաքում։ Պատահաբար ձեռքն ընկան Պուգաչեվի
(1772 թ.) ապստամբութեան վերաբերեալ նիւթեր։
Նա լափշտակուեց այս զէպքի ուսումնասիրութեամբ,
և օգոստոսին արդէն երկու ամսով արձակուրդ
խնդրեց, որպէս զի ալցելէ այն անդերը, ուր բռնկել
էր այս խոռովութիւնը։ Նա գնաց Պազան, Սիմ-
բիրակ, Որէն բուրդ, Ուրալ'սկ, որ հասարակութիւ-
նը նրա պատուին ճաշկերդիթ սարքեց, և վերջը
առանձնացաւ Բոլգինօ։ Ամեն տեղ նա տեսնուում
էր ալպտամբութեան ականատես ծերունիների հետ

և հաւաքում էր բանաւոր աւանդութիւններ այն ժամանակուալ մասին, իւր գիւղում առանձնացած, նա շտապեց վերջացնել «Պուգաչեւի ապստամբութեան պատմութիւնը», և մի վեպ նոյն ժամանակամիջոցից (որը իսուով վերամշակելով անուանեց „Կանոնակա ճօռկա“): Կնոջը նա գրում էր. «Կարգի եմ բերում իմ պատմութիւնը, իսկ ստանաւորները գեռ քնած են: Եթէ թագաւորը թոյլ կտայ պատմութիւնս՝ մենք զուտ 30 հազար կունենանք, կվճարենք պարտքերի կէսը և քէփով կարգենք: Դատ կարօտել եմ քեզ: Եթէ չամաչէի՝ կվերադառնալի քեզ մօտ, ոչ մի տող չզրելով: Կնիկ, կնիկ, ես աշխարհէ աշխարհ թափառում եմ, երեք ամիս ապրում եմ խուլ անասլատում, ինչի՞ համար, եթէ ոչ քեզ համար, կնիկ, որ դու հանգիստ լինիս և փալիս՝ ինչպէս վայել է քո տարիքին և քո գեղեցիւթեանը: Պահպանիր ուրիմն զուէլ ինձ: Տղամարդու կեանքի հետ անբաժան հոգսիրի վրայ մի աւելացներ ընտանեկան անհանգստութիւն, խանդուութիւն և ալն»:

Վերադառնալով Պետերբուրգ՝ նա ներկայացրեց կարսին իւր «Պուգաչեւի ապստամբութեան պատմութիւնը» և հրատարակելու իրաւունքը ստացաւ: Բացի այդ (հէնց այդ ժամանակ նրան նշանակեցին կամեր-իւնկեր) գրքի ապագրութեան համար փոխարինաբար տուին 20 հազար ռուբլի: Բայց նրա համար աւելի և աւելի զժուար էր դառ-

նում ապրել Պետերբուրգում: Իւր տարեկան ծախսերը նա հաշում էր 30 հազար ռուբլի, իսկ եկամուտները շատ անորոշ էին: Մինոյն ժամանակ և ծնողների դրձերը բոլորովին խառնուեցին: «Ի՞նչ անեմ: Պէտք է նրանց կալուածքը ձեռքս առնեմ, իսկ հօրս ուժիկ նշանակեմ: Նոր պարտքեր, նոր զիմացաւանքներ: Խակ պէտք է. կկամննալի և հօրս ծերութիւնը հանգստացնել, և կ եղբօրս գործերը սարքել»: Անուհետե և՛ հայրը, և՛ եղբայրը միշտ նրան էին դիմում, պահանջելով ծախսի փող: Միւս կողմից՝ զոքանչն էլ ամեն կերպ վիրաւորում էր նրան և ստորացնում կնոջ աշքում, մինչեւ անգամ զանազան բամբասանքներ էր տարածում նրա մասին Մոսկուայում—և սոլորը նրա համար, որ չէր կամնում խօսրակամ վճարել Պուշկինից փոխ առած գրամը: Կամեր-իւնկերութեան հետ կապուած մանր պարտականութիւնները, ինչպէս տեսանք՝ աւելի ևս գառնացնում էին նրա գործութիւնը:

1834 թ. գարունն ու ամառը կինը երեխաներով անց էր կացնում զիւղում, իւր ազգականների մօտ: Պուշկինը մնաց Պետերբուրգում մենակ, առանց հանգիստ առնելու տեղ ունենալու: Թագաժառանգի չափանառութեան առիթով եղած հանգէսներին նա տանից գուրս չեկաւ, հիւանդ ձևանալով, որպէսզի ստիպուած չլինի կամեր-իւնկերի շքաղինաաը հաղնել: Միենոյն ժամանակ նա իմացաւ, որ իւր նամակագրութիւնը կնոջ հետ՝ փոս-

տատանը բացւում, և և նամակների պատճենը ուղարկւում է Երբորդ բաժինը. Այս նրան սաստիկ զայրացրեց, Նրա կեանքը անտանելի էր դառնում: Նա սկսեց մտածել հրաժարականի մասին և գրում էր կնոջը. «Անախորժ է կախումը, մանաւանդ երբ քան տարի մարդ անկախ է եղել, կախումն և տնաեսկան անկարգութիւնը սարավելի են ընտանիքի մէջ, և սնափառութեան ոչ մի աջողութիւն չի փախարինի հանգստութեան և գոհութեան...» Մաղձը ինձ լուզում է, բայց մաղձից արսեղ չես փրկուր. Լաւ կլինէր փակուել Բոլգինորում, բայց դժուար էր Մի բարկանար, կնիկ, և վատ մի բացատրեր իմ խօսքերը. Երբէք մտքովս չէ անցել մեղադրել քեզ իմ կախուած դրութեան մէջ: Ես պէտք է քեզ հետ պսակուէի, որովհետեւ առանց քեզ անբախտ կլինէի ամբողջ կեանքումս, բայց ես չպէտք է ծառալութեան մտնէի և, որ աւելի վատ է՝ խճճէի ինձ դրամական պարտաւորութիւններով: Ընտանեկան կեանքի կախումը դարձնում է մարդուն աւելի բարութական: Այն կախումը, որ մարդս իւր վրալ է զնում փառասիրութիւնից կամ կարիքից՝ ստորացնում են նրան: Այժմ ն ր ա ն ք նախում են ինձ վրալ իրեւ մի ծառալի վրալ, որի հետ կարելի է վարուել՝ ինչպէս ուզում ենք...», «Ո՛չ, երանի թէ փախչէի մաքուր օդի մէջ...» Քո առաջ մեղաւոր եմ. փող կար, բայց տարուեցի, բայց բնչ անեմ: Ես այնպէս մաղձու էի, որ պէտք է մի

բանով ցրուէիս Բոլորը ն ա է մեղաւոր, բայց Աստուած ն ր ա հետ, միան թէ ազատ թողնէր»:

Պուշկինը ուղիղ որ լուսի ակզբին հրաժարական տուեց, խնդրելով միայն՝ թոլլ տալ շարունակել ացցելել դիւանասները: Ժուկովսկին և ուրիշ բարեկամները շտապեցին «խելքի» բերել նրան, թագաւորը մեղադրեց նրան ապերախտութեան մէջ և յաբանեց, որ մտադիր չէ նրան պահել կամքին հակառակ, իսկ դիւանասները ացցելել չէ կարող թոլլ տալ, որովհետեւ ալս իրաւունքը պատկանում է միայն իշխանութեան վստահութիւնը վակելողներին: Պուշկինը իսկովն իւտ առաւ հրաժարականը. «Ես չեմ կամենում, որ ինձ կարողանան կասկածել ապերախտութեան մէջ»: Զմեռը կնոջ քորերը ապրում էին նրա տանը, որով ծախսերը աւելացան: 1835 թ. հրատարակած «Հուսար» ու «Պիկ Աղջիկ» չկարողացան նրա պէտքերը լրացնել: Նիւթական հանգամանքները (60 հաղար սպարտք) վերջապէս այնպէս վատացան, որ նա ոչ մի ուրիշ ելք չգտաւ՝ բացի կառավարութեան դիմելուց, ինդրելով փոխ տալ իրան ՅՈ հազար րուբլի և հանել այնուհետեւ իւր ոոճկից: Նրա խնդիրքը կատարուեց: Այսպիսով նրա պարագը գանձարանին հասաւ 50 հաղարի: Մի կերպ սպարտքերը վճարելով՝ նա առանձնացաւ Միխալլովսկի և իզուր սպասում էր ոգեսրութեան: Ես շարունակ անհանգիստ եմ և ոչինչ

չեմ գրում, իսկ ժամանակը անցնում է, — գրում էր
նա իւր կնոջը: — Դու չես կարող երևակալել, ինչպէս
արագ է բանում երևակալութիւնը, երբ մենակ նըս-
տած ես լինում չորս պատերի մէջ կամ զրօնում
ես անտառում, երբ ոչ ոք չէ խանգարում քեզ
մտածել: Եւ ինչի մասին եմ մտածում: Ահա ինչի-
ինչով պիտի ապրենք: Հայրս կարողութիւն ինձ
չի թողնի — կէսը արդէն վատնել է: Թագաւորը
է թողնում ինձ ոչ կալուածատէրերի, ոչ էլ հա-
պարակախոսների շարքը գրուել, Գրել փողի հա-
մար՝ վկատ է Աստուած, չեմ կարող: Մենք մի գրոշ
հաստատ արդիւնք չունինք, իսկ հաստատ ծախք 30
հազար: Սրանից Բնէ դուրս կդաւ, Աստուած գիտէ:
Միթաւլովսկում ամենը գտայ առաջուաւ պէս, բացի
նրանից, որ այստեղ չկատ այլ ես իմ դաւեակը...
Ամենը իմ շուրջը ինձ ասում է, որ ծերանում եմ:

Գործերը ուղղելու համար Պուշկինը վճռեց
մի ժողովածու լուս ընծալել, բայց երբ շատ նիւթ
հաւաքուեց՝ նա մտածեց «Современник» եռամ-
սեայ գրական հանդէս հրատարակել, որը պէտք է
լինէր Դելվիգի «Литер. Газета»ի շարունակու-
թիւն, և համախմբելով իւր շուրջը ընդունակ հե-
ղինակներին՝ մկրկլն վերադարձնէր քննադատու-
թիւնը ընտարի գրողների փոքրիկ շրջանի ձեռքը,
որը վայելում է ընթերցողների լարգանքն ու
վստահութիւնը»:

Դժուար հանգամանքների մէջ սկսեց Պուշ-

կինը իւր հանդէսի հրատարակութիւնը: Հէնց այն
ժամանակ, երբ դուրս էր զալիս № 1-ը՝ մարը
վախճանուեց, և նա ուղեկցեց դիակին Պետերբուր-
գից մինչև Միթաւլովսկի, ուր հողին լանձնեց
Սվեատոգորսկի վանքում, այստեղ մօր գերեզմանի
մօտ գնեց նա և իւր համար թաղուելու տեղ: Թէն
բաժանորդների թիւը դեռ շատ չէր, բայց Պուշկինը
յուր չէր կարցնում: «Современник»-ի չորրորդ գրքի
մէջ լոյս տեսաւ նրա «Կապիտանի աղջիկ» վէպը:
Ոճի և բովանդակութեան պարզութիւն, բնաւորու-
թիւնների մեծ մասի և պատկերների իրականու-
թիւն, բարի հեղնութիւն—ահա վէպի լատկանիշ-
ները: Այստեղ Պուշկինը պաշտպան է կանգնում
«Ճրէց» Պուգաչեվին, աալով նրան բարի սիրտ, իսկ
հերոսահի է ընարում մի պարզ և երկուս աղջիկ,
որը երկու խօսք իրար հետ կապել չէ կարող, բայց
ֆալլուն մտքի և ուժեղ բնաւորութեան փոխարէն
ունի սրախ անկեղծութիւն: Այս վէպի մէջ աւելի է
երկում այն փոփոխութիւնը, որ նկատում է Պուշ-
կինի բոլոր ստեղծագործութիւնների մէջ 1830-ից
յետու և որը նա անուանում է «ողորմած ու-
թիւն և գթութիւն դէ պի ընկածը»: Ա-
մուսնութիւնից լիտոյ նա սկսած ունի շատ որիշ
գրուածքներ, բայց մեծ մասը չէ վերջացրել—հոգին
անհանդիստ էր, իսկ երբ ստածում էր, որ գրում է
կոպէկի համար՝ լանկարծ ձեռքը թուլանում էր:
Հակառակորդ թերթերը, Պուշկինի վարկը

ձգելու համար՝ սկսեցին հրատարակել, թէ նրա տաղանդը սպառւում է, թէ հասարակութիւնը սառչում է դէպի նա (ուղիղ է, մի քանիսի վրայ վատ էր ազգում նրա հաշտութիւնը կառավարութեան հետ): Պուշկինին ալս զարդացնում էր: Նա գրում էր տիկին Օսպավինու. «Մաստիկ գրգուած եմ: Հաւատացէք ինձ, կեանքը, որքան էլ ախորժելի սովորութիւն լինի, այնու ամենալինիւ պարունակում է իւր մէջ դառնութիւն, որը նրան բոլորովին զգուելի է զարձնում: Աշխարհը—ցեխի գարշելի կոյտ է»:

Մինչ արդ՝ պարտքերը շարունակում էին աճել, ոռօնիկը պահում էր արքունի պարտքը վճարելու համար, նա լոգնել էր զրաւ զնելուց, տոկոսներ վճարելուց, հարուստ երեալուց, մինչեռոչինչ չունէր: Նա այն ժամանակ հասկացաւ, որ մարդուս համար ամենաթանկագին ազատութիւնը — անձնական ազատութիւնն է, որը նրան պահառում էր: Նա արդէն մի ոտանաւորի մէջ երգում է, որ չէ նախանձում քաղաքական ազատութեանը. «ուրիշ, աւելի լաւ ազատութիւն է ինձ հարկաւոր — ոչ ոքին հաշիւ չտալ, միայն իրան ծառակել և հաճուանալ. իշխանութեան, շքազգեստի համար չը ծռել ոչ խղճմտանքը, ոչ մտքերը, ոչ էլ վիզքիւր կամքով թափառել ալսաեղ ու անտեղ, զարմանալով բնութեան աստուածալին գեղեցկութեան վրայ և գեղարուեսաների ու ոգեսորութեան ստեղ-

ծագործութիւնների առաջ անխօս թաղուել հիացութեան հրճուան քնների մէջ — ահա երջանկութիւն, ահա լրաւունքներ»:

Ընդհարումները Բենկենդորֆի և գրաքննութեան հետ կրկնում էին, բանաստեղծի նեարդերը լարուած էին չափազանց աշխատանքից և լուզմունքներից: Երբեմն բռնկում էր, հակառակ ամեն ջանքերի, նրա դիւրաբորբոք բնութիւնը. նրա մի քանի եպիգրամները, ակնարկները զըրգուում էին շատ ազգեցիկ և ճարպիկ մարդկանց: Ահա մի օրինակ: Լուսաւորութեան նոր մինիստր կոմս Ուվարովը, որի օրով աւելի սաստկացան զրաքննական անախորժութիւնները՝ մի երեկոյթի ժամանակ մօտեցաւ Պուշկինին և սկսեց լանդիմանութիւն կարգալ մի անանուն եպիգրամի համար: Բանաստեղծը զարդացած լաւանեց, որ ինքը չէ ալդ եպիգրամի զրոյզը, իսկ ալժմ կգրէ և կտպէ իւր ստորագրութեամբ: Այսպէս ծագեց «На въздоровление Пугуяла» բանաստեղծութիւնը, որը այնպիսի աղմուկ հանեց բարձր շրջանների մէջ, որ Պուշկինը կանչուեց Բենկենդորֆի մօտ: Այսպիսի դէպքեր շատացնում էին բանաստեղծի թշնամիների թիւը: Նրա դէմ մի ամբողջ դաւադրութիւն կազմուեց, որի գլուխն էին Բենկենդորֆն և Ուվարովը, և առթի էին սպասում նրան կորստի մատնելու:

Պետերբուրգի հասարակութեան մէջ երեացել էր մի գեղեցիկ և ճարպիկ օտարական, որ իրան

Փրանսիացի էր ցուց տալիս, բարոն Ժորժ Դանտես, որը ուղղակի սպայի պաշտօնով ընդունուեց ռուսաց ծառայութեան մէջ։ Մի փոքր ժամանակից նրան որդեգրեց հոլանդական դեսպան բարոն Հեկկերէնը։ Պուչկինի ասելով՝ Դանտէսը վերջինիս ապօրինի զաւակն էր, Դանտէսը հաւանում էր տիկ։ Պուչկինի քոլբերից մէկին և առանձին սիրալիրութիւն էր ցուց տալիս նաև տիկնոջը։ Զար լեզուները սկսեցին նրանց մասին վատ լուրեր տարածել։ Պուչկինը հրամակեց չընդունել նրան իւր տանը։ Յանկարծ նոյնմբերի 4-ին նա ստանում է երեք անստորագիր նամակ կեղտոտ ակնարկներով։ Նա անհրաժեշտ համարեց վերջ գնել այս խօսակցութիւններին և մենամարտութեան հրաւիրեց Դանտէսին։ Դանտէսը ընդունեց, միաւն թէ 15 օր ժամանակ խնդրեց։ Այս միջոցում նա առաջարկութիւն արեց օր. Կատ. Գոնչարովին—Պուչկինը իւր հրաւիրը յետ վերցրեց։ Բայց հարսանիքը չլաւացրեց նոր ազգականների փոխադարձ լարաբերութիւնները։ Բամբասանքները չին դադարում։ Հասարակութիւնը բաժանուել էր երկու կուսակցութիւնների, որոնցից մէկը պաշտպանում էր Պուչկինին, միւսը Դանտէսին։ Վերջինների թւումն էր և Բենկենդորֆը։ Սրանք դիմամբ աշխատում էին երկու կողմերն էլ աւելի գրգռել։ Կինը լաւ հասկանում էր, որ պէտք էր հեռանալ Պետերբուրգից, մինչեւ որ խօսակցութիւնները վերջանալին

Ինքը Պուչկինն էլ մտածում էր դրա մասին, բայց փող չկար։ Ակրծապէս նրա համբերութիւնը հատաւ։ Նա մի չափազանց վիրաւորական նամակ ուղարկեց Հեկկերէնին և ստացաւ սրա որդուց մենամարտութեան հրաւիր։ Մենամարտութիւնը տեղի ունեցաւ 1837 թ. լունուարի 27-ին, երեկոյեան ժամը 5-ին, Չորսակա գետի մօտ։ Դանտէսը առաջինը արձակեց և վիրաւորեց Պուչկինին ստամոքսի աջ կողմը։ Պուչկինը վար ընկաւ, բայց վեր քաշուեց, նշան դրեց, արձակեց իւր հակառակորդի վրայ և բացազանչեց՝ «բրատ», երբ տեսաւ որ նա ընկաւ (վէրքը չնշն էր)։ Բենկենդորֆը գիտէր այս մենամարտութեան մասին, բայց ժանդարմինին ուղարկել էր հակառակ կողմը, իրը թէ սիսալմամբ։

Պուչկինին փոխադրեցին տուն։ Նա աշխատում էր չվախեցնել կնոջը, բայց պահանջեց բժըշկից պարզուէն լայտնել իրան, ինչպէս է իւր դրութիւնը։ «Զեր վէրքը շատ վտանգաւոր է, և ես գրեթէ յուս չունիմ ձեր առողջանալու վրայ»։ Այն ժամանակ նա ուղարկեց խնդրելու կարից չպատճել իւր վկային, կամչեց քահանապին, խոստովանուեց և ճաշակուեց։ Մի փոքր ժամանակից պալատական բժիշկը բերեց նրան թագաւորի ինքնագիր նամակը։ «Սիրելի բարեկամ, Ալ. Սերգ., եթէ մեզ վիճակուած չէ տեսնուել այս աշխարհում՝ ընդունիր իմ վերջին խորհուրդն—աշխատիր մեռնել քրիստոնեալ կնոջը և երեխաններիդ մասին մի

անհանգստանար — ես առնում եմ նրանց իմ խնամքի տակ»։ Պուշկինը օրհնեց որդոց, խնդրում էր իւր վրէժը չառնել, հրաժեշտ տուեց իւր ընկերներին և գրքերին, երկու օր քաջութեամբ արասափելի տանջանքներ կրեց, և լունվարի 29-ին վախճանուեց: «Լեանքը վերջացած է, վերջացած է կեանքը» — ահա նրա վերջին խօսքերը:

Հէնց որ Պետերբուրգում տարածուեց թէ Պուշկինը մեռնում է, և լետոյ, թէ մեռաւ՝ ամեն կողմից ամբոխը սկսեց հաւաքուել նրա տան մօտ. կառք վարձելիս ուղղակի ասում էին, «Պուշկինի մօտ», և կառապանները արդէն գիտէին թէ նւր պիտի տանեն: Հարկ եղաւ խնդրելու զինուորներ կանգնացնել տան առաջ: Բոլորը, մինչեւ անգամ անգրագէտ մարդիկ, պարտք էին համարում նրա դիակին երկրպաղել: Ուսանողները և երիտասարդ գրագէտները վճռեցին ձեռքով տանել նրա զագալը մինչեւ եկեղեցի: Բենկենդորֆի մարդիկ սկսեցին տարածել, որ Պուշկինի ընկերները կամենում են օգտուել լուղարկաւորութիւնից և մի ինչ որ զաւադրութիւն են կազմել և որ նրան թաղում են ոչ իրեն բանաստեղծի, այլ իրեն ազատամտի, ընդդիմադիր կուսակցութեան պարագլխի: Խիստ միջոցներ էին ձեռք առնուած, Մարմինը գիշերով տեղափոխեցին եկեղեցի: Փողոցում շարուած էին զինուորներ. հոգեհանգստին ներկայ էին միայն առմուերով հրաւիրուածները. այնուհետև դագաղը

կողպեցին եկեղեցու նկուզում, իսկ վետրուարի 3-ին քաղաքից դուրս աարան, կրկին գիշերով: Ա. Տուրգենեւը, նա, որ պատանի Պուշկինին լիկէոն էր տարեկ՝ ուղեկցում էր նրա մարմնին մինչև Սվեատոգորսկի վանքը, որտեղ նա թաղուեց իւր մօր կողքին: Այժմ այնտեղ սպիտակ մարմարէ մահարձանի վրայ քանդակուած է. «Ալէքսանդր Սերգեևիչ Պուշկին»: 1880 թ. լունիսի 5-ին Մոսկուայում, ամբողջ ոռու ինտելիգենտ զասկարգի նուիրաբերութիւններով, անխտիր բոլոր կուսակցութեանց պատկանող գրագէտների ներկայութեամբ, մեծ հանդէսով բացուեց Տվերսկոյ բուլվարի վրայ բանաստեղծի արձանը. այդ օրը ազգային գրական տօնախմբութիւն էր:

Կըսրը վճարեց Պուշկինի բոլոր պարտքերը, թաղել տուեց նրան պետական զանձարանի հաշուով և 50 հազար բուլի նուիրեց նրա գրուածքների լիակատար հրատարակութեան համար: Որդոց (երկու տղայ և երկու աղջիկ) և ալրուն թոշակ նշանակուեց: Տիկ. Պուշկինը 1846 թ. երկրորդ անգամ առումնացաւ գեն. Պ. Լանսկու հետ:

Ե.

ՊՈՒԺԿԻՆԻ ԳՐԸՆՎԵՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹԵԱՆ ՆՑԵՆԵԿՈՒԹԻՒՆԻ

Պուշկինի տաղանդի չափը՝ նախորդների ազգեցութիւնը նրա վրայի նեքնությունութիւնն ու կեղարուեստականութիւնն բարուական ազգեցութիւնը ընթերցողների վրայի Պուշկինը իրեն ազգային և եւրոպական բանաստեղծ։ Նեղուի մշակում։ Պուշկինը և հաւերը։

Պուշկինի անունը դիւթիչ հրապով ունի ռուս կրթուած մարդու համար։ Զարմանալով նրա բանաստեղծութեան շացնող փալլի վրայ՝ շատերը նրան դասել են Հոմերոսի, Սոփոկլէսի կամ Շեկսպիրի պէս առաջնակարգ համաշխարհային հանձարների շարքում, բայց ճշմարտութեանը աւելի մօտեցած կլինէինք՝ համեմատելով նրան, տաղանդի ուժի և չափի կողմից, Բալբոնի, Շիլերի, Ալ'Փր. Միւսէի, Միցելիչի, Վիկտ. Հիւգոի, Հէննի հետ։ Բնութիւնից նա օժտուած էր արտասովոր ձիրքերով, դիւրազզաց ըմբռնողութեամբ, վառերեակայութեամբ և ուժեղ խելքով։ Արաբական արիւնի խառնուրզը նրա երակների մէջ, անկատկած, ազգեցութիւն ունէր ոչ միայն նրա բնաւորութեան վրայի, որը մէնչեւ վերջ մնաց դիւրաբորքութեան վրայի, կատաղի բռնկող, ալլ և նրա տաղանդի վրայի։

Պուշկինի գրուածքները դրոշմուած են հարաւային բանաստեղծութեան պայծառութեամբ, պարզորոշութեամբ և զգացմունքների կայտառութեամբ։ Նրա անագին լիշողութիւնը զարմացնում էր ընկերներին, որոնց ասելով՝ «ոչ մի կարդացած հատուած, ոչ մի խօսակցութիւն, մտածողութեան ոչ մի ըոպէն չէին կորչում նրա համար ամբողջ կեանքում»։ Արանով է բացարւում նրա պատկերների թանձրութիւնը և կեղուի հարստութիւնը։

Ամբողջովին նուիրուելով ստեղծագործութեան՝ նա անդադար աշխատում էր ինքնակրթութեան վրայ և իւրացնում էր թէ նախորդ և թէ ժամանակակից հեղինակներից ալն՝ ինչ որ գտնում էր նրանց գրուածքների մէջ կենսունակ։ Կեղծ-զասականութիւնից նա ժառանգեց չափի զգացմունք և սեփական ողերութեան արտադրութիւնները քննելու սովորութիւն։ Անտիմենտալիսմը թելազրեց նրան բնութեան անարուեստ զաւակների պարզամիտ պատկերներ։ Ժուկովսկուց նա փոխառաւ վեհ հայեացք բանաստեղծութեան վրայ և ոճի գեղեցկութիւն, Բատիւշկովից՝ կեանքի վայելքների փառաբանութիւն և թեթև, մարմնացած ոսանաւոր։ Ամենից երկար նա մնաց Բալբոնի ազգեցութեան տակ և սովորեց նրանից բնութիւնը կենդանի գծերով նկարագրել ու մարդկային հոգու շարժումները վերլուծել։ Բայց ուսուցիչներից ոչ մէկը բոլորովին չկարողացաւ ճնշել նրա բանա-

ստեղծական երևակալութեան աղատ թռիչքը. նոյնիսկ նմանողութիւնների մէջ նա մոցնում էր ինքնուրոյնութիւն։ Ծանօթութիւնը Շէկսպիրի ստեղծագործութեան հետ վերջնականապէս զարգացրեց նրա մէջ տաղանդի անկախութիւն, «Ճաղանդի հետեղութիւնը,—ասում էր նա, —ամօթալի լամբակութիւն չէ, որը մտաւոր աղքատութեան նշան է, ալ վսեմ հաւատ է դէպի սիփական ոլժերը, լոյս է նոր աշխարհներ բանալու, ընթանալով հանճարի հետքերով»։ Եւ իրաւ, Պուշկինը «նոր աշխարհներ» բաց արեց ռուսաց գրականութեան համար, աղատելով նրան ստրկական կախումից եւրոպական դրականութեան նկատմամբ և տալով նրան ինք ռուրուն բնաւորութիւն։

Դեռ լիկէոնում Պուշկինը պնդում էր, որ բանաստեղծութիւնը ինքը կեանքն է և ամեն ինչ նրան մատչելի է։ Նա համեմատում էր բանաստեղծին արձագանգի հետ, որը կրկնում է կեանքի ամեն մի ձ սինը (ԹХՕ⁴)։ Այս պատճառով նա միատեսակ հետաքրքրութեամբ նկարագրում էր աշխարհիկ թռեկանի սեղանի մանր զարդերը և Պուտաւալի ճակատամարտը—բնութեան մէջ ոչ մի ստորբան չկար նրա համար։ Նրա ստեղծագործութիւնը նոյնչափ բազմակողմանի է՝ որչափ և ինքը կեանքը։ Նրա մէջ տեղ են գտել և՛ զիւղը և մարդաբագրը, տարուալ բոլոր եղանակներով, և՛ դիրագական պառաւաւութիւնը կոկտիվը։

առարեգիրը և միջնադարեան առավեաը, և՛ սէրը և վրէժինդրութիւնը, և՛ վեհանձնութիւնը և ժլատութիւնը—ամենը՝ ինչ որ նա զգացել է, տեսել է, կարգացել է, ներկան և անցեալը։ Պուշկինի ստեղծագործութիւնը բոլորովին աղատ էր և չէր ենթարկում ոչ մի կանխակալ գեղարուեստական կանոնի կամ պալմանական ձևի. միակ օրէնքը նրա համար՝ իրականութեան հետեւեն էր։ Բայց սկզբում նա պատկերացնում էր զվասարապէս կեանքի գեղեցիկ կողմերը. միան վերջը, դիմելով գրութեան արձակ ոճին՝ նա փորձում էր դուրս բերել և կեանքի բացասական երևոյթները, որոնք սակայն՝ նրա գրչի տակ առաջացնում են ընթերցողի մէջ ոչ թէ դառնութիւն, զարողի, ալ թեթև հեղնութիւն և հաշտեցնող զգացմունք։

Իրականութեան հետ Պուշկինի գրուածքների մէջ ինքն իրան մտնում էր գեղարուեստականութիւնը։ Նա նախ և առաջ գեղարուեստականութիւնը՝ նա գիտէր ամենաչնչին մանրամասնութիւնը բանաստեղծական դարձնել և կարծ խօսքերով շատ բան ասել, այն էլ գեղեցիկ ասել. Ֆրանսիացի գրող Մերիմէն համեմատում է նրան հին լոյների հետ ձևի և բովանդակութեան մէջ համաշափութիւն պահպանելու և ամեն տեսակ մեխնութիւններից և բարոյագիտական բացատրութիւններից խոլս տալու ճարտարութեան կողմից։

Բանաստեղծութիւնը, որպէս գեղարուեստ,

Պուշկինի համար ամեն ինչ էր: «Ա՛յ քեզ բան, բանաստեղծութեան նպատակը ինքը բանաստեղծութիւնն է», պատասխանում է նա Ժուկովսկուն, «Ո հարցնում էր՝ այն: Ե՞ւ գուշուների» նպատակը: Գեղարուեստը աղաս է որևէ աշխարհակին միտումներից, անմիջական ծառալութիւնից կեանքին: «Այնք չենք ծնուած կեանքի լուզմունքների, ոչ էլ ակնկալութեան կամ կռուի համար. — մենք ծնուած են ոգերութեան, քաղցր հնչիւնների և աղօթքների համար» („Վերին“): Այս տեսութիւնը զարգացաւ Պուշկինի մէջ մանաւանդ Շելինգի աղղեցութեան տակ, որի հայեցքների հետ նա ծանօթացաւ աքսորանքից լետոյ Մոսկուալում: Պահանջելով գեղարուեստական գրուածքից բացարձակ իրականութիւն՝ նա շատ աւելի առաջ դնաց իւր ընթերցողներից, և նրա վերջին արտադրութիւնները, «Բորիս Գոդունովից» սկսած, հասարակութեան կողմից այլ և նոյն լափշտակութեամբ չէին ընդունւում, որպէս առաջինները: Այս նրան մնձվիշտ էր պատճառում, բայց նա գերադասեց գնալ իւր շատով՝ քան թէ «պար գալ» ընթերցողների առաջ: Նրա մէջ աւելի սկսեց ամրանալ այն համոզմունքը, թէ բանաստեղծը պէտք է միայն իւր համար ապրի: «Պօէտ, դին մի տար ժողովրդական սիրոյն...» Դութագաւոր ես — ապրիր մենակոյ: «Բայց թագաւորն էլ չպէտք է մենակապայրի, — նկատում է այս խօսքերի առիթով Պիպինը. — նա պէտք է մանաչէ իւր

ժողովուրդը, որի բախտի համար նա բարոյապէս պատասխանատու է»: Պուշկինը իւր առաջին ոտանաւորներով և քերթուածներով աւելի էր ծառակում կեանքի դրած հարցերի լուծման՝ քան թէ վերջը: Իւր տաղանդի լիակատար զարգացման միջոցին նա դիմում էր ամբոխին, օրինակ, ալսպիսի սարսուռ աղջող խօսքերով: «Կորէք ինձանից, բնչգործ ունի խաղաղ պօէտը ձեզ հետ: Անառակութեան մէջ քարացէք համարձակ — ձեզ չի կենդանացնի քնարի ձանը: Հոգուն զզուելի էք դուք զագաղների պէս: Զեր լիմարութեան և չարութեան համար ունեցել էք դուք մինչև ալսօր մտրակներ, բանտեր, կացիններ — այդ էլ բաւական է ձեզ, անմիտ սարտուկներիոց»:

Բոլորովին ալսպէս չէր Արեմուտքում: Անտեղ էլ իրականութեան և գեղարուեստականութեան պահանջը տարածուեց Գերմանիակից ամեն տեղ մանաւանդ ֆրանսիա: Վիկտոր Շիւդովի համար էլ Շէկսպիրը «թատրերգութեան աստուած էր». իւր աղատասիրական դարի մէջ նա էլ գեղարուեստի աղատութեան էր ձգտում և այս աղատութիւնը ենթարկում էր միայն ծամարտասիրութեան: Բայց այս ուղղութիւնը, որը նախորդ՝ մութ երկնալինին տեսչացող անդուսպ ուսմանտիսմից զանազանելու համար, սովորաբար կոչում է նոր կամ աղղակին ուսմանտիսմ՝ ֆրանսիական հողի վրայ ստացաւ հասարական և քաղաքական նշանակութիւն: Վիկտորական և քաղաքական նշանակութիւն:

Հիւգոն ծառալում էր ժողովրդի զեմոկրատական գաղափարներին — բանաստեղծութիւնը նրա համար հասարակական կոխը առաջ տանելու միջոց էր:

Զարմանալի չէ որ երեսնական թուերին, մանաւանդ լաջորդ տասնամետակներում, երբ ընթերցողները սկսեցին բանաստեղծութեան մէջ որոնել կեանքի որոշակի զրած հարցերի պատասխան՝ նկատում է առհասարակ սառնութիւն դէպի Պուշկինի ստեղծագործութիւնները: Պիտարեւը մինչև անդամ վեասակար է գտնում նրա գործունէութիւնը: Այժմ հարկաւոր էին ոչ թէ արձագանդ-բանաստեղծներ, այլ քարոզիչ-բանաստեղծներ, որոնք իրանց պարտքը համարէին հետեւել ժողովրդի ալս կանչին, որին Պուշկինը անէծքով պատասխանեց: — «Ո՛չ, եթէ զուերկնքի ընտրեալն ես՝ քո ձիրքը, աստուածակին առաքեալ, մեր օգտին գործ դիր, եղբայրներիդ սրտերը ուղղիր... Դու կարող ես, սիրելով մնիճաւորներին, տալ մեզ համարձակ խրատներ, իսկ մենք կլսենք քեզ»: Յաջորդ գրական շրջանում արդէն գաղափարական հաստատամութիւնն և ժողովրդի օգտին ծառալութիւնը սրբազան պարտք է համարում ամեն մի օրինաւոր գրողի համար: Պուշկինը շատ էր կարդում, շատ էր մտածում. բայց զպրոցական կրթութիւնը չէր տուել նրան ոչ հասարակական, ոչ էլ քաղաքական հաստատ համոզունքներ, և նա կարող էր, իւր արժանաւորութիւնը համարելով «ազատութիւն երգած» լինելը՝

միաժամանակ գրել „ԿլեՎենիկамъ Россіи“ և „Бородинская Годовщина“...

Բայց նա բոլորովին խուլ չմնաց դէպի աշխարհի լուզմունքները: Ապացուց՝ այն «աղատամտական զառանցանքը», որով լի են նրա առաջին ոտանաւորները: Թուելով «Մահարձան» ոտանաւորի մէջ իւր արժանաւորութիւնները՝ նա ասում է, որ սիրելի կլինի ժողովրդի համար, որովհետեւ «իւր քնարով բարի զգացմունքներ էր արծարծում, իւր զաման դարում փառաբանում էր ազատութիւնը և գթութիւն էր քարոզում դէպի ընկածները»: Նրա բանաստեղծութիւնը այս ողորմածութեան, զթութեան, սիրով քարոզով անազին բարոյական-կրթիչ նշանակութիւն ունեցաւ ուսաների համար: Պուտս բանաստեղծներից ոչ ոք, — ասում է Բելինսկին, — Պուշկինի պէս անվիճելի իրաւունք չէ վաստակել դաստիարակ լինելու պատանիների, հասակաւորների, նոյն-իսկ ծերունիների համար: Նրա բանաստեղծութիւնը երկիր է՝ երկնքով թափանցուած»:

Շատ անգամ վէճ է ծագել, թէ արդեօք Պուշկինը ազգային բանաստեղծ է, Ամենքին զարմացնում էր նրա ընդունակութիւնը ամբողջովին տեղափոխուելու օտարազգի ըրջանները, ըմբռնելու ուրիշ ժողովուրդների զգացմունքները և մոքերը, այն աստիճան, որ անկարելի է նկատել, թէ նրա ստեղծագործութիւնը ուսւ գեղարուեստագէտի ձեռքի արդիւնք է: Այսպիսի բանաստեղծը, մի քանիսի

կարծիքով (de Voguë), պատկանում է մարդկութեանը, ոչ թէ մի որեէ ազգի: Բայց եթէ նա այնպէս գերազանց էր երբէք չտեսած երկիրների բնութիւնն և մարդկանց նկարագրելու մէջ, բնչպէս նրա՝ ռուսական նիւթերի նկարագրութիւնը չպիտի լինէր իրական և բնութեանը հաւատարիմ: Ուղիղ է, ժողովրդի առօրեալ հոգսերը չեն արտաւալուել նրա երկերի մէջ, և նրա մշակումները ժողովրդական հեքիաթների, երգերի՝ միախ ցուց են տալիս, թէ որչափ լաւ էր հասկանում նա գիւղացու հողին. նա ժողովրդական բանաստեղծ չէր. սական, անկասկած, նա մօտեցրեց գրականութիւնը ազգակին կեանքին, տեղ տալով նրա մէջ ռուսաց բնութեանը և ռուս մարդկանց: Նրան միշտ ոգևորել է սէրը դէպի մարբենի անցեալը և խորին հաւատը դէպի Ռուսաստանի ապագան: Պուշկինը Ռուսաց առաջին անգամին բանաստեղծն է: «Նրա այն գրուածքները, որոնք վերցրած են ռուս մթնոլորտից՝ կարող է լիովին հասկանալ միախ նա՝ ում հոգին իւր մէջ կրում է զուտ ռուսական տարրեր, ում համար Ռուսաստանը հալլենիք է» (Գոգոլ').

Հաւատարուելով նկարագրութեան ովմի և եղանակի մէջ եւրոպական գրողների հետ՝ Պուշկինը ինքնուրոյն ազգակին բովանդակութիւնն էր մըտցնում իւր գրուածքների մէջ և ալսպիսով ասում էր Եւրոպակին իւր խօսքը: Կարգալով նրա ստեղծագործութիւնները՝ օստարազիները ոչ միախն

ռուսումնասիրում էին ռուսաց կեանքը, այլ և ատանում էին ձշմարիտ գեղարուեստական վալելչութիւն: Պուչկինի ռուսաւորների թարգմանութիւնները տաղանդի ովմով զարմացնում էին եւրոպացոց: Նա առաջնուն է ռուս բանաստեղծներից, որին կարելի եւր ոպական անունը տալ: Բայց նա չկանգնեց եւրոպական զրական շարժման զլուխ—նրա մէջ արևմտեան ընթիրողը չէր գոնում այն մեծ զաղափարները և կեանքի օրհասական խնդիրները, որոնք լուզում էին այն ժամանակուայ Եւրոպան: Միայն Տուրքեները, և Տուլստոլը, Գոստովեսկին սկսեցին ներգործական դեր խաղալ և արևմտեան մտաւոր ու գեղարուեստական զարգացման մէջ, բայց սրանք արդէն Պուչկինի աշակերտներ են:

Պուչկինը վերջացրեց Կարամզինի սկսած գործը—ռուս զրական լեզուի մշակումը: Արդէն նրա լիկէական գրուածքների լեզուն շատ աւելի բարձր էր ժուկովսկու և Բատիչկովի լեզուից: Նա իւրացրեց մալրենի լեզուի ամբողջ հարստութիւնը: «Ես կկամենալի թողնել ռուսաց լեզուին մի տեսակ աւետարանական լայտնագործութիւն», և նա հասաւ իւր նպատակին: Մինչեւ օրս նրա ռուսաւոր և արձակ լեզուն չունի իւր նմանը ռուսաց գրակարգածութեան մէջ մաքրութեան, ովմի և ճաշակի կողմից:

Պուչկինի հետ ասպարէզ դուրս եկան բազմաթիւ բանաստեղծներ, բայց նրա տաղանդի փալը մթնեցրեց ամենքին. նրանք կազմեցին նրա դպրո-

յը, որ նրա անձնաւորութեան մէջ գտաւ նաև իւր պաշտպանը: Նա սկիզբ զրեց ոռուս քննադատութեան և առաջինը գուշակեց այնպիսի գրողների ապագան՝ ինչպէս են Գոգոլ'ը, Կոլ'ցովը և Բելինսկին:

Մի քանի խօսք ևս Պուշկինի վերաբերմունքի մասին գէպի հայերը: Հայերի հետ նա առիթ ու նեցաւ ծանօթանալու Կիշինեւում և Անդրկովկասում: Մի տեւ, «Գալուբ» քերթուածի մէջ, հայրը անիմելով որդուն՝ բացազանչում է. «գու ստրուկ ես, երկշնտես, դու հայ եսու: Եթէ իշենք որ նա ամենալն աշալը լութեամբ և հետաքրքրութեամբ վերաբերում է հայերին իւր «Երզումի ճանապարհորդութեան» մէջ՝ մենք գուցէ տրամադիր լինինք բացատրելու ալւ դարձուածքը այնպէս, որ հեղինակը կրկնել է միայն մահմետական աշխարհի մէջ դորձածական անէծքի բանաձեւ: Պուշկինը ունի չաւարտած ոտանաւորի երկու հասուածներ, որոնց նիւթը վերցրած է հայոց անցեալից: Առաջինի մէջ հայոց Զենպեւէ (?) թագաւորը, հալածելով թշնամիներին, որոնք աւերել են նրա գիւղերն ու զաշտերը՝ խնջուք է սարքում իւր պալատում արքաների, արքալաղունների, իշխանների և կարիճների համար: Իսկ երեսը մէջ դուրս է բերուած նրա աղջիկը, որ պեկորդի է՝ որպէս մալիսի շուշան, և կախառ՝ որպէս զեցիկ է՝ որպէս մալիսի շուշան, և կախառ՝ որպէս կովկասեան լեռների եղնիկ: Ճերոնի հայրը պէտք է վճռէ՝ ուկ է լինելու իւր փեան և զաշնակիցը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՏՐԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ

1879 թ.	1 Թաւամազ մեղու, (սպառ.)	{ թարգման. օր. ն.	— 40
1980 թ.	2 Կարմիր լազարը,	{ 8. Արդիսանենի	— 30
	3 Մանկական երգեր, Գաման-Քալիպային	— 15	
	4 Թովման եղբօր տնակը, (թարգմ. օր. ն. Տ.-Մ.)	— 45	
	5 Մորելս և նրա չնչելու հնար, (սպառ.) ն. Տ. Բ	— 10	
	6 Ներ և խնամ բնակառանելիք մասին, Հ. Ա.	— 10	
1881 թ.	7 Մոլիսին Խորենացոյ Աստուծիւն Հայոց (սպ.)	— 80	
	8 Փութիկ ձեռնարկ գործնական անհանութեան	— 50	
	9 Գաման-Քամիսայի բանասեղծ. (սպառ.)	— 50	
	10 Թօքինզունի պատմութիւն, թարգմ. Գ. Ք. Ա.	— 60	
1882 թ.	11 Անտառուորք, աշխ. Ա. Պատիկան. (սպառուած)	— 75	
	12 Գառնուկ և Լուսատանիկ, Օմբդախ, թարգմ. ն.	— 25	
	13 Այամթնօվա, աղջային երգիչ.	— 5	
	14 Ենթեան պատմութիւնը.	— 10	
	15 Ողաթանզի զարիֆուայ, պատմութիւն.	— 1	
1883 թ.	16 Գեղական խայիֆուայ, Ա. Աղարատանի.	— 50	
1885 թ.	17 Վանայ ասզ, Ենքնենցի, Ա. Հասոր.	— 75	
	18 Փնջիկ, գեց Սցէքսանուք Արարատեան	— 20	
	19 Նամես, վկայ Ենքնանուքէի (սպառ.)	— 1	
	20 Ստեփանոսի Տարօն Խոզիկան Պատմ. տիեզեր.	— 2	
1886 թ.	21 Թիֆիսեցոյ մատուր կեռնքը, Գ. Տ. Աղեքու.	— 1 50	
1887 թ.	22 Կևոնդ պատմագիր.	— 2	
1888 թ.	23 Սըրազան պատմութիւն (սպառ.) չ Ա. Ք. Ասա	— 30	
	24 Գամազիք կրօնի (պատ. չշ. համ.) չ Հակեանի.	— 75	
1889 թ.	25 Սոլլասէս, թարգմ. օր. Թ. Սոլլափոյ (սպառ.)	— 10	
1890 թ.	26 Պատմութիւն Հայոց, Աղամանեանի (սպառ.)	— 1 50	
	27 Ռեզենցոյ գործնական շերամազա՞ն. Կ. Բ. Շ.	— 40	
1891 թ.	28 Ժամանակագրութիւն Հայոց, Յ. Դարդելի.	— 1 25	
	29 Վարդ-Անէսին, Սպիրի, թարգմ. ն. Յ.	— 10	
	30 Նալ և Գամայեանթի, Յ. Եղիքափ.	— 20	
	31 Ասուած գիւղէ արդարուու և մեղաւորը, (սպառ.)	— 7	
	32 Հաւատարիմ Սալիքարին, Վաղարշին.	— 10	
	33 Լինչարդ և Գերասոմուշ, Պեսուարցցին.	— 25	
	34 Ֆաւելուած և գեր պատմութ. Ասոլիսն.	— 20	
	35 Նաւի փոքրաւորը, Մ. Անգենչու, թարգմ. Յ. Ա.	— 15	
	36 Ուսենց Յովիչի, Յ. Սպիրի, թարգմ. Յ. Յ.	— 15	
	37 Մեծազատու մուրացկաներ Յ. Պ. (սպառ.)	— 40	
	38 Աղդային չոչեր, Յ. Պարսեմանի (սպառ.).	— 1	

39	Բը-ա-բա, Սժէշիօհ	- 15
40	Շնկի, Կուլիկովյի, թարգմ. օր. Ա. Ա. (սպառ.)	- 5
41	Ենդրին, երեք զորյցներ.	- 10
42	Տարասիկցի Տարտար., Դուշի, թ. բժ. թ. 9.	- 40
43	Օրէանի կոյր, թարգմ. Յ. Խ. (սպառուած)	- 25
1892 թ.	44 Յոր, Ալբարտեանի կեանքը, [թարգմ. Պ. Պ.]	- 75
45	Գաղափարական քահանայ, (սպառուած)	- 10
46	Շնունի ի յոյր, ժարգմ. օր. Մ. Տ.-Յ. (սպառ.)	- 1
47	Հոսկոսի համատարը, Պարոնեանի (սպառ.)	- 40
48	Քիմո, Բուկի, թարգմ. Ա. Մէքի-Ալլահի.	- 15
49	Ենդրին, երեք վէտիկ, թարգմ. Ա. Աազար.	- 50
50	Սասմայ ծուեր, Կարեգին սարկաւագի	- 25
51	Զաւալիքի բուժնենք, և. Լալայեանցի	- 1
52	Դաստիարակութիւն, Սպէնս, թարգմ. Մ. Ղ.	- 20
53	Մըսան, Նմիտուի, թարգմ. Ա. Ֆալանթար	- 20
54	Ման-Միրան, Աչյանի.	- 40
55	Տարաս-Բուլբա, Ն. Քոզոլի, թարգմ. Ա. Ա.	- 50
56	Փշրանքներ, Գ. արք. Յովսէֆեանի	- 25
57	Երկու քոյր, Ղ. Աղայեանի	- 60
58	Դըախտի նոտանիք գ. տպ. Խըմ. Հայր. (սպառ.)	- 50
59	Սիրաք և Սամանէլ, գ. տպ. "	- 20
60	Փորձանքների բժշկարան, Բուքերի, թարգմ. Ո. Ղ.	- 50
61	Մալքիթ, Ենդրակի, թարգմ. Ա. Մալխանցից.	- 20
1893 թ.	62 Պաստեր, Ա. Բալաղեանի և Ա. Ֆալանթարի	- 5
63	Խոլերա, բժ. Վահ. Արծունու.	- 40
64	Խարազի տղայ, Ա. Քամալեանի	- 1
65	Հանքամատչելի բնախօսութ. Վ. Ա. Լունկիվիչի	- 80
66	Փարաոնի աղջիկ, Երէտի, թարգմ. Գ. Ե.	- 60
67	Խուռ Խոր, Յ. Ապարահնի.	- 45
68	Էլգուջա, կալպէկի, թարգմ. Տ. Փէրումեանի	- 5
69	Զըրբորդ մոգը, Վան-Դէյկի	- 50
70	Դըախտի ընտանիք Խըմ. Հայրիկի, գ. տպ.	- 50
71	Սիրաք և Սամանէլ, Վ. Աղայանի.	- 15
72	Զըրոցներ հողի մասին, Ա. Բալաղեանի	- 1
73	Ասոզաբաշնութիւն, Խլամմար., թարգմ. Տ. Յ.	- 20
1894 թ.	74 Մանուկների հոգաւարութիւն, (սպառուած)	- 15
75	Մուկուչի հաւիկը, Պ. Խուղլանօվի, թ. Գ. Ա.	- 10
76	Երկու հեքեաթ, Կաքմէն Սիէվայի, թ. Ս. Մ.	- 20
77	Կովկասի գերեն, թարգմ. Պ. Պ. (սպառուած)	- 5
78	Անձունի բաղիկը, թ. Պ. Ա. (սպառուած)	- 40
79	Աչպէներ, Երիկանգալէի	- 40
80	Դարվինիզմ, Ա. Բալաղեանի (սպառուած).	- 50
81	Պետրոս Դուրեան, Արշակ Զօպանեանի.	-

82	Նիլօնի կալանաւորը, Մ. Հարտմանի, թ. Կ. Պ.	- 60
83	Համիչ, Նէկսպիրի, թ. անդլ. Յ. Խան-Մ ասեն.	- 75
84	Քննական պատմ. Հայոց, Ա. Դարագաշ. մասն Ա.	- 1
85	Նոյն, մասն Բ.	- 1
1895 թ.	86 Ն. Ա. մասն Պ.	- 1
87	Նոյն Հան Պ.	- 1
88	Պատմաւուս Հայոց, Ա. Պալասանեանի, թ. տպ.	- 1 50
89	Ակնայ Հուս Հան, Յ. Ճանիկեանի	- 2
90	Ուրախուեցից մանուկը, Արդարի զոյցնեւեց	- 10
91	Կոշկակարը երաժիշտ, Տեսաչելի	- 5
92	Խնձորենիների երկուում, Արդարի զոյցնեւեց	- 10
93	Երկու եղբայր, տիկ. Մանուկների, թարգմ. Պ. Պ.	- 60
94	Մեծապ. Մարտիկաններ, Պարոնեանի, գ. տպ..	- 40
95	Նախագիտենիք բուռաբանութեան, Ա. Քիշմէշ.	- 80
96	Հազարից մէկը, Ա. Մամիկոնեանի	- 60
97	Խնչպէի կուզէք, Ենդրակի, թ. Յ. Խան-Մասեն	- 50
98	Դպրոցական առողջապահութ. բժ. Վ. Ա. Արծր.	- 50
99	Կեզեքիչ, վէպ, Վ. Ա. Նեմիրովիչ Դանչնկիսի	- 10
100	Գուող արմաւենին, Վ. Գարշնիսի, թ. Հ. Առաք.	- 5
101	Գուող և զգէն,	- 5
102	Ճանապարհուրդ դորալ,	- 3
103	Մանկական լոտո, պատկերներով.	- 1 20
1896 թ.	104 Գետնափողի երեխանները, թարգ. Երդանակադէ.	- 15
105	Վէժէ, Վի զը-Մասոսանի, թարգ. Լ. Մ.-Ա.	- 5
106	Ակնայ մարդասպան, թարգմ. Տ. Յովհաննիս.	- 15
107	Մուֆուու, Ուրդարի, թարգմ. Յ. Օշանեանի.	- 10
108	Աներեսոյ Հոսպագործ, Պ. Խարզնինի, գ. Լ. Մ. Ա.	- 7
109	Խասասուակ, Մարգի. օր. Յ. Դուլիճանեանի	- 7
110	Ներունի Մարգն, Ծարգմ. Մադնիեանի	- 10
111	Ռոմու և Ջուլիէտ, Ենդրա, թարգմ. Յ. Խան-Մաս.	- 60
112	Ազգային Զաներ, Յ. Պարոնեանի. գ. տպ.	- 1
113	Զըրյոցներ Ն. Խուբակինի, թարգմ. Մ. Տ. Անդը.	- 15
114	Բնիքերասէր Վահանը, տիկ. Ա. Յակոբչանեանի	- 10
115	Անվալի գերձակը	- 40
116	Մոխաստաշնութիւն	- 40
117	Քնած զեղեցկունի	- 40
118	Կարմիր զլիսարի.	- 40
119	Գուլիլիքը թզուկների աշխարհում	- 40
120	Գուլիլիքը հակաների աշխարհում	- 40
121	Նախասասակի և Ողնու գըպալ	- 40
122	Լուսերեսիկ	- 40
123	Ջշմարտութիւնը միշտ յաղթում է	- 40
124	Օբերօնի հրաշտիկ եղիսը	- 40

125	Գաւիթ. Կոսպակեր. Փելդ,	Զարլու Դեկտնակ, թ. Պ. Պ. Պ.	1	—
126	Գասընկերներ, Աննենակայա, թ. Կ. Դեմազար.	—	50	
127	Խժառողներ, պրօֆ. Մ. Քօղջ. թ. Լ. Մ.-Ադամ.	—	50	
128	Ծատիք պատմուածք, Ալ' Փ. Խոդէի, թ. Վ. Փափ.	—	40	
129	Հաօ կինը, Ա. Աշաբոնեանի.	—	40	
130	Կեանքի տեսարաններ, Քասիմի.	—	50	
131	Խոկի շնողներ, Ցչոկէ, թ. Խ. Մարտիրոսեանի.	—	50	
132	Գուլիլէրի Ճանապարհորդ, թ. Վ. Աղայեան.	—	50	
133	Թաւոնների աշնաւային տեղափոխութիւնը	—	5	
134	Վենետիկի վաճառականը, Շէկու, թ. Յ. Խ.-Մաս.	—	40	
135	Երկրաշարժ և հրաբխ, Իհաներ, Աննելիլչէ.	—	15	
136	Վէպիկներ և զօնցյաներ, Գի գլ Սօստու, թ. Հ. Առ.	—	1	
137	Բուդյան, կազմ. Խ.	—	20	
138	Երկրի և Երկնքի մասին, Վ. Լունկելիլչէ.	—	10	
139	Կոնֆուցիոս, կազմ. Փ. Բագր.	—	20	
1898 թ.	140 Արցոնիմական օդեգործութիւն, Յ. Պետրոսեանի	—	40	
	141 Գիւզաանտես, մեքեն. և գործ. Լ. Խան-Աղեանի.	—	50	
	142 Կենդանիների աշխարհում, Լունկելիլչէ.	—	30	
	143 Արքայ իր, Շէկու, թ. անգ. Յ. Խան-Աստիշեանի.	—	50	
	144 Յու երթաս, Սէնկիլիչի, թ. Իհ. Սա. Լիսիցեանց	—	50	
	145 Ինչ է հէքիաթը, Աստ-Մուսիմիկայի, թ. Վ. Աղ.	—	10	
	146 Մարդ. եմ, Եւերսի, թ. գերմ. Ո. Մայմանեանց.	—	1	
	147 Ողը և կեանքը, թ. Վ. Շէք-Յակովլիեանց.	—	10	
	148 Խորամանի աղուէսը, Սիլվիցի, թ. Պ. Պառշեանց.	—	10	
	149 Ազգիների լորդը, Վալտեր Կոտոր, թ. Յ. Ջ. Միզ. 1	—	—	
	150 Վանա, ապ, Բ. Հատոր (մամուլի տակ)	—	—	
	151 Հանրիէտ, Ֆ. Կուպէի, թ. Քրանս. Լ. Խ.	—	35	
	152 Պասկալ, թ. Գ. Բազը	—	20	
1899 թ.	153 Զեսիկայի աւաջն աշօթքը, թ. Պ. Պառշեանի	—	20	
	154 Երիտասարդ Անդիացի, Հառուֆի. թ. Ե. Տ.-Ն.	—	5	
	155 Հրէայ Արհերը, Հառուֆի. թարգմ. Ե. Տ. Ն.	—	3	
	156 Անքսոսի պատու. և Մ. Խորենացի, Սա. Մալի.	—	40	
	157 Գալիէյ, կազմ. Հ. Առաքելեան.	—	25	
	158 Բար-Սէրս, (մամուլի տակ)	—	—	
	159 Մանչուկին ու Կուտիկը, Ժարգմ. Պ. Պառշեանի.	—	10	
	160 Խնամատարութիւն առողջ երեխ. Բժ. Վ. Արծը.	—	25	
	161 Մանկութիւն և Պատմնեկ. Տօլսոսյի (մամ. տակ).	—	—	
	162 Պուշկին, Ա. Լիսիցեանցը.	—	40	
	163 Պլադստոն, Լիօն	—	80	

Գիմն — Тифлисское Общество Издания Армянскихъ книгъ, Կամъ Tiflis, (Russie), Société de la publication des livres arméniens.



42
48

Թիֆլիսի ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՈ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1899 ԹՈՒԻՆ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- | | | |
|-----|--|------|
| 150 | ՎԱՆԱՅ ԱՅԶ, Բ. Հատ. (մամ. տակ). | — |
| 153 | ԶԵՍՍԻԿԱՅԻ Ա.Ի.Ա.ԶԻՒՆ ԱԳՅԹՔԸ, թարզմ. | |
| | Պերճ Պոռշեանի. | — 20 |
| 154 | ԵՐԵՑԱՍԱՐԴ ԱՆԳԼԻԱՅԻՆ, Հառչի. | |
| | թարզմ. Շ. Տ. — Ն | — 5 |
| 155 | ՀՐԵԱՅ ԱԲՆԵՔԸ, Հառչի. թարզմ. | |
| | Շ. Տ. — Ն. | — 3 |
| 156 | ՍԵԲԷՈՄԻ ՊԱՏՄՈՒԹ. ԵՒ Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, | |
| | Ստ. Մալխասեանցի | — 40 |
| 157 | ԳԱԼԻԿԵՅ, կազմեց Հ. Առաքելեան | — 25 |
| 158 | ՔԱՐ-ՄԻՐՏ, Հառչի (մամուլի տակ) | — |
| 159 | ՄԱՆՉՈՒԿԻՆ ու ԿՈՒՏՏԻԿ, թ. Պ. Պոռշ. | — 10 |
| 160 | ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆ առողջ երեխա- | |
| | ների. Բժ. Վ. Արծրունու. — 25 | |
| 161 | ՄԱՆԿՈՒԹԻՒՆ և ՊՈՏՈՆԵԿ. (մամ. տակ) — | |
| 162 | ՊՈՒՇԿԻՆ, Ս. Լրաբիւնցի. | — 40 |
| 163 | ԳԼՈՒԽՈՆ, Լէօն | — 80 |
| 164 | ՊՈՒՇԿԻՆի ՔՆԱՐ | — 50 |

Դիմու—Тифлисъ, Тифлисское Общество Издания армянскихъ книгъ, Կամ Տիֆլիս (Russie), Société de la publication des livres arméniens.

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

4850

